

24611

87

ՏՈՄՈՎԻ

ԱՐՅԱՆԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԶԵԿՈՒՑՈՒՄ XV ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1927.

31. 88

ԱՆ - 83

15 JAN 2011

ETOS, BULGARIA

331.88
m - 83

ՏՈՄՈՎԻ

ԱՐՅԱՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ —
— ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԶԵԿՈՒՑՎԱԾ XV ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ

73560



23 AUG 2013

24611

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ընկալու գեկուցումը)

Ընթացիկ տարում արհմիուրյուններն զգալիորեն աճել են. Հակառակ ո պազգիցիայի պնդումների՝ միուրյունների ինդուստրիալ գրուպպան ունի ավելի մեծ տեսակարար կերպ. յեվ աճում է ավելի արագ, քան ծառայողների գրուպպան:

Ընդարձակվեց յեվ ստորին միուրենական ուղաբենների ցանցը, վորի կազմում աշխատանք է կատարում յերկու միլիոնանոց պրոֆակտիվը. Ամրացել են միուրյունների ֆինանսները. Առաճնապես մեծ են հաջողուրունները անգրագիտուրյան վերացման բնագավառում:

Հարկավոր է ցուցաբերել ավելի մեծ ուժադրույթուն յեվ զգայնություն դեպի բանվորների կենսական պահանջները.

Կյանքի ապացուցել է արտադրական խորհրդակցությունների հակայական դերը. Այդ խորհրդակցությունները հազարափոր բանվորների հասցրին հրամանատարական դիրքերի. Հարկավոր է առավելագույն չափերով ոգտագործել բանվորական մասսաների տնտեսական նախաձեռնությունը:



№ 483

Գրառեալգիր № 4 (ր)

Տիրամ 2000

Գետհրատի տուածին տաղարան Վաղարշապատում

Առաջատարվածի իրական բարձրացման անհրաժեշտ
նախադրյալ է հանդիսանում գների իջեցման պայքարը:

Չնայած արդյունաբերության մեջ զբաղված բանվոր-
ների թվի մեծանալուն՝ գործադրկությունն անում է, —
ա) ագրարային գերբնակչության յեվ բ) սեղոնային գոր-
ծադրկության հետեւանելով:

Դուժագրկությունը, հատկապես յերիտասարդության
մեջ, առաջ է բերում վարու հօսանք խուլիքանության,
վորի դեմ մղած կոփիք, մի շարք դեպքերում, ընդունում
է հիեային ձեվեր: Հարկավոր է ավելի լայն ջափսվ
գրավելյերիտասարդությունը դեպի բանվարական ակաւմբ-
ների ազդեցության ցոշանակը:

Կուսակցություններ ունի մի շարք հաջողություններ
XIV համագումարի լիրեկտիվների իրականացման գոր-
ծում, կան յեվ թերություններ: Պետք է պայքարել այդ
թերությունների դեմ:

Հակերներ, յես ինձ թույլ եմ տալիս, իմ զեկուց-
ման մեջ, թեզիս թեզիսի յետելց հաջորդաբար չտա-
նել, այլ կանգ առնել այդ թեզիսների առավել հիմնա-
կան հարցերի վրա, գտնելով, զոր մի շարք թեզիսներ
հանդիսանում են զարգացումը կամ կը կնությունը այն
բանի, ինչ վոր ասել ենք մենք կուսակցության
վերջին համագումարում: Յես, մասնավորապես, չեմ
կանգ առնի և ձեր առաջ պարզաբանի (развивать)
ներածությունն այն թեզիսների, վորոնք, իմ կարծիքով,
բավական սպասիչ կերպով պարզաբանված են ընկ.
Ուկովի զեկուցման մեջ, Յես անմիջապես կանցնեմ
իմ զեկուցման արդյունքներին վերաբերող մասին:

Այստեղ յես ինձ թույլ եմ տալիս բերել միքանի
բնորոշ թվեր:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ
ՀԱԱՐԱԾ ԽՐՏՎԻԼԱԿԸ

Այս ընթացիկ տարում բանվարների և ծառայու-
ների աճումը տեղի յե ունեցել հետեւյալ ձևով. 1925 թ.
ապրիլի մեկին ձիոնարկություններում և հիմնարկնե-
րում զբաղված բանվարների և ծառայողների թիվը,
չհաշված աշխատավորական կոլեկտիվներում աշխա-
տող միակներին (օճառուք) և այլն, կազմում եր
6,035,300 հոգի. 1926 թվի ապրիլի մեկին այդ թիվը
հասնում է 7,700,000-ի. այսպիսով ձիոնարկություններում և հիմնարկներում զբաղված բանվարների և ծառայողների թիվը մի տարվա ընթացքում աճել է
 $27\frac{1}{2}$ տոկոսով:

Նույն այդ ժամանակամիջոցում արհմիություն-
ների անդամների քանակի աճումն արտահայտվում է
հետեւյալ թվերով. 1925 թվի ապրիլի 1-ին արհմիու-
թյուններն ունեյին 6,950,400 անդամ, իսկ 1926 թվի
ապրիլի մեկին՝ 8,768,200, այսինքն՝ ավելացում 26,2
տոկոսով. Այստեղ արդեն ինձ հարցում են ուղղել թե-
զիսներում հայտարարված թվերի առթիվ. — այդ ինչ-
պես և, զոր ձեռնարկություններում և հիմնարկներում
զբաղվածների թիվը ավելի պակաս է, քան արհմիու-
թյունների անդամների թիվը: Այդ բացատրվում է շատ
հասարակ ձևով. Նախ վոր ձեռնարկություններում և
հիմնարկներում զբաղված բանվարների և ծառայողնե-
րի թվի մեջ չեն մտնում սեղոնային բանվորները,

չեն մտնում հողագործ բանվորների խավիրը, չեն մտնում և գործազուրկները. — բայց չե՞ վոր գործազուրկներն, այսուամենայնիվ, մնում են մեր միությունների անդամ: Մարդկանց մի խմբակ ել կա, վորը թեև անշան ե, բայց հաշվվում ե միության անդամ, թեպետ և վոչ մի ձեռնարկության կամ հիմնարկի մեջ չի աշխատում. դա պրոլետարական ուսանողությունն ե:

Ի՞նչպես ե, վոր խմբերի հաշվին ե կատարվել արհմիությունների անդամների թվի աճումը: Այս հարցը պակաս կարեոր հարցերից չե, վորովհետև համկոմկուսի անցյալ պլենումում ոպպազիցիայի ներկայացուցիչների կողմից հայտարարված այն գեկլարացիայի մեջ, վոր, վորոշման համաձայն, բաժանվելու յե կրնֆերենցիայի անդամներին, — գեկլարացիայի 6-րդ կետում («Բանվորական պետության բյուրոկրատական այլասեռումը») մենք կարդում ենք. «Այժմ մեղ մոտ պետական արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը չի հասնում 2 միլիոնի՝ տրանսպորտի աշխատողների հետ միասին պակաս ե 3 միլիոնից: Խորհրդային, արհեստական, կոռոպերատիվ և այլ ամեն տեսակ ծառայողների թիվը ամենելն ել այդ թվից պակաս չի հաշվվում: Այս մեկ համարությունն իսկ վկայում ե բյուրոկրատիայի քաղաքական ու տնտեսական հսկայական դերի մասին»:

Գործն այնպես ե պատկերացվում, վոր իրը թի աճում ե խորհրդային ծառայողների քանակը, աճում ե բյուրոկրատական ապպարատը, աճում են վոչ պրոլետարական խավերը. իրը թե ծառայողների քանակը բոլորվին ել պակաս չի բանվորների քանակից: Այս- տեղից ստացվում ե ամբողջ յուրահատուկ լրմբոնում,

այստեղից բղիում են մի շաբք սոցիալական և քաղաքական յեղբակացություններ:

Յես ինձ թույլ եմ տալիս հայտարարել թէրը: Միության անդամ բանվորների գրուպպան, 1925 թվի ապրիլի մեկից մինչև 1926 թվի ապրիլի մեկը, մի տարվա ընթացքում, ավելացել ե 1,589,300 մարդով, այսինքն՝ 27^{1/2} տոկոսով ի՞նչ գրուպպա յե այդ. — հոդանատառմիությունը աճել ե 79,9 տոկոսով, թղթագործները՝ 27,4 տոկոսով, հանքափորները՝ 44,6 տոկոսով, փայտագործները պակասել են 8,7 տոկոսով, շաքարագործները՝ 28,3 տոկոսով, կաշեգործներն ավելացել են 14,1 տոկոսով, մետաղագործները՝ 29,1 տոկոսով, տպագրիչները՝ 19,8 տոկոսով, սննդագործները՝ 27,8 տոկոսով, մանածագործները՝ 25,2 տոկոսով, քիմիկոսները՝ 27,3 տոկոսով, կարողները՝ 13 տոկոսով, կառուցողները (կառուցող բանվորների միությունը) աճել են 65 տոկոսով, ջրային տնտեսության բանվորները՝ 12,6 տոկոսով, յերկաթուղայինները՝ 28 տոկոսով, տեղական տրանսպորտը՝ 6,5 տոկոսով, ժողկապի աշխատավորները՝ 15 տոկոսով, վոչ-ինդուստրիալ միությունները՝ խորառետրական ծառայողները՝ 23,1 տոկոսով, գեղաշխիքը՝ 8,8 տոկոսով, բժշկա-սանիտարական աշխատավորները՝ 18 տոկոսով, լուսաշխիքը՝ 16 տոկ., կոմմունալ տնտեսության աշխատավորները՝ 14 տոկ. ժողովների աշխատավորները՝ 37,7 տոկոսով:

Զուտ ինդուստրիալ խումբը մեծացել ե 23,7 տոկոսով, գյուղատնտեսականը՝ 79,9 տոկոսով, արանսպորտի խումբը՝ 22,7 տոկոսով, ծառայողների խումբը՝ 19,4 տոկոսով:

Ի՞նչպես տեսնում ենք, ոպպազիցիայի գեկլարա-

ցիայուժ տրված պատկերը բոլորովին չի հա հապատառ խանում իրականության։ Գլխավոր աձումն ընթացել և սեղոնային բանվորների հաշվին, կառուցողների հաշվին, հողանտառաշխատավորների հաշվին։ Արդյունաբերական խումբը ծառայողների խմբից ավելի մեծ չափով և աճել։

Արդյունաբերական խմբերից վոր միություններն են աճել։ Ամենից առաջ աճում են՝ հանքագործները, մետաղագործները, յերկաթուղայինները, թղթագործները, մանածագործները, սննդագործները, — ահա թե վոր միություններն են աճում այդ խմբում։

Դարձյալ վերցնենք ոպպողիցիայի այն պնդումը, վոր յես այստեղ հրապարակեցի, և վորի մեջ ոպպողիցիան քաղաքական շատ խոշոր յեզրակացություններ ե անում։ Այստեղ ասված ե, վոր մեզ մոտ արդյունաբերական և տրանսպորտի բանվորների թիվը 3 միլիոնից պակաս ե, իսկ ծառայողների խումբը ավելի պակաս չե, քան բանվորների խումբը։

Իրականում ի՞նչ տեսակարար կցիո ունեն առանձին արհմիությունները, արհշարժման առանձին խըմբերը։ Մետաղագործներն ընդգրկում են մեր միություններում կազմակերպված ամբողջ բանվորների 8,9 տոկոսը, մանածագործները՝ 8,8 տոկոսը, հանքագործները՝ 4,4 տոկոսը, սննդագործները՝ 4,8 տոկոսը, կաշեգործները՝ 1,4 տոկոսը, քիմիկոսները՝ 2,6 տոկոսը, կարողները՝ 0,8 տոկոսը, թղթագործները՝ 0,5 տոկոսը, տպագրիչները՝ 1,3 տոկոսը, փայտագործները՝ 1,8 տոկոսը, հողանտառաշխատավորները՝ 10,5 տոկոսը, կառուցողները՝ 6,1 տոկոսը, շաքարագործները՝ 1,2 տոկոսը։ Կառուցողների և հողանտառաշխատավորների հետ

միասին (անվիճելիորեն բանվորական միություններ, վորոնց մասին չի կարելի ասել, թե պրոլետարական միություններ չեն) տվյալ խումբը կազմում ե ընդամենը 53,1 տոկոս։ Տրանսպորտային խմբի մեջ մըտնում են (նույնպես բանվորական խումբ) յերկաթուղայիններ՝ 11,1 տոկոս, ջրային տնտեսության աշխատավորներ՝ 1,8 տոկոս, տեղական տրանսպորտ՝ 2 տոկոս։ Այդ խումբը կազմում ե արհմիություններում կազմակերպված բանվորների և ծառայողների ամբողջ քանակի 14,9 տոկոսը։ Սպասարկու խումբը՝ վոլինդրուստրիալ միությունների խումբը, վորի մեջ, հակառակ մինչև այժմ գոյություն ունեցող տրադիցիայի, յես հաշվում եմ նաև ժողովրդական կապի միությունը, կազմված և հետեւյալ տարրերից։ Խորառնորական ծառայողներ՝ 12,2 տոկոս, լուսաշի՝ 7,8 տոկոս, բժշկաանիտարական աշխատավորներ՝ 5 տոկո, ժողկապ՝ 1,3 տոկոս և գեղաշի՝ 0,9 տոկոս, ընդղամենը՝ 27,2 տոկոս։ Բացի այդ, գոյություն ունեն ևս յերկու միություն, — ժողովնունդ և կոմմունալ տնտեսության աշխատավորների միություն, վոր միասին ընդգրկում են 4,8 տոկոս։ Ինչպես տեսնում ենք, թվերը չեն համապատասխանում անցյալ պլենումում գելլարացիայով հանդիս յեկած ընկերների պնդումներին։ Այժմ տեսնենք, թե նրանք ինչ յեզրակացություն են հանում այդ պնդումից։ Զափաղանցելով ծառայողների խմբի թիվը ու տեսակարար կշիռը, նրանք այնուհետեւ ասում են. «Այստեղից միանգամայն ակներեւ ե դասնում, վոր պետությունը, պետական ապարատն իր կազմով և կյանքի մակարդակով մեծապես բուրժուական և մանրուրժուական ե. նա հեռանում ե պրոլետարիատից ու

գյուղական չքավորությունից, —մի կողմից ընդառաջելով տեղավորված ինտելիգենտին, իսկ մյուս կողմից՝ վարձակալին, առևտրականին, կուլակին և նույն բուժուազիային»:

Յես չեյի կարող չանդրագառնալ այս պնդումին: այդ: Վերլուծենք: Կարսղե հակվել «վարձակալի, առևտրականի և կուլակի» կողմը վոշինդուստրիալ խումբը, մասնավորապես, տիսրահոչակ խորհրդային ծառայողները, վորոնց մոտենում են հիմք ընդունելով 1918 թվի տրադիցիան, յերբ մեր տեղական ապահովատը և խորհրդային հիմնարկներն եյին լցվում և՛ սպաների կանայք, և՛ ապադասակարգայնացած բուրժուազիան, վորից ամեն ինչ խլված եր, և այլն: Ի՞նչ ե ներկայացնում այդ խորհրդային ապահովատն այժմ: Անցել ե 9 տարի. յերիտասարդական մասսան լցվել և խորհրդային ծառայողների կաղմի մեջ. այս մեկ, Յերկրորդ մենք՝ մարքսիստներս, յերբ վորոշում ենք այս կամ այն խավի, այս կամ այն խմբի սոցիալական հակումը, պետք ե վերցնենք վորոնե տնտեսական չափանիշ և վոչ թե միայն նրա խորհրդային հիմնարկում աշխատելու կամ չաշխատելու փաստը: Ի՞նչպիսի չափանիշ կարելի յե վերցնել այս դեպքում: Յես կարծու՞մ եմ, վոր մարքսիստի համար աղղաբնակության այս կամ այն խավի սոցիալական հակումը վորոշելու հիմնական չափանիշներից մեկը հանդիսանում ե նրա տնտեսական դրությունը, մասնավորապես աշխատավարձը: Ի՞նչպիսի աշխատավարձ ունի այս խումբը: Ամենից առաջ վերցնենք խորհրդային ծառայողի տնտեսական դրության նվազեցրած նորման: Վո՞րն ե այդ նորման: Կարելի՞ յե ասել, վոր ութսուն չերվո՞ն ոուբլուց պա-

կառ սոճիկ ստացողն իր կյանքի մակարդակով հակվում ե գեղի կուլակներն ու վարձակալները: Կարծում եմ, վոր 80 ոուբլուց պակաս ստացող խորհրդային ծառայողների մասսան վոչ մի կեցպ չի կարելի կապել վարձակալների, առևտրականների հետ և այլն: Իսկ ի՞նչքան են նրանք մեղ մոտ, խորհրդային ապահովարում: Յես վերցրել եմ միայն խորհրդային աշխատավորների միությունը, վորովհետեւ, պնդում եմ, յիթե վերցնեմ լուսժողկոմատի և բժշկասանիտարական աշխատավորների միությունը, թվերն, անկասկած, ավելի ուսուցիկ կլինին: Արդ, այդ միության մեջ գտնվող քանի խորհրդային ծառայող կա մեզ մոտ, վոր ստանում ե 80 ոուբլուց պակաս և քանի՞սը, վոր ստանում ե 80 ոուբլուց ավել: Խ. Ս. Հ. Բ.-ի քաղաքներում 80 ոուբլուց պակաս ստացող խորհրդային ծառայողները կազմում են խորառածառի ամբողջ միության 73,3 տոկոսը, 80 ոուբլուց ավել ստացողները՝ 26,7 տոկոսը: Գյուղերում մինչև 80 ոուբլի ստացող միության անդամները (խորհրդային ապահովատում աշխատավորները) կազմում են 99,3 տոկոսը, Ահավասիկ այն խումբը, վորի վերաբերյալ, առանց ստուգելու, առանց հաշվելու, առանց մտածելու կառուցել են մի ամբողջ սոցիալ-քաղաքական թերթիա: Ըստ այդ թերթիայի ծառայողներն ու չինովիկները — բյուրոկրատիան, վորոնց թիմը, ըստ սպառողիցիայի, ավելի պակաս չե, քան բանվորներինը, — իրենց կյանքի մակարդակով հակում են դեպի վարձակալը, կուլակն ու փոքրիկ կապիտալիստը: Իսկ իրոք ի՞նչ ե ստացվում: Իրոք ստացվում ե այն, վոր ամբողջ առանձին խմբից (քաղաքներում) 26,7 տոկոսն ե միայն ստանում 80 ոուբլուց

ավելի, իսկ 72,3 տոկոսն ստանում և 80 ռուբլուց պակաս Արևելյան ասած, այդ փողերով հազիվ հազ կարելի յե կուշտ գոյություն քաշ տալ, և յես այստեղ կյանքի վոչ մի այնպիսի մակարդակ չեմ տեսնում, վոր այդ կատեղորիան մոտեցներ կուլակին և այն:

Այդ հարցը վերցնենք մյուս կողմից. խորհրդային ծառայողների միությունից քանի⁹ հոգի են գտնվում արտօնյալ վիճակում՝ աշխատում են Յ. ական ժամ և քանի⁹ հոգի աշխատում են 8. ական ժամ: Պարզվում է, վոր 8-ժամյա բանվորական որ ունեցողներն այդ միության մեջ (վորով մեզ վախիցնում են, ինչպես խըրտվիլակով) կազմում են 43,7 տոկոս: Ոպազողիցիան ունի սխալ, միտումավոր մոտեցում դեպի վաշ-ինդուստրիալ միությունները. սխալ են տրված թվերը, փոխհարաբերությունները—այդ պատճառով ել սխալ են բոլոր մասցած յեղակացությունները:

Ահա այն ամենը, ինչ յես ուզում եյի ասել մեր պրոլետարիատի և արհմիությունների կազմի մասին:

ՍՏՈՐԻՆ ՊՐՈՖԱԿՑԻՎԻ ԱՃՌԻՄԸ

Այժմ տեսնենք ի՞նչ զրության մեջ և գտնվում միութենական կազմակերպությունների ցանցի աճումը, քանի վոր ստորին միութենական կազմակերպությունների ցանցի ընդարձակումը ցույց ե տալիս, թե ինչ չափերի յեն հասել բանվորական լայն մասսաներին միությունների մեջ քաշելը, բանվորների ակտիվության աճումը: Ստորին միութենական կազմակերպություններն ակտիվության և կազմակերպչական աշխատանք սովորելու դպրոց են: Յեկ ահա, մի տարվա

ընթացքում, 1925 թվի հունվարի մեկից մինչև 1926 թվի^{*} հունվարի մեկը, զործարկության քանակը 30 հազարից հասել և 56 հազարի, այլ կերպ սասած՝ ֆարմավկության երեսի և տեղիության քանակն աճել և 26 հազարով. կոմիտեների անդամների թիվը 153 հազարից բարձրացել և մինչև 226 հազարի. կոմիտեների ազատ անդամների քանակը 24 հազարից բարձրացել և մինչև 28 հազարի, ցեխային (համքարային) պատգամավորների թիվը 200 հազարից հասել և մինչև 800 հազարի: Այս թվի մեջ չեն մտնում անդամավճար հավաքողները, թեև իր եյությամբ անդամավճարների հավաքման աշխատանքը հանդիսանում է արհմիութենական աշխատանքի առաջին աստիճանը:

Հանձնաժամկետում 1925 թվին ունեյինք 226 հազար հոգի, այժմ ունենք 642 հազար. ցեխային պատգամավորներ ունեյինք 200 հազար, այժմ ունենք 870 հազար: Իսկ ընդամենք ստորին միութենական աշխատանքի մեջ ե քաշված 1,738,000 մարդ: Այս բանը ցույց ե տալիս, վոր չնայած մի շարք դեփեկտներին, արհմիութենական աշխատանքի մի շարք պակասություններին, աշխատավորության խավը,—մոտ 2 միլիոն մարդկանց—ակտիվ աշխատանքի համար պատրաստելու և գարժեցնելու գործը՝ հասարակական կյանքի ասպարեզ քաշելու այս տարրական աշխատանքը վկայում է, վոր թե կուսակցությունը և թե արհմիություններն այդ բնագավառում մեծ աշխատանք են կատարում:

Ինչքնն են կոմմունիստներն այդ ստորին ակտիվի կազմի մեջ: Մենք տեսնում ենք, վոր մեր առաջադրած

* 1925 թվականն ընդգրկող տվյալներով 60 տոկոս, իսկ 1926 թվ. ընդգրկող տվյալներով 70 տոկոս:

լանդիլը՝ վոր ե—քաշել անկուսակցական բանվորին արհմիութենական ակտիվ աշխատանքի մեջ և զրա միջացով նրան վարժեցնել պետություն կառավարելու գործին, բարձրացնել բանվորական մասսաների կուտառական մակարդակը, զարգացնել նրանց ինքնառգործունեյությունը—արդեն իրազործվում է: 1925 թվին գործարկոմներում կոմմունիստները 36,2 տոկոս եյին, սյժմ մնացել են 29,7 տոկոս, աշխատանքի քաշված անկուսակցականների տոկոսը բարձրացել է: Բարձրացել ե այդ տոկոսը նաև հաճախաժողովներում. դրանց մեջ կոմմունիստներն անցյալ տարի կազմում եյին 24,3 տոկոս, այժմ մնացել է 17,4 տոկոս: Ցեխային պատգամավորների մեջ կոմմունիստները 22,1 տոկոս եյին, մնացել են 14,4 տոկոս: Արհմիութենական աշխատանքներին լծված անկուսակցականների թվի մեծանալը, ինարկե, մեր կուսակցությանը վախճանալու վոչ մի առիթ չի տալիս: Այս ճշգրիտ ուղի յեւ

Անցյալ համագումարում յես զեկուցեցի, թե զյուղական ակտիվ պատրաստելու գործում հողանատառմիության աշխատավորների աշխատանքը համեմատաբար թույլ ե յեղել, թեև նրա միջոցով, և զլսավորապես նրա միջացով ե, վոր և կուսակցությունները և արհմիությունները կարող են ամենալրիվ ձեռլի իրականացնել պրոլետարական ազգեցությունը գյուղում:

Յես կարող եմ ներկայացնել թվական տվյալներ, թե ինչպես ե ընթանում այժմ այտիվի աճումը: Բանվորական կոմիտեներում, այսինքն միության ստորին կազմակերպություններում, վորոնք, ըստ տվյալների, ընդգրկում են 13 նահանգ, կա 15,029 բատ-

րակ և 6,934 հովիվ: Ստորին միութենական կազմակերպություններում բատրակներն ու հովիվները միամին կազմում են ընդամենը 21,963 հոգի: Վոլոստային կոմիտեներում միության վոլոստային կազմակերպություններում կա 7,417 բատրակ, 1,374 հովիվ—ընդամենը 8,791 մարդ: Գյուղակոմիտերում կա 3,245 բատրակ և հովիվ, վոլոստային գործկոմներում՝ 143, փոխոգնության կոմիտեներում՝ 541: Ընդամենը միութենական ստորին կազմակերպություններում, գյուղխորհություններում, շրջգործկոմներում և փոխոգնության կոմիտեներում—13 նահանգների մեջ—բատրակների թիվը հասնում է 34,683-ի: Ինարկե, այդ թիվը քիչ ե այդպիսի մեծ միության համար, ինարկե, այդ քիչ ե այն խորի իրազործման համար, վորի լուծումը կանգնած ե կուսակցության առաջ գյուղում, բայց նոր բարձրացող խավերի տասնյակ հազար մարդկանց այդ թիվը վկայում ե, վոր այդ ֆրոնտում նույնպես, առանց աղմուկի, առանց խուճապի, առանց ճիշերի առաջ ե քաշվում տասնյակ հազարավոր կառուցողների նոր կազմ:

Այդ յերեսույթի կողքով անցնել չի կարելի:

Մեր ստորին ապարատում նկատելի չե՞ արդյոք լճացում: Յես կհայտարարեմ միայն այն թվերը, վոր, իմ կարծիքով, այստեղի ներկաներից և վոչվոք չի կարող ժխտել: Ստորին պրոֆկազմակերպությունների վերընտրություններից հետո, Համ. Կ. (բ) Կ.-ի ԽI V համագումարից հետո՝ լայն բանվորական դիմոկրատիայի հիմունքներով նորոգվեց միութենական ստորին ակտիվը: Գործարկոմների կազմը լրացվեց և նորոգվեց նոր աշխատավորներով՝ ավելի քան 50 տոկոսով, իսկ առանձին տեղերում՝ մինչև իսկ 70—80 տոկոսով:

Բանվորների ընդհանուր ակտիվությունը վերջին
ժամանակներս անվիճելիորեն և անկասկած բարձրա-
ցել է: Յես չեմ հոգնեցնի ձեզ առանձին շրջանների
վերաբերյալ թվական տվյալներ բերելով: Ճիշտ ե,
թվերը դեռ շատ հեռու յեն լրիվ լինելուց, բայց շատ
բնորոշ ե այն յերկույթը, վոր ընդհանուր ժողովնե-
րում, կոնֆերանսներում և պատգամավորական ժո-
ղովներում զանազան հարցերի առթիվ արտահայտվող-
ների թիվը ժողովներին, խորհրդակցություններին և
կո՞յ փերանսներին մասնակցողների թիվը աճել է մո-
տավորապես 25 տոկոսով:


Ամբացել և առողջացել են միության ֆինանսները,
Յես կհրապարակեմ միքանի թիվ: 1925 թվի առաջին
կիսամյակում, իրենց հավաքած անդամավճարներից,
տեղական միություններն իրենց կենտկոմին հատկա-
ցումներ են արել 4,492,329 ռուբլի, 1926 թվին՝ 6,327,754
ռուբլի, ասել ե՝ աճում 40,8 տոկոսով: Յեկամտային
բարանների աճումն արտահայտվում է, 58,6 տոկոսի
հավելումով: 23 կենտրոնական կոմիտեյի ընթացիկ
հաշվով, բանկերում ունեցած իրենց խնայողություն-
ները մի տարվա ընթացքում 105,5 տոկոսով ավելացրել
են: Գումարներն են.—1925 թվի հունիսի 1-ին $2\frac{1}{2}$
միլիոն, 1926 թվի մինչույն ամսաթվին $5\frac{1}{4}$ միլիոն
ռուբլի:

Բարձրանում ե ֆինանսական հաշվետվության վո-
րակը, լավանում ե ֆինանսների գործը վերից վար,
դրան համապատասխան, համեմատական չափով պա-
կասում ե և վատնումների քանակը: Բայց կուսա-
կցությունը պետք է իրաղեկ լինի մի վերին աստիճա-
նի ծանր յերկույթի: Այդ այն ե, վոր զեղծարարների

թվի մեջ զգալի տեղ է բոհում կուսակցության ան-
դամների և կոմյերի տուժեականների տոկոսը:

Վատնությունը քանակը պակասում է, բայց կու-
սակցությունը պիտի շարունակի իր վճռական կոփ-
վը վատնողների դեմ: Անհրաժեշտ ե խիստ միջոցներ
կիրառել այդ այլանդակ յերկույթի դեմ, քանի վոր
անգամ կուսակցության անդամները, բանվոր գասա-
կարգի լավագույն մարդիկ խայտառակել են կուսա-
կցությունն այդպիսի անթույլատրելի զանցառություն-
ներով: Այդ տեսակետից, կուսակցության հանցաղարտ
անդամների վերաբերյալ պետք ելինել միանգամայն
անողոք: Հատկապես վտանգավոր ե և զնասակար, յերբ
այդ յերկույթը նկատվում ե՝ կոմյերի տականների մեջ,
քանի վոր նրանք մեզ փոխարինողներն են: Մենք վոչ
մի կերպ թույլ պիտի չտանք, վոր այդ ախտն արմա-
տանա մեր յերիտասարդության մեջ: Կուսակցությու-
նը պիտի հատուկ ուշադրություն դարձնի այդ յերե-
վույթի վրա:

Բանվորուհիների տոկոսը բոլոր արհմկաղմակեր-
պություններում միքիչ բարձրացել է, բայց յես կար-
ծում եմ, վոր բարձրացել է անբավար չափով: ա-
վելին, վատն այն ե, վոր արդյունաբերության առան-
ձին՝ խոշոր կենտրոններում, վորտեղ հենց ավելի յե-
պետք առաջ քաշել բանվորուհիներին, բանվորուհինե-
րի $\frac{1}{2}$ -ը պակասել ե: Ահա թե ինչու, յես գտնում եմ,
վոր անհրաժեշտ ե արհմիությունների առաջ դնել ավե-
լի մեծ տոկոսով բանվորուհիներ առաջ քաշելու խնդի-
րը, վորոնց թվում պետք է առաջ քաշել նաև կոմյ-
երիտասարդությունը պահպանի անդամների տոկոսն անհան
չափով և իջև բայց և այնպես վեցել:



ԿՈՒԼ.Տ.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Կուլտուրական աշխատանքի վերաբերյալ յես
ձեր ուշադրությունն առանձնապես չեմ ծանրաբեննի
թվերով։ Մենք տեսնում ենք, այսպես կոչված «կար-
միր անկյուններն» աճում են բուռն թափով և դրա-
նից ավելի պակաս չափով են աճում ակմբային աշխա-
տանքները։ Ակումբների աշխատանքի աճումը, ակումբ-
ների նվաճումները կայանում են նրանում, վոր
հասակավոր բանվորները, վորոնք առաջ ակումբներ
չեին հաճախում, այս հաշվետու ժամանակաշրջանում
սկսել են ավելի հաճախել, սկսել են ավելի մեծ չա-
փով լծվել այդ աշխատանքին։ Ակմբային աշխատան-
քի հետագա զարգացումը դեմ ե առնում ակմբա-
յին շենքերի պակասությանը և յեղած շենքերի՝ ակըմ-
բային աշխատանքի հետ վոչ մի կապ չունեցող ամեն
տեսակի նիստերով ծանրաբեռնված լինելուն, բայց
դրա գեմ վոչինչ անել չի կարելի։ Յեթե գավառական
քաղաքում կա միայն 150—200 մարդ տանող մի դահ-
լիճ, վորտեղ կայանում են թե կուսակցական կոնֆե-
րանսները և թե ամեն տեսակի ժողովներ, ապա պարզ-
ե, վոր ակումբը շաբաթվա մեջ վեց որ պիտի զբաղ-
ված լինի զանազան ժողովներով, խորհրդակցություն-
ներով և այլն, և միայն մի որ կարող ե աշխատել
նուկապես իբրև ակումբ։ Այս և ակմբային աշխա-
տանքի խոչընդուռը, և մեր անելիքը պիտի լինի բնա-
կանային շինարարության ծրագրի մեջ մտցնել և
ակմբային շինարարությունը։ Թվում ե, թե այստեղ
լիչ խոսք կարող ե լինել ակումբների մասին։ Բայց
բանվորները պահանջում են վոչ միայն բնակարան,

այլ և ակումբներ։ Ինձ մոտ հայտարարություններ կան,
վորտեղ ասված ե, թե լանվորը չզիտի իր հանգստի
ժամանակ ուր գնա, թե խելացի կերպով ժամանակն
անցկացնելու հնարավորությունից զուրկ լինելը քշում
և նրան գարեջրատուն կամ փողոց։

Կարմիր անկյունների աճման խեկալան թիվը հետև-
յալն ե. 1925 թվի գեկտեմբերի 1-ից մինչև 1926 թվի
հունիսը կարմիր անկյունների քանակը 16 հազարից
բարձրացավ մինչև 19 հազարի։ Աճում ե ամբողջ կուր-
տուր-լուսավորչական աշխատանքը, բայց այս անցած
ժամանակամիջոցում հատկապես մեծ նվաճումներ են
արված անգրագիտության վերացման բնագավառում։
Այսպես, որինակ, 1923 թվին Կարմիր Պրոֆենտերնի ՊԼ
հստաշրջանում, յես ոռուսական արհմիությունների
գրության մասին տված իմ գեկուցման մեջ ասել հա-
հետեւյալը. «Յես արդեն ձեզ ասացի, վոր մենք ժա-
ռանգություն ենք ստացել անկուլտուր, անգրագետ մի
յերկիր։ Ռուսաստանը գերազանցորեն անգրագետների
յերկիր եր, և 1921 թվի սկզբում մենք ունեյինք այն-
պիսի միություններ, ինչպես, որինակ, ժողովունդը,
վորի 65 տոկոսն անգրագետ եր։ կոմմունալների
միությունը, վորի 50 տոկոսն եր անգրագետ, փայտա-
գործների՝ 50 տոկոսը, գյուղատնտեսական բանվորների՝
80 տոկոսը, իսկ հանգագործների մեջ, վորոնք մեջ
փառք ու պարծանքն եյին, մենք հաշվում եյինք մինչեւ
50 տոկոս անգրագետներ։»

Ահա թե ինչպես եր գրությունը 1921 թվին։ Ի՞նչ
ենք արել մենք այս ժամանակամիջոցում։ 1926 թվի
ապրիլի 1-ին մետաղագործների մեջ մնում եյին 2
տոկոս անգրագետներ, քիմիկոսների մեջ՝ 6 տոկոս,

գյուղատնտեսական բանվորների մեջ (ամենատաճարավագելու միությունն եր) 1926 թվի հունվարի 1-ին մնացել եյին 18,4՝ տոկոս անգրագետներ, կառուցողների մեջ՝ միայն 5 տոկոս, փայտագործների մեջ՝ 6,5 տոկոս, կաշեգործների մեջ՝ 6,3 տոկոս, թղթագործների մեջ՝ 3,9 տոկոս, տրանսպորտնիկների մեջ՝ 10 տոկոս, կոմմունալնիկների մեջ՝ 4 տոկոս, ջրային տնտեսության աշխատավորների մեջ՝ 4 տոկոս: (Զայն «Իսկ հանքագործներին մեջ»): Հանքագործները թվեր չեն բերում, բայց այսպես են ասում: — «Անգրագիտության վերացումը կարելի յել վերջացած հաշվել»: Միայն սեզոնային բանվորների մեջ ե, վոր անգրագիտության վերացումը վոչնչի յել հանդում՝ շնորհիվ նրանց աշխատանքի պայմանների: Այստեղ պահանջվում ե կրկնակի դասավանդում, վորովհետև սեզոնային բանվորն աշխատանքի հեռանալով՝ դադարում ե կարգալուց, պարապելուց, վորի հետևանքով՝ նա դառնում ե նորից անգրագետ»*:

Յեվլ յեւ գտնում եմ, վոր այս բոլոր հաջողություններով թե կուսակցությունը, թե արհմիությունները միասին կարող են պարծենալ ամենքի առաջ և ամեն տեղ:

**ԱՎԵԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԶԳԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԵՆՑԱԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

Յես չեյի ցանկանա, ընկերներ, առանձնապես շատ ժամանակ կորցնել մեր պակասությունները մատնա-

*) Թվերը հարաբերական են և տատանվում են գյուղից յեկող բանվորական ուժի հոսանքի ազդեցության նկատու-

ցույց անելու վրա: Յես կընդգծեմ նրանցից ամենազլավորը: Արհմիութենական շարժման միքանի աշխատավորներից և մի շարք կուսակցական ընկերներից յես լսել եմ հետեւյալ նկատղությունները: — յես շատ խիստ չեմ արտահայտվել արդյոք թեզիսներում, մատնանշելով, վոր արհմիությունները տակավին բավարար չափով չեն սպասարկում բանվորներին և չեն պաշտպանում նրանց տնտեսական դրությունը: Յես պնդում եմ, վոր այստեղ վոչ մի չափազանցություն չկա: XIV համագումարից առաջ մենք ունեյինք հետեւյալ պատկերը: — այսպես կոչված յեռանկյունին, վորտեղ միահամուռ և համերաշխ կերպով բանվորությանը դեմ հանդիման եյին դուրս գալիս վերատեսուչը, գործարկումի նախագահն ու կոմքջիջի քարտուղարը: Այժմ արդեն մենք տեսնում ենք, վոր այդ տնտեսական թեքումը՝ բոլոր դեպքերում և ամեն տեղ պաշտպանել տնտեսավարին՝ թե այն ժամանակ, յերբ նա իրավացի յե, և թե այն ժամանակ, յերբ նա իրավացի չե, — արհմիություններն արդեն նշանակալի չափով վերացը են: Բայց նրանք արդեն իրենց գերքը փոխել են և հայտնաբերում են մի ուրիշ, վոչ պակաս չափով բացասական թեքում: Այդ բանը կարելի յել փաստացի կերպով ապացուցել մի շարք ձեռնարկություններում, մի շարք արհմիություններում տեղի ունեցած մի շարք դեպքերով, և այդ հարցի առթիվ վիճելն անոգուտ ե: Վերջին քննություններից և բանվորների ցուցմունքներից պարզվեց, վոր պրոֆաշխատավորները բննել են ուրիշ՝ ավելի վտանգավոր զիրք: Նրանք այլս ամեն դեպքում տնտեսավարներին չեն պաշտպանում, բայց այն դեպքում, յերբ տնտեսավարներն ակնհայտնի

սխալ բաներ են կատարում, յերբ բավորների պահանջները բացարձակապես ճիշտ են, արհմիութենականները մի կողմ են մնում: Ծնտեսավարին ակտիվ պատասխանը ցույց տալուց նրանք այժմ ամեն տեղ յել ամեն ժամանակ, բոլոր կարեռագույն հարցերում անցել են պասխիվորյան:

Յերկրորդ թերությունն այն է, վոր բանվորների կյանքի մասը խնդիրների վրա քիչ ուշադրություն ե դարձվում: Այստեղ հավասարապես մեղավոր են, ինարկե, թե անտեսավարները, թե արհմիությունները: Բայց արհմիությունները մեղավոր են ավելի մեծ չափով: Այսպիսի մարդկանց համար, վորոնք խոշոր քաղաքականությամբ են զբաղված, հաճախակի յին լինում զանազան նիստերում,—սովոր են քննևլ խոշոր ծրագրեր և այն, մասը խնդիրներն ընդհանրապես հանդիսանում են, ըստ յերեսութիւն, անկարևոր, մինչդեռ՝ բանվորի համար այդ խնդիրները հաճախ մեծ նշանակություն ունեն: Յեզ մենք ականատես ենք բանվորների դժգոհությանը. ինչի՞ առթիվ: Ահա, որինակի համար, թեկուզ հենց այս հարցը.—առաջ յուրաքանչյուր մի բանվորի տալիս եյին մի յերեսարբիչ, իսկ այժմ խնայողության ռեժիմի հետևանքով սկսել են յուրաքանչյուր յերեք հոգուն մի յերեսարբիչ տալ: Ըստ յերեսութիւն սա մի դատարկ բան է: Հին ժամանակ միթե բանվորները կխօսեյին այդպիսի դատարկ բանի համար, թե յերեք հոգուն և մի յերեսարբիչ տրվում, յերկու հոգուն, թե յուրաքանչյուրին: Իսկ այժմ արդեն այդ մեծ հարց ե հաշվում: Բանվորն այժմ իր պետության մեջ շատ դյուրազգաց է: Նա այժմ արդեն այլևս այն բանվորը չե, վորին մենք, հին

բանվորներս լավ ենք հիշում ցարի ժամանակվա գործարանից և ֆարբիկայից: Նա 1918-19 թվերի բանվորն ել չի, վորը գտներ՝ «Մենք բոլորս՝ թե խորհրդային իշխանությունը և թե կուսակցությունը վոչինչ չունենք: Դե, թնչ արած, ժամանակներն են այդպես, չեղած տեղից թնչ պահանջես»: Վերջին տարիներս, յերբ մենք թեակոխել ենք խաղաղ ժամանակաշրջան, բանվորն արգեն ուրիշ մարդ և դարձել: Նա դարձել ե գյուրազգաց: Նա իրեն համարում ե սոցիալիզմ կառուցող և պահանջում է, վորպեսզի բոլոր ասպարեզներում, նույնիսկ մասն խնդիրներում իրեն առավելագույն ուշադրություն նվիրեն:

Ի՞նչպիսի գանգատներ ենք լսում: Այսպիսի բաներ, վոր իսկի ձեր մտքով ել չեն անցնի: Ահա ձեզ, որինակի, ընդհանուր ժողովում մի բանվորի կողմից արված փոքր ինչ անեկդոտային բնույթ կրող մի հայտարարություն. այդ բանվորը գանգատվում եր բյուրուկրատիզմից և այն բանից, թե միություններն ուշադիր վերաբերմունք չեն ցույց տալիս դեպի բանվորների պահանջները և կենսական բնույթ կրող մանը խնդիրների լուծմանը աջակից չեն հանդիսանում: Նա ասաց. «Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը կոպիտ ե, նախագահը մոռացել ե, թե ինքը վորտեղ ե աշխատում և բանվորների հետ կոպիտ ե վարվում»: Բանվորները խնդրում են միջոցներ ձեռք առնել՝ կըովելու համար բլուճների դեմ. ութ ամիս հետո միայն այսպիսի պատասխան ե ստացվում. «Ինչո՞ւ, յես յերաշտահավ եմ, թնչ ե»: (Ծիծաղ): Այսպիսի պատասխաններն, ինարկե, բանվորները հաշվում են կոպտություն: Նրանք տառմ են. «Ինչո՞ւ յես նա մեզ հետ

այդպիս կոպիտ լեզվով խոսում, նա աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի մեր ընտրած նախագահն ե, և թող չհալարտանա և մեղ չչորի, թող այդպիս չպատասխանի մեր գրություններին: Ինձ մոտ կան բանվորներից ստացված շատ գանգատներ, լուրջ գանգատներ, վրոնք ցույց են տալիս, թե ինչպիս են վերաբերվում բանվորները նման կատակներին: Ահա ձեզ այսպիսի որինակ. մի տեսակավորող (ԵՐԱԿՈՎԻՉԻԿ), բանվորուհու արտադրած ապրանքներից չափազանց շատ ե անպետք դուրս բերում. վերջինս հարցնում ե նրան. «Ե՛, լավ, մեծ ախտեր, եղանակ վոր շարունակես, դու յերեի ամբողջն ել անպետք դուրս կբերես, և ինձ վոչինչ չի մնա, և թերես վոչ միայն այլես վոչինչ չեմ ստանա, այլէ մի բան ել տանից ստիպված կլինեմ բերել գործարանին հանձնելու: Տեսակավորողը դրան պատասխանում ե. «Ե՛, թուչ կա վոր, տանից ել կբերես»: Այս «կատակը» վրդովմունք ե առաջ բերում ամբողջ մի խումբ բանվորուհիների մեջ:

Այսպիսի մանր գծերը ցույց են տալիս, վոր իրենք, բանվորներն սկսում են տնտեսավարներին և պրոֆաշխատավորներին առաջարել մեծ պահանջներ. նրանք պահանջում են, վոր ընտրված ընկերները կոպիտ չփարվեն: Այդ իմ կարծիքով պլյուս և բանվորների առաջարիմության տեսակետից: Բանվորներն զգում են, վոր իրենք են տերը և յուրաքանչյուր անուշադրության, յուրաքանչյուր վրիպումի հիվանդագին կերպով են անդրադառնում, անդրադառնում են վոչ այնպիս, ինչպիս այդ առաջ եր,

Յես կանդ չեմ առնի այն թեղիսի վրա, վորը խո-

սում ե խնայողության ոեժիմի խեղաթյուրման մասին. կանդ չեմ առնի, վորովհետեւ այդ խնդիրը ձեզ բոլորից ել քաջ հայտնի յեւ Միքանի ընկերներ մասնավոր խոսակցության ժամանակ ասում եյին. «Այս, ձիշտ ե, յեղել են խնայողության ոեժիմի խեղաթյուրման դեպքեր, բայց այդ բանն այժմ այլես չկա, դրանք արդեն անցել են: Մենք, ընկերներ, չենք կարող յեղարակացություններ հանել միայն այսորվա փաստերից: Պետք ե մի վորոշ ժամանակաշրջանի փաստեր հավաքել և ամբողջն ի մի գումարել: Յես շատ ուրախ կը լինեմ, յեթե վորեն մեկն ալացուցի, վոր այժմ այլես չկան խնայողության ոեժիմի նախկին տիրահոչակ ծամառությունները: Յես շատ ուրախ կլինեմ, յեթե մեկն ինձ այդ ապացուցի: Բայց, ընկերներ, յերբ արդեն սկսվել եր ԽՎ կուսկոնքերենցիան, յես տեղեկություններ ստացա, վոր մի մանածագործարանում, խնայողության ոեժիմի հետևանքով, գործարանի վարչությունը հրաժարվել ե տաքացնել բանվորական հանրակացարանները, իրը թե՝ «խնայողական ոեժիմ ե, մեր ծախսերն ել են կրծատել 15 տոկոսով, այնպես վոր, մենք ձեր կացարաններն այլես չենք տաքացնելու, վառելիք չկա»: Բանվորներն առարկում են. «Ի՞նչպիս թե, այդ ի՞նչպիս կարելի յե, մենք հո չենք սառելու»: Նրանց պատասխանում են. «Մեր ի՞նչ գործն ե, մեղ չեն տալիս, մենք ել ձեզ չենք տալիս»:

Ընկերներ, յես կարծում եմ, վոր կուսակցությունը, խորհրդային աշխատավորները, տնտեսավարական աշխատավորները, պրոֆաշխատավորները, բոլորս միասին պիտք ե վերջ դնենք այս ծամածություններին. Նրանք անհանդուրժելի յեն:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀԻՐԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱ.
ՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ԱՎԵԼԻ ՈՒՃԱԴՐՈՒ-
ԹՅՈՒՆ ԳՅՈՒՏԱՐԱՐ ԲԱՆԱՋՐՆԵՐԻՆ

Յես այժմ անցնում եմ այն կետին, վորը յես հաշ-
վում եմ ավելի կարևոր. այդ՝ արտադրական խորհր-
դակցությունների հարցն ե: Յես այդ կետը հաշվում եմ
կարևոր այն պատճառով, վոր այդ հարցի շուրջը մեր
մեջ նկատելի յեն վորոշ տարածայնություններ: Ինձ
համար հատկապես ծանր են այն տարածայնություն-
ները, վոր մենք ունենք մի շարք հին տնտեսավար
աշխատավորների հետ: Մեր մեջ տարածայնություն-
ներ նկատվել են վերահսկիչ հանձնաժողովների կետի
վերաբերյալ: Ինչքան ել այդ բացից յես վշտացած
չինեմ, յես, այնուամենայնիվ, այդ կետի վրա պիտի
պնդեմ: (Չայն. «Ճիշտ ե»): Յես չեմ սկսի խոսել ար-
տադրական խորհրդակցությունների կարևորության
մասին, չեմ պարզաբանի այն, ինչ, իմ կարծիքով,
բավարար չափով ծեծված և պարզաբանված ե մեր
կուսակցության XIV համագումարում: Յես յելնում
եմ այն բանից, վոր արտադրական խորհրդակցու-
թյունների ոգուտն ու կարևորությունը բոլորի համար
ել անվիճելիորեն ապացուցված են, և դրա դեմք վոչ մի
առարկություն չի լսվում: Բայց արտադրական խոր-
հրդակցությունների աշխատանքի արդյունքներն,
արդեն, հարկավոր ե ի մի ամփոփել:

Ոպպողիցիոներների ճառերում և նրանց առանձին
փաստաթղթերում մենք լսում ենք հայտարարություններ, թե մեր արտադրական խորհրդակցությունները
մեռնում են, քայլայվում են, վոր նրանց հարկավոր

և աշխատացնել և այլն: Ընկերներ, մենք այդ խնդրով
զբաղվեցինք և տեսանք, թե իրոք ինչ ե կատարվում:
Մենք տեսնում ենք, վոր հակառակ բոլոր այդ բառե-
րին և հայտարարություններին՝ արտադրական խոր-
հրդակցությունները շատ լավ են աշխատում: Արտա-
դրական խորհրդակցություններն արդեն առաջ են
քաշել հազարավոր մարդկանց՝ մանր հրամանատարա-
կան պաշտոնների՝ վարպետների, բրիգադիրների հա-
մար և այլն: Ի պատիվ Լենինգրադի արհմիություն-
ների պիտի ասել, վոր այդ աշխատանքը հատկապես
լավ և դրված լենինգրադում:

Այստեղ հրամարակվում և հատուկ մի հետաքրքիր
ժուրնալ՝ «Производственные совещания» (Արտա-
դրական խորհրդակցություններ) անունով, վորը թեև
ունի մի շարք թերություններ, բայց հենց այդպիսի
ժուրնալի հրամարակությունն ինքնին մի լավ փորձ ե:

Յերբ արտադրական խորհրդակցությունների մա-
սին յեղած վեճը գեռ իր սկզբնական շրջանում եր
գտնվում, ինձ հանդիմանում եյին, թե Տոմսկին իբր թե
թերազնաատում ե արտադրական խորհրդակցություն-
ների գերը և ուզում ե սահմանափակել այն՝ մանրիկ
խնդիրների քննությամբ: Այդ բանը տեղի ուներ յեր-
կու տարի առաջ, լենինգրադի արհմիությունների հա-
մագումարում, իերբ յես պաշտպանում եյի իմ տեսա-
կետը՝ մատնանշելով, թե ավելրդ ե արտադրական
խորհրդակցություններում, բանվորների առաջ, դնել
համաշխարհային անտեսության վիճակի հարցն ընդ-
հանրապես, Խ. Ս. Հ. Մ.-ի տնտեսության դրությունը
մասնավորապես, քիմիական արդյունաբերության հար-
ցը հատկապես և վերջապես մեր արհստի խնդիրն

լիյան լրաբելավման միջոցները և այլն, և այլն։ Արդյունաբերության առանձին ճյուղերում մի շարք արտադրական խորհրդակցություններ փաստորեն արդեն անցել են այդ խնդիրներին։

Աշխատանքի այդ ծրագիրը պետք է առաջ քաշել հրա համար, վորպեսզի արտադրական խորհրդակցությունները չվերածվեն «Նովգորոդյան վեչե»-ի, վորտեղ մեկը մի բանի մասին և խոսում, մի ուրիշը մի այլ բանի, և առհասարակ ով ինչի մասին ուղղում են Աշխատանքի ծրագիր պետք եւ մշակել բայց դորձնական ծրագիր։ Մեզ մոտ ծրագրի վերաբերյալ սովորաբար այսպես են անում. յեթե ծրագրի կա, ապա այդ ծրագրի դեմ վոչ մի ձայն։ Յես վճռականապես դեմ եմ դրան։ Յես հրավիրում եմ կոնֆերենցիային՝ արտահայտվելու դրա դեմ, ծրագրի այդպիսի հասկացողության դեմ, վոր յեթե ծրագրի մեջ կա վորեալ խնդիր, ապա պետք եւ միայն այդ խնդրի մասին ել խոսել, և յեթե այդ ժամանակ, գլխիդ վերե, տանիքն ել վառվելու լինի, մի համարձակվիր վառվող տանիքի մասին խոսել, այլ խոսիր միայն այն հարցի մասին, վորը ծրագրով դրված եւ քննության։ Բանվորների դեմ խոչընդուներ չպետք եւ հարուցել արտադրական խորհրդակցություններում կենսական խնդիրներ քննության դնելու դեպքում։ Վաչ մի արտադրական խորհրդակցություն, արտադրական խորհրդակցության վոչ ոի զեկավար այդ բանում չպետք եւ բանվորին մերժի։

Յես չեմ շոշափում մի շարք խնդիրներ, չեմ շոշափել այդ խնդիրները նաև թեղիսներում, և չեյի ցանկանա շատ ընդարձակել զեկուցումն, բայց յես պետք և խոսեմ դյուտարարների մասին։ Մենք մեր համապա-

տասխան մարմիններին ուղարկել ենք մի շրջաբերական, վոր վերջին պլենումում, ընկ. Ֆելիքսի մահվանից յերեք որ առաջ համաձայնեցը ել ենք և ստորագրել։ Այդ շրջաբերականն արտադրական խորհրդագաղություններին տալիս ե մի շարք, միանգամայն ճիշտ հրահանգներ։ Այստեղ տնտեսավարների կողմից ձայներ են լսվում, վոր իբր յես թեղիսներում վիրավորել եմ տնտեսավարներին, չնայած նրանց դրական վերաբերմունքին զեպի արտադրական խորհրդակցությունները։ Ի՞նչ վիրավորների մասին ե այստեղ խոսքը։ Յես ասել եմ, վոր կան տնտեսավարներ, վորոնք արհամարհական վերաբերմունք են ցույց տալիս զեպի արտադրական խորհրդակցությունները։ Այդպիսի տնտեսավարներ կան—դա փաստ ե։ Յեթե անգամ տնտեսավարների Յ տոկոսն ե արհամարհական վերաբերմունք ցույց տալիս զեպի արտադրական խորհրդակցությունները, այդ մասին պետք ե խոսել։ Այդ տեսակտից ավելի լավ ե չափաղանցնել, քան պակասն ասել։ Վոր արտադրական խորհրդակցությունների վերաբերյալ այդպիսի վերաբերմունքի որինակներ կան և վոր այդ որինակները վորոշ տեղերում պահպանվում են նույնիսկ այժմ՝ դա փաստ ե և այն ել վտանգավոր փաստ։ Հոգեբանորեն այդ բանը կարելի յե բացատրել, այդ փաստերը վորոշ չափ կարելի յե նույնիսկ արդարացնել, բայց այդ փաստերը պետք ե արմատախիլ անել։ Ինչից ե առաջ զալիս այդ արհամարհական վերաբերմունքը։ Ահա թե ինչից։—«Յես վերատեսուչ եմ, գործու շատ լավ եմ հասկանում, ամեն ինչ զիտեմ, հասկանում եմ իմ խնամքին հանձնված հիմնարկի բոլոր մանրամասնությունները։ և ահա, չնայած այս բոլորին, յա

պետք և գամ ձեղ մօտ, և դուք պետք և ինձ սովորեցնեք, թե ինչպես պետք և կառավարել և զեկավարել ձեռնարկությունները. զործը յես ինքս ել լավ զիտեմ»: Այդպիսի վերաբերմունք ցույց և տրվում նաև տեխնիկական պերսոնալի՝ ամեն տեսակի դպրոցական հաստատություններ ավարտած ինժեներների կողմից: «Յես,—ասում ե,—սովորել եմ, 15—20 տարի յե աշխատում եմ այդ մասնագիտության մեջ, իսկ այստեղ հավաքվողներն ովքեր են, —ութերորդ և յոթերորդ կարգի պատկանողներ, վորոնք դեռ մինչև 9-րդն ել չեն հասել, իսկ այստեղ պետք և քննության առնեն, թե յես ինչպես պետք և այդ գործը դնեմ: Իսկ ի՞նչ են հասկանում նրանք: Նրանք վոչինչ չզիտեն և վոչինչ չեն հասկանում: Յես ինքս ամեն ինչ լավ զիտեմ»:

Յեթե դուք յերբեկցի սրտաբաց կերպով զրույց եք արել մեր տեխնիկների և ինժեներների հետ և հարց եք բարձրացրել այն մասին, թե ինչպես լավ և դրված տեխնիկայի գործը Արևմտյան Յեկոպայում, ապա դուք, հավանողին, նկատած կլինեք, թե նրանք ինչ հիվանդացին են անդրագանում այդ բանին. «Ի՞նչ եք խոռում Արևմտյան Յեկոպայի մասին: Մենք ինքներս նրանցից պակաս չզիտենք այդ գործը, և յեթե միջոցներ լինեյին, մենք ել կկարողանայինք այդ գործը դնել ճիշտ այնպես, ինչպես այնտեղ ե»: Այստեղ արտահայտվում է խանդը դեպի արևմտյան տեխնիկներն ու ինժեներները: Այդ խանդը, թերեւս ավելի վառ կերպով, նկատելի յե և այն ժամանակ, յերբ հավաքվում են կիսագրագետ մարդիկ, վորոնք հազիվ են կարողանում ստորագրել իրենց անունները և սկսում են քընուել, թե ինչպես դնեն գործն իրենց ձեռնարկության

մեջ և կամ հանդես են զալիս իրենց գյուտերով: «Ասացնեք ինչպիսիմ, — զոչում են նրանք, — տեսեք ի՞նչ դյուտարարներ են հանդես յեկել», Վոր այս գիծը կա՛ դա փաստ ե, և այդ գիծը չի կարելի ուրիշ կերպ վորակել, քանի արհամարհանք դեպի քանվորները: Կարող ե պատահել վոր գա իսկապես վիրավորական ե, բայց դե ի՞նչ արած, յես իմ պարտքն եմ համարում ասել ամեն ինչ այնպես, ինչպես նա իրականության մեջ:

Այժմ գյուտարար բանվորները հաճախ կարող են ասել վոր մենք ամեն ինչ անում ենք, վորպեսզի մեռցնենք գյուտարարությունը: Յես այստեղ մի փոքրիկ որինակ կըերեմ: Մի գործարանում գոյություն ուներ այսպիսի մի կարգ. դաղպյահը գուրս եր ձգում իր կըտրած առարկան և մետաղի կտրված կտորը միկնույն արկղը: Այնուհետև այդ առարկան յենթարկվում է առ մանիպուլյացիայի՝ անցնում մյուս դաղպյահը, բանվոր կանանց ձեռքը, վորոնք ապրանքն ընդունում են կշեռքով և իրենց ընդունած կշեռքով ել հանձնում. այդ կորի և գնահատման մեջ մտնում են նաև կտըրտված պղնձի կտորտանքը: Գյուտարար բանվորը տեսնելով հին ձեի աշխատանքի անհարմարությունները, յերբ կտրված առարկան և կտորտանքը միասին միկնույն տեղն են ընկնում—հնարում ե վորոշ հարմարություն, — կտորտանքների ձգելու համար առանձին և կտրված իրերը ձգելու համար առանձին, այսպես շատ ավելի լավ և և դյուրին: Յեվ ի՞նչ, բանվորուիներին, վոր կատարում եյին հետեյալ մանիպուլյացիան, կարգադրվում ե հանձնել հին ձեով, նույն կշեռքով: Յերեակայեցեք այդ գյուտն անողի դրությունը, յերբ մոտենում են մի տասնյակ կանայք և ասում. «Քո արած

գյուտը մեզ վրա թանգ և նստում»: (Ծիծաղ): Ի՞նչ
խոսք, վոր բանվորը յերդվում և այլես յերբէք զյուտ
չանել: (Ծիծաղ): Զցանկանալով ավելի ժամանակ ձե-
ղանից խլել՝ յես ուրիշ որինակներ չեմ բերում, վո-
րոնք նույնչափ ապշեցուցիչ են:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՑԱԳԱ-
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԹՐ

Անցնում եմ այն հարցին, թե արտադրական խոր-
հըրդակցությունների հետագա աշխատանքն ինչպիսի
բնույթ պիտի կրի: Յեթե ընկերները չեն վիճում
այն մասին, թե «Արտադրական խորհրդակցություններ,
սկսեք ձեր աշխատանքը մանր խնդիրներից՝ բարձրա-
նալով ձեր աշխատանքի ընթացքում դեպի ավելի լուրջ,
ավելի կարեոր հարցերը» լոգունզը ճիշտ և (դրա դեմ,
կարծես թե, վոչվոք չի վիճում), ապա չի կարելի
վիճել նաև այն բանի գեմ, վոր արտադրական խորհր-
դակցությունների աշխատանքի մեջ պետք և մացվի
վորոշ պլանայնություն՝ միքանի ամսվա համար, ասենք
թե, սկզբնական շրջանում՝ յերեք ամսվա համար. այ-
նունեաւ պետք և անցնել ավելի տևական ժա-
մանակաշրջանի համար պլան կազմելուն: Յեթե դա վե-
ճի առիթ չի տալիս, ապա չի կարելի վիճարկել նաև
այն, թե անհրաժեշտ ե, վոր արտադրական խորհր-
դակցությունների պլանային աշխատանքի համար բան-
վորներին ներզրակելու և առաջ քաշելու ժամանակ՝
պետք և բարձրացնել աստիճանաբար. դապդյանի շա-
հերից մինչև ամբողջ ցեխի (համբարության) շահերը,
ցեխի շահերից մինչև ամբողջ գործարանի շահերը, գոր-

ծարանի շահերից մինչև ամբողջ տրեստի շահերը: Ահա
այն ճանապարհը, վորով պետք ե ընթանա բանվոր-
ների արտադրական դաստիարակությունը:

Չի կարելի առարկել նաև այն մտքի գեմ, վորն
առաջարկված ե վերահսկիչ հանձնաժողովներին վերա-
բերող թեղիսներում: Ի՞նչ խոչընդոտների կարող ե
հանդիպել և ի՞նչպես կարող ե խորտակվել բանվորների
արտադրական շահերի բարձրացման գործում կիրար-
կելիք պլանայնությունը: Ի՞նչ խոչընդոտներ նրան կը-
խորտակեն և արդեն իսկ սկսում են խորտակել: Ահա
թե ինչ խոչընդոտներ: Բանվորն ասում ե. «Ե՞ն, շատ
լավ, բայց յես ի՞նչպես պետք ե քննեմ իմ ձեռնար-
կության շահերի ճիշտ ընկելը, յերբ հանդես ե գալիս
վերատեսուչը (իհարկե, այն դեպքում, յերբ նա
գուրս ե գալիս). նրա մոտ կան դիավրամմաներ, սյու-
նակներ, զանազան շրջագծեր (քրյոքի), և ահա նա
սկսում ե պատմել, իսկ յես յեկել եմ կամ ուղիղ տո-
կարի գաղգրահից կամ մանող մեքենայից, նստել և
լսում եմ: Ի՞նչ կարող եմ առարկել: Յեթե յես ծըպ-
տուն հանեմ, թե ապահարատը մեծ ե, նա կսկի իր
պաշտպանումը. «Ճիշտ ե, մեծ ե, բայց այդ հանգա-
մանքը հետեանը ե այսինչ այնինչ բաների»: Իրավա-
ցի յե նա արդյոք, թե վոչ, —չգիտեմ: Ել ով բերան
բաց կանի: Յեթե դուք վերցնեք մեր հարգելի ընկեր-
ներից ումն ել վոր ուղեր, խնդրեք, թե հենց այսուհետ,
այս կոնֆերենցիայում մի զեկուցում տա ձեռնարկու-
թյան վիճակի մասին առանց նախնական թվերի և
հայտնի, թե բանվորների թիվն այսքան ե, դապդյան-
ներինը այսքան և այլն, իվիճակի կլինքնք, արդյոք,
մենք ստուգելու նրա ասածները, թե վոչ, վճի,

ճակի չենք լինի ստուգելու»: Իվիճակի՞ յի արդյոք
ստուգելու ճշտությունն այդ թվերի, սյունակների,
շրջագեցերի և այլն, այն բանվորը, վորը յեկել և ար-
տադրական խորհրդակցության ուղղակի դադյյանից,
գործող մեքենայից: Վոչ, իվիճակի չե: Այդ պատճա-
ռով ել նա մտածում ե՝ կարող և պատահել, վոր դու
իսկապես ճիշտն ես ասում, բայց կարող և պատահել և
ընդհակառակը, վոր դու ճիշտը չես ասում, ինձ հա-
մար այդ պարզ չե:

Վորպեսզի այդ խոչընդուռ առաջներիս չունենանք,
հարկավոր ե, վորպեսզի արտադրական խորհրդակցու-
թյուններն իրենց հերթին, իրենց ներկայացուցիչների
մրջոցով, նախապատրաստվելին տվյալ հարցի համար:
Չենց այդ նախապատրաստումն ել պետք և կատարվի
վերահսկիչ հանձնաժողովի միջոցով, վորը շատերն
այժմ փորձում են ներկայացնել վորպես բանվորական
վերահսկողության պրինցիպի վերակենդանացումն: Ի-
րականում այդպիսի բան չկա: Արտադրական խորհր-
դակցություններն իրենց աշխատանքի ծրագրում
դնում են 2-3 ամիսը մի անգամ վերատեսչի ղեկուցումը
իրենց ձեռնարկության մասին, ընտրում են մի ժամա-
նական հանձնաժողով՝ բազկացած սահմանափակ
թվով մարդկանցից, որինակի համար՝ հինգ հոգուց
(հանձնաժողովը՝ կարող և բազկացած լինել և 7 հոգուց
կամ 3 հոգուց, այդ մասին մենք հետո կլսունք),
վորի առաջ բաց են բոլոր դաները, վորը գնում ե նա-
յելու ամբողջ ձեռնարկությունը: Նա գիտում ե ապա-
րատը, գրքերը, լսում է փորձարկումի տվյալ տեղեկու-
թ ունները, հետազոտում է, նայում է ամբողջը, շրր-
ջում է ամբողջ փորձարանը, — իսկ դուք գիտեք, վոր

մեծ գործարանում շատ բանվորներ կարող են տարի-
նել աշխատել և մյուս ցեխերում յեղած չլինել, — և
հետո, յերբ վերատեսուչը տալիս ե իր զեկուցումը,
հանձնաժողովը կամ նրա հետ համաձայն ե լինում և
հաստատում ե զեկուցումը, կամ վորոշ կետերում ուղ-
ղումներ ե մտցնում: Իսարկե, կարելի յե նախապես
զեկուցումը համաձայնեցնել, իսկ վոր կետերում վոր
հանձնաժողովը տարակարծիք կլինի՝ իր ուղղումները
կմոցնի արտադրական խորհրդակցության նիստում:
Այսեղ հարց են տալիս՝ իսկ յեթե համաձայնության
չեկան, իսկ յեթե արտադրական խորհրդակցության և
վերատեսչի մեջ տարակարծություն առաջացավ: Ե՛ս,
ընկերներ, այսաեղ արդեն այնքան հաշտեցնող ինս-
տանցիաներ կան. կհաշտեցնեն, հանգիստ կացեք: Դրսե-
վորել բանվորական մասսայի արամադրությունն ու
ցանկությունն, ընկերներ, չափազանց կարևոր եւ
Յերբ ասում են՝ «Ահա, մի նոր շղթա յեն ուզում կա-
պել մեր վզին—առանց այն ել, չորս կողմից յենթա-
կա յենք վերահսկողության, իսկ այժմ դարձյալ մի
նոր տեսակի հսկողություն են ուզում ստեղծել», — պիտի
պատասխանել՝ ղե, յեթե այդպիս ե, ինչ անենք, թող
վոչ մի տեսակ հսկողություն ել չլինի: Ա՞յս ե ձեր
ասածը: Այդ հանձնաժողովը վոչ մի վարչական իրա-
վունք չունի: Նա միայն վերատեսչի ղեկուցումից
առաջ անձամբ վորոշ բաներ դիտում ե: Վերատեսուչն
ասում ե: «Փորձի գրությունը մեզ մոտ այսպիս-այս-
պիս ե», իսկ հանձնաժողովը զեկուցում ե. «Մենք
տեսել ենք, այսպես ու այսպես ե»: Յեվ յերբ մեկ-մեկ
տնօտեավարները չափազանց խիստ են կառչում իրենց
իրավունքներին և վախենում են, վոր պակասեցնեն

այդ իրավունքները, մարդ ուզում և միքանի որինակ բերի: Վերջերս Մոսկվայում տեղի ուներ մի արտադրական կոնֆերենցիա, այդ արտադրական կոնֆերենցիային մասնակցողները մտցնում են մի շարք առաջարկներ: Այդպես նստած են լինում ձեռնարկության վերատեսուչները, արեստների բոլոր բարձր պաշտոնյաները. գրանցից վոչվոք առաջարկության դեմ չի առարկում, ընդունված առաջարկությունների դեմ և վոչ մի ձայն չի լսվում: Այս բոլորից հետո, քանի վոր տնտեսավարը չի առարկում, կոնֆերենցիան իրավունք ունի պահանջելու յուրաքանչյուր մասնակցողից, վոր առաջարկությունը հաշվեն ընդունված: Կարծես թե իրավունք ունի: Յենթագրենք, թե առաջարկություն կար մի նոր գործարան շինել, և այդ առաջարկությունն անցավ: Կոնֆերենցիայում ներկա գտնվող տնտեսավարները պարտավոր եյին դուրս գալ հասել. «Բայց չե՞ վոր նոր գործարան կառուցելը ինձանից չի կախված, զբա համար կա Գերժողականարքուն, Պետպան և այլն, նրանք են այդ գործով զբաղում, նրանցից և կախված այդ»: Բայց տնտեսավարների կողմից վոչ մի ձայն չի լսվում: Նստում են և լսում: Դրանից հետո, յերբ առաջարկներն ընդունվում են 100 տոկոսով, ընդունված առաջարկությունների 40 տոկոսը կենսագործվում ե, 20 տոկոսն ել կենսագործվելու վրա յե, իսկ մնացած 40 տոկոսը կենսագործման յենթակա չե: Այստեղ արդեն հարկավոր ե հարցնել տնտեսավարներին. «Հապա վճրաել եյիք դուք առաջ: Ե՛, հետո, այս յեղավ, ինչի՞ յե նման ձեր արածը: Այսպիսով կորչում ե բանվորների վատահությունը դեպի տնտեսավարները, դեպի նրանց հմտությունն ու լըր-

ջությունը, դեպի այն խնդիրը, վոր տնտեսավարները ցանկանում են բացատրել, թե վար բանն է սխալ և վարը ճիշտ: Այս դեպքում տնտեսավարների վարմունքը կարեւ լի յե բացատրել միայն հետեւյալ ձեռվ. Եհ, թող խորհրդակցության ժամանակ խոսեն, ինչ վոր քեզները կտա, իսկ մենք մեր ցանկացածը կանենք. իսկ յեթե այնպիսի բան և վորոշվել, վոր մեզնից չի կախված, թող ավելի բարձր իշխանությունը պարզի: Այդ լուրջ վերաբերմունք չե դեպի գործը, ընկերներ: Այստեղ նկատելի յե վախը, թե վորեւ մեկը վոտնակոխ կանի տնտեսավարների իրավունքները: Վերջին ժամանակներս, ինչ վոր յես չեմ հիշում և վոչ մի դեպք և. Ս. 2. Մ. մ. գործարաններում և ֆաբրիկաներում, վոր տնտեսավարների իրավունքները վոտնակոխ արված լինեն վատ արհմիությունների կամ բանվորների կողմից: (Մի ձայն տեղից. «Ճիշտ ե»): Մինչդեռ ուրիշ տեսակի գեպեր պատահում են (Մի ձայն տեղից. «Կան հակառակ դեպքեր»), այս, հակառակ դեպքեր կան:

Յերբ վոր վերահսկիչ հանձնաժողովը վերջացրեց իր Փունկցիաները, նա անմիջապես արձակվում ե և այլևս վոչ մի վերահսկիչ հանձնաժողով գոյություն չի ունենում՝ մինչև հետեւյալ անդամը, յերբ արտադրական հանձնաժողովը գործարկումի հետ միատեղ հարկավոր են հաշվում նշանակել նոր վերահսկիչ հանձնաժողով՝ կատարելու վորոշ հատուկ ֆունկցիաներ, ըստ վորում, հանձնաժողովին կարող են արվել կամ մասնակի, կամ լրիվ առաջարդություններ: Մենք ասում ենք, — զարգացրեք բանվորների ինքնազործունեյությունն արտադրական խորհրդակցությունների միջոցով՝ իրազեկ դարձնելով նրանց բոլոր տեսական հարցերին: Արտա-

դրական խորհրդակցությունները բանվորական մասաւաների տնտեսական արտադրական նախաձեռնության արտահայտության որգանն են: Յեթե այդ ձիշտ ե, իսկ այդ իսկապես ձիշտ ե, ապա մի վախճառք և տվեք նրան համապատասխան կազմակերպչական ձևեր, վորոնք պետք են, վորպեսզի նրանց միջոցով առավելապես ոգտագործել կարողանանք բանվորական մասսաների տնտեսական նախաձեռնությունը: Յեթե ցանկանում եք, յիս կարող եմ ամեն տեսակի բանաձեռքի մի մեծ կապոց բերել, վորտեղ այդ բոլորը խոսքով վաղուց արդեն ասված ե, բայց հարկ յեղած ձևերը չեն ձարված, չեն գտնված: Բայց, ասում են, կարող ե պատահել, վոր դա վատ հետեանքներ ունենա: Թե ինչ կարող ե պատահել հետագայում, դրա դեմ չեմ վիճում, բայց, դե, կարող ե պատահել նաև, վոր մի որ տատըն ել պապ դառնա: (Ծիծաղ): Կտեսնենք, թե ինչ դուրս կգա: Յեթե հետեանքները վատ կլինեն, մենք կպատճառաբանենք, վոր այդ արված եր «իրքի փորձ»: Այն ժամանակ մենք ձեզ հետ միասին կասենք, կասենք ափաշկարա, ի լուր բոլոր բանվորների, թե, այ, մենք ուզում ենինք մի լավ բան անել, բայց անհաջող բան դուրս յեկավ, դե վոր եղաքես ե, մենք ել վորոշումը փոխում ենք: Դրա համար մեզ վոչվոք չի հանդիմանի, մենք վոչվոքի չենք խոստացել, վոր մեր յուրաքանչյուր վորոշումն անսխալ պիտի լինի: Յեթե վատ ե, կարելի յե փոխել. բայց ինչո՞ւ վախճառալ փորձից: Յեկեք փորձը գործադրենք 10—5 ձեռնարկության մեջ, յեկեք առանձին վեճի նյութ գարձնենք՝ 3, 5, 10 թե 12 ձեռնարկության մեջ: Փորձը կատարենք այս ձեռնարկություններում, այս ինչ ուայոններում,

նայած բանվորների կազմին: Բայց ել ինչո՞ւ յեք վիճում փորձի զեմ: Կխանգարի, վատ կլինի, գործը կքըննենք: Չե վոր մենք աշխատում ենք շոշափելով գտնել բանվորների նախաձեռնության, բանվորների ինքնագործունեյության արտահայտության ձևերը. դրա գեմչիք վիճում, ել ինչից եք այն ժամանակ վախճառում: Վոչնչից չպետք ե վախենալ:

Այդ պատճառով՝ յես գտնում եմ, վոր այս կետում, վոր չի կանխորոշում վերահսկիչ հանձնաժողովի կազմը, չի կանխորոշում նրա պարտականությունների շրջանը և իրավունքները, չի կանխորոշում նրա գործունեյության լայնությունն ու ձեւագորման մեթոդները, վիճել՝ նշանակում ե վիճել հենց իր, սկզբունքի դեմ—մի բան, վոր, իմ կարծիքով, սխալ ե: Մյն ընկերները, վորոնք մտածում են վիճել այս բանի դեմ, լուրջ կերպով չեն ըմբռնում արտադրական խորհրդակցությունների անհելիքները—չեն ըմբռնում այնպես, ինչպես մենք այն ձեակերպել ենք մեր կուսակցության XIV համագումարում:

ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ՍԻՍՏԵՄԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յես ուզում եմ այսանդ մի յերկու խոսքով շոշափել, այսպես կոչված, առաջ քաշելու սիստեմի հարցը: Մենք վերջին տարիներում, հատկապես արտադրական խորհրդակցությունների միջոցով, հազարավոր բանվորներ ու բանվորունիներ ենք առաջ քաշել՝ ամեն տեսակի տնտեսական դիրքերի համար: Առաջ քաշելու սիստեմը, մի շարք գետքերում հայտնաբերելով իր թերությունները՝ իրքն գիծ, իրքն կանոն՝ ամբողջա-

պես ու լիովին արդարացրեց իրեն: Բայց կան այն պիսի բացեր, վորոնց վրա հարկավոր և հրավիրել մեր ուշաղը թյունը: Նախ—վորակավոր բանվորները չեն ցանկանում առաջ քաշվել: Ճիշտ և այս արդյոք, թե վոչ: Ճիշտ ե: Ինչու: Վորովհետեւ այն պաշտոնը, վորի համար նրան առաջ են քաշում, նրան ավելի պակաս վարձատրություն և ատալիս, քան այն տեղը դադրանք մոտ, վորտեղ նա աշխատում ե:

Յերկրորդը՝ այն անուշագրությունը դեպի առաջ քաշվողը, վորը յերեան են բերում նրան առաջ քաշող կազմակերպությունները, հատկապես արհմիությունները: Մասնավոր խոստովանությունների ժամանակ ինձ որինակներ են բերել թե այնպիսի դեպեր են պատահում, յերբ առաջ քաշվողները չեն ցանկանում վերատեսչի տեղից ավելի ցածր պաշտոն վերցնել: Այդպիսին վատ առաջ քաշվող ե, նրան հարկավոր և աշխատելու ուղարկել դազգյահի մոտ: Բայց մեծ մասմբ հակառակն ե պատահում: Բանվորին առաջ են քաշում, նշանակում են սկզբում տնտեսական բաժնի վարիչի տեղակալ: Այստեղ նա աշխատում ե: Հետո ասում են, վոր նա բավարար չափով փորձառություն չունի, վոր նա պատրաստված չե այդ աշխատանքի համար, վոր նրան հարկավոր և ավելի ցածր տեղ նշանակել, վորպիսդի նա առաջ ցածր տեղերում աշխատի, ապա նոր առաջ քաշվի այստեղ: Տեղափոխում են նյութեղենների պահեստի վարիչի տեղակալի պաշտոնին: Տղան աշխատում ե, ջանք և թափում: Վարիչն ասում ե. «Այո, լավ և աշխատում, բայց չի կարելի նրան լիովին վստահել: միքանի տարի հետո նրանից դուրս կդա լավ աշխատավոր, իսկ այժմ չի կարելի

նրան վստահել, բերեք նրան անձնական կտղմի սեղանի վարիչ նշանակենք»: Նշանակում են: Աշխատում և մարզը: «Լավ տղա յե, ասում են, բայց կիսագրադես ե, այստեղ պահանջվում և կարգին գրագետ մարդ. յեկեք նշանակենք նրան մաքրողների և ցրիչների վարիչ»: Զարժե թվել նրա անցած բոլոր աստիճանները, միայն նա հետագայում հայտնվում և ավագ պահապանի պաշտոնում: Ո՞վ և այդ բանում մեղավոր: Մեղավոր են նրան առաջ քաշող կազմակերպություններն ու արհմիությունը: Բավական չի մարդուն առաջ քաշել և բաց թողնել վոր նա նոր միջավայրում մենակ կատարի այդ անձանոթ գործը, հարկավոր և ողնել նրան: Իսկ ով պիտի նրան ոգնությունը հասցընի, ով պիտի նրան հետեւ, ուր նա կարող ե դիմել, ով նրան կպաշտպանի: Ահա այդ խնդիրների մասին պիտի մտածեն թե կուսակցությունը, թե արհմիությունները: Ահա այստեղ պետք ե հարցն այնպես մշակել, ստեղծել այնպիսի միջավայր, վոր առաջ քաշվածն, այսպես ասած՝ դեպի յիտ «առաջ չքաշվի»: Այդ նպատակով պետք ե ստեղծել առաջ քաշվածի համար բարոյական աջակցություն և ուշադիր վերաբերմունք՝ վերից մինչև վար:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ՈՊՊՈՁԻՑԻԱՅԻ ԱՄԲՈՒԱՎԱՐԾԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Պոլիտբյուրոյում, թեղիսների քննության ժամանակ, ոպպոզիցիայից միքանի ընկերներ ինձ ասում եյին, վոր յեթե իմ թեղիսները նրանց հասցեյին միքանի հայնոյական մունիստներ չպարունակեյին, նրանք

կկարողանային հանդիստ խղճով քվեարկի այն, և վոր յեթե յես հանեցի այդ խստությունները, նրանք կկարողանային թեզիսներս ընդունել: Ոպպողիցիայի դեմ այդպիսի հայնոյական մոմենտներ պարունակում ե իր մեջ մասնավորապիս աշխատավարձի հարցը: Յես աշխատավարձի հարցը չափողանց կարեոր հարց եմ համարում: Աշխատավարձը՝ դա այնպիսի հարց ե, վորով ամենից հեշտ ե դեմագողիա յերեան բերել, ամենից հեշտ ե անպատճանատու յելույթներ կազմակերպել, և վորն, այդ պատճառով, հանդիսանում ե ամենավանդավոր և ամենասուր հարցերից մեկը: Ինչու: Այն հասարակ պատճառով, վոր բնության մեջ այնպիսի բանվոր չկա, վորն իր աշխատավարձից գոհ լինի և ավելին չցանկանա: Աշխարհում այդպիսի բանվոր գոյություն չունի: Այնքան ժամանակ, ինչքան վոր աշխատավարձը գոյություն կունենա իրեն գործադրած աշխատանքի հատուցման սիստեմ, աշխատավարձի հարցը կմնա սուր հարց, և այստեղ պահանջվում է, հատկապիս պլուղարիատի դիկտատուրայի ժամանակ, վոր կուսակցությունը հայտնաբերի մեծագույն հրատակություն, մեծագույն պարզություն և պարզաբանի բոլոր սխալներն ու բոլոր անպատճանատու յելույթները: Յես վերցնում եմ չամ. Կ. (բ) Կ.-ի կենակոմի ապրիլյան սլենումը: Ի՞նչ եյինք ապրում ապրիլի սկզբում, յերբ գումարվեց պլենումը, —ապրանքային ինդեքսի ամենամեծ բարձրացումն, ամենամեծ բարձրացումն ապրանքների գների:

Հետեւյալ ծանր ամիսն եր մայիսը: Թե ի՞նչ եր լինելու հետո, այդ մենք ապրիլ ամսին ել դիտեյինք: Մենք տեսնում եյինք, վոր գնալով թանգությունը մեծանում

է. այդ հասկանում եր և զիտեր յուրաքանչյուր մի բանվոր: Այդ ժամանակ եր, վոր առաջարկվեց ընկեր կամեննեի ուղղումը, վոր վերաբերում եր ընկ. Ա. Ռիկովի թեզիսներին: «Աշխատավարձի քաղաքականությունը առաջիկա կիսամյակին պետք ե կառուցել վոչ թե անվանական, այլ իրական աշխատավարձի անպայման պահպանման և հետազյում աշխատավարձն ավելացնելու համար նյութական պայմաններ նախապատրաստելու (ամենից առաջ աշխատանքի արտադրականության բարձրացմաբը) պրինցիպով: Անվանական աշխատավարձի պահպանումը բոլորովին բավարար չափով յերաշխավորում ե իրական աշխատավարձի կայունությունը այն չափով, ինչ չափով վոր ընդհանրապես և ամբողջությամբ մնում ե և պահպանվում կայուն վայուտան»:

Ի՞նչը խանգարեց կենակոմին ապրիլ ամսին ընդունել իրական աշխատավարձի պահպանման ուղղումը և ասել, վոր անվանական աշխատավարձի պահպանումը յերաշխավորում ե իրական աշխատավարձի կայունությունը միայն այն ժամանակ, յերբ գոյություն ունի կայուն վայուտան: Առաջինը՝ այդ կնշանակեր ընդունել մեր չերվոնեցի անկումը: Ճիշտ ե, թե վոչ: Ճիշտ ե: Յերկրորդ՝ այդ կնշանակեր չերվոնեցի հաշվով աշխատավարձ տալու սիստեմից անցնել ապրանքային ինդեքսով վճարելու սիստեմին: Ուրիշ ի՞նչ կարող ե լինել: Թող պրոֆաշխատավորներից կամ տնտեսավարներից մեկն իսկ ասի, վոր այդ մի ուրիշ բան կնշանակեր: «Մենք ձեզ յերաշխավորում ենք, վոր առաջիկա կիսամյակում կալանպանվի իրական աշխատավարձը»: Բնչ կնշանակե այդ: Այդ կնշանակեր անցնել ապրան-

քայլին ինդեքսին, վերագանցաւ այն ժամանակներին,
յերբ հաշվում ելին և վիճում, թի ինչ արժե կարու-
փելն այս կամ այն ռայոնում, ինչ ինդեքսով և այլն:
Իսկ ի՞նչ կնշանակեր 1926 թվի ապրիլ ամսին մտցնել
ապրանքային ինդեքս: Այդ կնշանակեր ընդունել չեր-
վունեցի անկման անխուսափելիությունը վոչ միայն
ներկայումս, այլև ընդունել նրա հիտագա անկման ան-
խուսափելիությունը թեք մակարդակով: Ուրիշ վոչինչ
չեր կարող նշանակել: Յեթե յես ասում եմ՝ յես յերաշ-
խավորում եմ ձեր առաջիկա կիսամյակի իրական աշ-
խատավարձը այն ժամանակ, յերբ շուկայում ամեն
ինչ թանդանում ե, ապա յեկեք հաշվենք՝ ի՞նչ եր ձեր
իրական աշխատավարձը ապրիլին, կամ, յենթերենք,
հունվարի մեկին, և ի՞նչ պիտի լինի այն մայիս ամ-
սին: Այս ձեզ ապրանքային ինդեքսը, այս ել չերվոն
ոռութիները: Յեկեք տեսնենք, թե հետո այդ ի՞նչ կնշա-
նակի: Այդ կնշանակի ընդունել չերվոնեցի սնանկու-
թյունը, ընդունել վոչ միայն այն, վոր նա տատան-
վում ե, կամ խախտվել ե (այդ մասին գեռես կարելի
յեր ապրիլ ամսին վիճել), այլև այն, վոր նա գլորվել
ե և պիտի շարունակի գլորվել գեպի ցած: Բավական
ե նրան մի հարված հասցնել — մտցնել ապրանքային
ինդեքս, — և չերվոնեցը կվորվի, վորովհետև ապրան-
քային ինդեքսն առաջ ե բերում ավելի մեծ ընդհանուր
բարձրացում չերվոն ոռութիներով, իր յետեից քաշում
ե եմիսիան, ավելացնելով գրամանիշների քանակու-
թյունը՝ առանց ավելացնելու ապրանքների քանակը
և այլն: Այդ կնշանակի խորտակում այն բանի, վորը
մենք ձեռք ենք բերել շատ թանգ գնով:

Մենք, պրոֆախսատավորներս, նախքան ապ-

րանքային ինդեքսից չերվոն ոռութիւն հաշվին անցնելը,
յերկար ժամանակ զեռ տատանվում ելինք: Մենք յեր-
կար ժամանակ քննում ելինք այդ հարցը. այդ մի մեծ
պայքար եր, բայց վերջապես թե՛ արհմիությունները,
թե բանվորներն արտակարգ ջանքերի, մեծ կորուս-
ների գնով գեն՝ շպրտեցին ապրանքային ինդեքսը,
անցան չերվոն ոռութիւն հաշվին, և բանվորներն ոգտվե-
ցին ու ազատ շունչ քաշեցին: Նրանք շահեցին կայուն
վալուտայից, աշխատավարձի համեմատական կայու-
նությունից: Դրանից հետո այդպիսի միջոցի դիմել,
ինչպիսին առաջարկում եր ոպպութիւնիան, կնշանակի,
վոչ մի բանի, վոչ մի գրոշի արժեք չտալ. այդ կնշա-
նակի ընդունել, վոր չերվոնեցն ընկնում ե և պետք ե
ընկնի, վորովհետև յեթե նրան հարվածես, նա ցած
կոլորվի: Ի՞նչպես կարող են պետական մարդիկ կենտ-
կոմի առաջ դնել մի այդպիսի առաջարկ, մի այդպիսի
դժվար մոմենտում, յերբ ապրանքները հասել ելին
ամենամեծ թանգության: Միթե այդ աշխատավարձի
իմաստուն, խելոք քաղաքականությունն ե: Միթե բան-
վորները չնորհակալ կլինելին մեղնից, յեթե մենք տա-
պալելինք չերվոնեցը, յեթե մենք նրա հետ վարվելինք
այնպիս, ինչպիս 1919 թվին եր, յերբ աշխատավարձն
ավելացնում ելինք՝ դրամանիշների վրա միքանի ավե-
լորդ գրոներ ավելացնելու ճանապարհով, յերբ մենք
կլիշեների վրա ավելացնում ելինք մի զրո, և դուրս եր
գալիս, վոր բանվորը 100 ոռութու փոխարեն ստանում
ե հազար ոռութիւ: Անցնում եր մի ամիս, նորից՝ մի գրո-
ներ ելինք ավելացնում, ստացվում եր միլիոն և այլն:
Մի շաբաթ գործարաններում գոկումենտները
ու փաստաթղթեր կան, վորոնք վկայում են, վոր իրենք

բանվարները լավ են հասկացել չերվոնեցի կայունության արժեքը և աշխատավարձը բարձրացնելիս հարցը բերել են. «Իսկ դա չերվոնեցի տատանման պատճառ չի դառնա արդյոք. յեթե կդառնա, ավելի լավ ե սպասենք»: Յես պնդում եմ, վոր յեթե գնանք վորմե գործարանային մի ժողով և բանվորների առջև դնենք այս հարցը. — ընդունենք արդյոք այն միջոցը, այսինքն, ապրանքային ինդեքսի սիստեմին անցնելը, վորը մաթեմատիկական ճշտությամբ առաջ կը բերի չերվոնեցի անկում, յես պնդում եմ, վոր բանվորները մեզ կասեն. «Ավելի լավ ե համբերենք, սպասենք, բայց թույլ չտանք, վոր չերվոնեցի կայունությանը հարված հասցնեն»: Վորովհետեւ դրանից առաջին հերթին բանվորները կվասավին: Կավելանման արդյոք ապրանքի քանակը, յեթե մենք աշխատավարձը նորից ապրանքային ինդեքսով հաշվինք: Թող ասեն, թե ապրանքային ինդեքսն ի՞նչպես պետք ե պահպանի իրական աշխատավարձն առաջիկա տարում: Բանվորներից շատերն այսպես ելին ասում. «Լավացրու կոռպերացիայի աշխատանքն որեցոր, վորովհետեւ կոռպերացիայի աշխատանքի բարելավումը հավասարագոր ե բանվորների իրական աշխատավարձի ավելացման»: Բայց դռւք ի՞նչպես կարող եք չերվոնեցի անկումն ընդունելու ճանապարհով յերաշխավորել իրական աշխատավարձը: Դա միանգամայն աբուրդ և քաղաքականապես անպատճախանատու մի առաջարկություն ե:

Ահա թե ի՞նչու յես չեմ կարող հրաժարվել այդ կետը մեղմացնելուց, թեկուղ հենց այդպիսի հրապուրիչ հեռանկարի համար, ինչպիսին այդ թեղիսների միաձայն ընդունելու ե: Մենք ձիւտ ենք վարվել Յերբ

մենք տեսանք, վոր բերքի հեռանկարներն ավելի լավ են, քան մենք սպառում եյինք, աշխատանքի արտադրականությունը բարձրանում ե, յերբ մենք տեսանք, վոր զներն սկսում են հավասարվել, այն ժամանակ մենք ինքներս՝ խորհրդակցելով արհմիությունների մի շարք ընկերների հետ, հարց մտցրինք կենակոմի Պոլիտերուրոն այն մասին, վոր գործնականորեն քննության առնենք. թե ի՞նչքան մենք կարող ենք ավելացնել աշխատավարձի գոնդը, Մենք քննեցինք այդ հարցն ավելի քան յերկու ամսվա ընթացքում: Այլ կերպ ի՞նչպես կարելի յե մոտենալ այդպիսի խոչըոր խնդիրներին, վորոնց մեջ յեթե անգամ մի տոկոսի սխալ առաջանա, ապա այդ սխալն իր յետեից կտանի 15—20 միլիոն ռուբլի և կարող ե ճեղքվածք առաջ բերել պետական բյուջեյում ու արդյունաբերության մեջ: Այսպիսի հարցը դատարկ, անպատճանատու ռեզուլյուցիաներով չե վճռվում, այլ գործնական աշխատանքով, այդ հարցի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Ապազողիցիայի այդ առաջարկն սխալ եր: Այդպիսի առաջարկների դեմ ապագայում ել կուսակցությունը պետք ե անսուր կորիվ-մղի: Այդպիսի առաջարկն այլ կերպ չի կարելի գորակել, քան գեմագոզիական: Այստեղ հարկավոր ե վորակման ժամանակ կտրուկ լինել, վորպեսզի սրանից հետո յել ցանկություն չնայած խաղալ մեր ամենացալուս վերքերի հետ: Այստեղ չի կարելի թույլ տալ վոչ մի անդատասխանատվություն՝ կուսակցության անդամների կողմից:

ՄԵՐ ԳՈՐԾԱՐԿՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՌՈՒԿ ԿՐՂՄԸ

Ապա յես կուզեյի շոշափել մի այլ հարց—այդ մեր գործազրկության հիվանդու հարցն ե:

Մեզ մոտ հաճախ քաղաքական մեծ ազմուկ են

բարձրացնում նաև գործազրկության հարցի շուրջը՝
Յես ուզում եմ միայն թվել մեր գործազրկության
յուրահատուկայն գծերը, վորոնցով նա զանազանվում
ե Արևմտյան Յեվրոպայի ու Ամերիկայի բոլոր տեսա-
կի գործազրկությունից։ Մեղ մոտ գործազրկություն
կա, չնայած այն հանգամանքին, վոր արդյունաբերու-
թյունն աճում ե և վոչ թե կրամափում, ինչպես Արև-
մտյան Յեվրոպայում։ Չնայած այն հանգամանքին,
վոր աշխատող բանվորների քանակն ուժեղ թափով
աճում է, մեղ մոտ գործազրկությունն ավելանում է։
Նրա առանձնահատուկ գծերն են, առաջինը՝ գերբնակ-
չությունը, յերկրորդը՝ սեղոնային գործազրկությու-
նը։ (Մենք Արևմտյան Յեվրոպայից տարբերվում ենք
բազմաթիվ գծերով. որինակ՝ Անգլիայում կառուցողն
աշխատում և ամբողջ տարին, իսկ մեղ մոտ միայն
ամառվա ամիսներին. հարյուր հազարավոր այնպիսի
մարդիկ, վորոնց քաշել և քաղաքի շինարարության
կատաղի թափը, տարվա մյուս ամիսներին հաշվում
են գործազուրկներ)։ Մեղ մոտ արհմիություններում
հաշվի առած գործազուրկները քանակով ավելի յեն,
քան աշխատանքի բորսայում, բայց դրանք սեղոնա-
յին բանվորներ են, համարյա բացառապես սեղոնային,
վորոնք մի տարի սեղոնային աշխատանք կատարելուց
հետո՝ տվյալ արհմիության մեջ ցուցակագրվում են իբ-
րև գործազուրկներ։ Դրա պատճառը գյուղացիության
գերբնակչությունն է, վորը քաղաք և շպրտում իր
ավելորդ ուժերը։ Հաշվի առնված գործազուրկների
կազմի մեջ նոր յերեսույթը կայանում է նաև հետեւ-
լում. կինը չի ցանկանում լինել իր տան տնտեսուհին—
դուք հասկանում եք, թե ինչու—նա իր աշխատող

ձեռքերը շուկա յի հանում, նա հայտարարում է. «Ե-
վելի լավ և աշխատեմ գործարանում, քանի խոհանո-
ցում տոչորվեմ»։

Այսպիսի բնույթ և կրում մեր գործազրկությունը:
Յեթե մենք գործազրկության ընդհանուր պատկերից
հանենք այնպիսի մի յերեսույթ, ինչպիսին սեղոնային
գործազրկությունն է, յեթե հանենք այն տարբերը, վո-
րոնց մասին յես ասացի, մենք կտեսնենք, վոր մեղ
մոտ գործազուրկ վորակյալ բանվորների թիվը չնչին
է, աննշան։ Յեթե կարելի յե խոսել այն մասին, թե
վորակավորված բանվորների բացակայումների դեմ
կովելու համար մենք վոչինչ չենք կարողանում անել,
տալա այդ բացատրվում ե հենց նրանով, վոր վոչվոր
լավ բացակայությունների պատճառը չի մերժի։ Յես
գիտեմ դեպք, յերբ բանվորը գալիս և վարձվելու և
ասում ե. «Յես կաշխատեմ, իմ աշխատանքը բոլորն
ել տեսել են, բայց թե ներցեք,—յերբ յես բացակա-
յիմ, վոչ մի նկատողություն չանեք»։ Ի՞նչ արած—լավ
բանվոր ե, և վոչինչ անել չես կարող։ Վորակավորված
բանվորների թիվը մեղ մոտ բավարար չի, արդյունաբե-
րական գործազրկություն մեղ մոտ համարյա չկա.
այդպիսի գործազրկությունը մեղ մոտ «անհատական»
գործազրկությունից դենը չի անցնում և հետեւնք և
ներքին, ժամանակավոր վերաբաշխման և այլն ար-
դյունաբերության մեջ, յերբ բանվորները մի գործա-
րանից փոխադրվում են մի ուրիշ գործարան։ Սա նոր-
մալ գործազրկություն է։ Վորակյալ բանվորների, սո-
վորած բանվորների գործազրկությունը չի անցնում
սահմաններն այն գործազրկության, վորն Արևմտյան
Յեվրոպայի համար հաշվվում է նորմալ թվով մոտ 8
տոկոս—իսկ ընդհանուր գործազրկությունը մեծ է։

Վար միություններն ավելի մեծ թվով գործազուրկ անդամներ ունեն: Կառուցողների միությունն ունի 17,8 տոկոս, հողանտառմիությունը՝ 15 տոկոս: Սրանք սեղոնային գործազուրկներ են: Ծառայողներ՝ 12,3 տոկոս, այդ ել շատաների կրծատման հետևանք են: Սննդագործները, վորոնց արդյունաբերության մի մասը նույնպես սեղոնային են, ունեն 7,3 տոկոս անգործներ, լուսաշխար՝ 5 տոկոս միության անդամ անգործներ: Մնացած միությունների գործազուրկների քանակը 5 տոկոսից պակաս եւ:

Վերոհիշյալ հիմնական պատճառները վկայում են, վոր, չնայած աշխատավոր ձեռքերի այն մեծ պահանջին, վոր գոյություն ունի քաղաքներում, մեղ մոտ դեռ մի շարք տարիներ գոյություն կունենա խրոնիկական գործազրկությունը: Բայց չի կարելի ասել, վոր մեր գործազրկությունը հավասար են, կամ համեմատական չափով հավասար են, կամ նման ե Արևմտյան Յեղրոպայի գործազրկությանը:

Յես ուզում եյի շոշափել ելի մի հարց: Սխալ են պատկերացնում, թե գյուղի շերտավորման հետևանքով քաղաք և հոսում միայն գյուղի չքավորությունը: Յես կարծում եմ, վոր դա սխալ և չհիմնավորված մի յեղրակացություն եւ: Յեթե դուք զննեք մեր ժամանակակից գյուղը, կտեսնեք, վոր գյուղական յերիտասարդությունն այս վերջին տարիներս կուլտուրապես բարձրացել եւ: Գյուղն իր հին կենցաղով՝ «զանգակատնից մինչև շրջակայթը», չի բավարարում ժամանակակից գյուղական յերիտասարդությանը, և նա ձգտում է քաղաք՝ պատրաստ լինելով հանձն առնել ամեն տեսակի աշխատանք: Դրանք ամեն դեպքում չքավորներ չեն.

Դրանք մեծ մասամբ միջակներ են. կան և ունենոր գյուղացիների զավակները: Յես հավատացած եմ, վոր յեթե քաղաք յեկած գյուղացիության անկետային հետազոտություն կատարենք, կտեսնենք, վոր հետազոտության թվերը հավասար չափով են անդրադարձնում գյուղի սոցիալիստական կազմը:

Առանձին տեղ ե զրավում յերիտասարդության գործազրկության հարցը: Յերիտասարդության մեջ յեղած գործազրկությունը վտանգավոր բնույթի և ընդունում, և այն գլխավորապես բանվորների գավակների շրջանում: Յես կարծում եմ՝ իվանովություննեցիները լավ գիտեն, թե վորպիսի ցավոտ խնդիրը և բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում գտնվող անշափահասների և մեծահասակների հարցը, վորոնց չգիտենք ինչ անենք, վորոնց արդյունաբերության մեջ ոգտագործել հնարավոր չի:

ԿՌԻՎ ԽՈՒԽԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՅԵՎ ԱԿՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ

Յես կարծում եմ այդ հաշցն ավելի սուր եւ հիվանդություն այժմ, յերբ անապաստանությունը դեռ վերացված չե, յերբ ջանել տղան գպրոցից գուրս զալով չի ընկնում գործարան, այլ մնում է փողոցում և գուրս և մնում բանվորների աղղեցության շրջանակից: Իսկ ինչ ձեռվ է զրված մեր աշխատանքը: Կուսակցական աշխատանքը կատարվում է արտադրական գծով, ձեռնարկություններում՝ բանվորների մեջ. կոմյերիտմիությունը նույնպես արտադրական պրինցիպով ե աշխատում, արճմիությունները նույնպես, իսկ

Վար միություններն ավելի մեծ թվով գործադրություն անդամներ ունեն: Կառուցողների միությունն ունի 17,8 տոկոս, հողանտառմիությունը՝ 15 տոկոս: Մրանք սեղոնային գործազուրկներ են: Ծառայողներ՝ 12,3 տոկոս, այդ ել շտաների կրծատման հետևանք են: Սննդագործները, վորոնց արդյունաբերության մի մասը նույնական սեղոնային ե, ունեն 7,3 տոկոս անգործներ, լուսաշխը՝ 5 տոկոս միության անդամ անգործներ: Մնացած միությունների գործազուրկների քանակը 5 տոկոսից պակաս ե:

Վերոհիշյալ հիմնական պատճառները վկայում են, վոր, չնայած աշխատավոր ձեռքերի այն մեծ պահանջն, վոր գոյություն ունի քաղաքներում, մեզ մոտ դեռ մի շարք տարիներ գոյություն կունենա խրոնիկական գործազրկությունը: Բայց չի կարելի ասել, վոր մեր գործազրկությունը հավասար ե, կամ համեմատական չափով հավասար ե, կամ նման ե Արևմտյան Յելրոպայի գործազրկությանը:

Յես ուզում եյի շոշափել ելի մի հարց: Միայ են պատկերացնում, թե գյուղի շերտավորման հետևանքով քաղաք և հոսում միայն գյուղի չքավորությունը, Յես կարծում եմ, վոր դա սխալ և չհիմնավորված մի յեղակացություն ե: Յեթե զուք զննեք մեր ժամանակակից գյուղը, կտեսնեք, վոր գյուղական յերիտասարդությունն այս վերջին տարիներս կուլտուրական բարձրացել ե: Գյուղն իր հին կենցաղով՝ «զանգակատնից մինչև շրջակայքը», չի բավարարում ժամանակակից գյուղական յերիտասարդությանը, և նա ձգտում ե քաղաք՝ պատրաստ լինելով հանձն առնել ամեն տեսակի աշխատանք: Դրանք ամեն դեպքում չքավորներ չեն:

Պրանք մեծ մասամբ միջակներ են. կան և ունենոր գյուղացիների զավակներ Յես հավատացած եմ, վոր յեթե քաղաք յեկած գյուղացիության անկետային հետազոտություն կտեսնենք, կտեսնենք, վոր հետազոտության թվերը հավասար չափով են անդրադարձնում գյուղի սոցիալիստական կազմը:

Առանձին տեղ ե զբավում յերիտասարդության գործազրկության հարցը: Յերիտասարդության մեջ յեղած գործազրկությունը վտանգավոր բնույթ և ընդունում, և այն գլխավորապես բանվորների զավակների շրջանում: Յես կարծում եմ՝ իվանովով վորնեսենցիները լավ գիտեն, թե վորպիսի ցավոտ խնդիր ե բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում գտնվող անշափահանների և մեծահասակների հարցը, վորոնց չգիտենք ինչ անենք, վորոնց արդյունաբերության մեջ ոգտագործել հնարավոր չի:

ԿՐԻՊ ԽՈԼԻՔԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՅԵՎ ԱԿՄԲԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յես կարծում եմ՝ այդ հաշցն ավելի սուր ե և հիվանդությամբ, յերբ անապաստանությունը գեռ վերացված չե, յերբ ջահել տղան գպրոցից դուրս զաւով չի ընկնում գործարան, այլ մնում ե փողոցում և դուրս ե մնում բանվորների աղդեցության շրջանակից: Իսկ ի՞նչ ձեռք ե զրված մեր աշխատանքը: Կուսակցական աշխատանքը կատարվում ե արտադրական գծով, ձեռնարկություններում՝ բանվորների մեջ. կոմյերիտմիությունը նույնպես արտադրական պրինցիպով ե աշխատում, արհմիությունները նույնպես, իսկ

ձեռնարկություններից գուրս դանվող և դյուզի յերիտասարդությունը մնում է մեր ուշադրության սահմաններից գուրս: Ակումբները նրա առաջ փակ են, այս և վտանգավոր, սոցիալապես վնասակար տարրերի մի վորոշ մասի առաջ գալու պատճառը, այս և խուլիգանության մի վորոշ հոսանքի առաջ գալու պատճառը, վորի մասին (խուլիգանության հոսանքի), ի միջի այլոց, պետք և այսաեղ ասել, վոր չափազանց ուսուցրած եւ Ուսուցրած և ծիծաղելիության չափ, հասցրած և կուրյողի: Խսկապես՝ լուն ուղա են շինել: Անկառկած՝ խուլիգանության տարրեր նկատվում են պրոլետարական թաղերում, այն բանվոր յերիտասարդության մեջ, վորն ապրում է ծայրամասերում, վորը կենցաղական տեսակետից գեռ չի կազմակերպվել ու արտադրությունից գուրս և գտնվում: Այդ յերիտասարդությունն իր յետեկոց քաշ և տալիս գործարանային յերիտասարդության մի մասին և մինչև իսկ կոմյերիտականներին: Վոր այդ յերեսույթը գոյություն ունի և վոր նա վտանգուվոր ե՝ զա փաստ ե: Բայց այսաեղ հարցն այնպես են ուսուցրել, այնպիսի աղմուկ են բարձրացրել և այնպիսի սոցիալական գունավորում են տվել, վոր յերբ յես կարդացի և լսեցի այն մասին, թե ինչ են խոսում խուլիգանության մասին, ինչպիսի մեծ աղմուկ կա դրա շուրջը, ճիշտ եմ ասում, վոչ միայն իմ մեջ, այլ յես կարծում եմ, ինչ բանվորներից շատերի մեջ շարժվեց մի տեսակ հին, բանվորների համար վիրավորական զգացմունք: (Զայն, «Бросить гайко!»): Դե, տեսեք, ամենալավը, ինչ վոր կա Խորհրդային Ռուսաստանում, պրոլետարիատ՝ աշխարհի ամենալավ դասակարգը, մի դասակարգ, վո-

րին վիճակված և աղատել մարդկությունը, և հանկարծ, համեցեք, բոլոր լրագրներում, բոլոր հրատարակներում գոսում են: «Խուլիգանության հոսանքը խեղում և բանվոր դասակարգին, տեսեք, հիացեք, ես ել ձեղ բանվոր դասակարգը»: Զե վոր մեզ մոտ ուրիշ խավեր ել կան. կան նեղմաններ, կան բարձր ինտելեկտական խավեր, միթե նրանք խուլիգանություն չեն անում: Ել լուչպիսի արարքներ ասես, վոր չեն վերագրում խուլիգանության: Ստացվել ե մի այսպիսի պատկեր. «Մտիք արեք, հիացեք, ահա ձեղ բանվոր դասակարգը, ահա ձեղ մարդկության աղատության գաղափարակիրը»: Խսկ բուրժուազիայի և կիսաբուրժուազիայի մասին, վորոնք խուլիգանություններ են անում զինետներում և ուրիշ տեղեր, նրանց մասին վոչ մի տեղ, վոչ ձայն են հանում, վոչ ծպտուն: Ահա ձեղ իվանովով-Վոզնեսենսկի «Ծարոչի Կրայ» թերթը: Այդ թերթում տպագրվում են վոճառագործների լուսանկարներ: Յես մտածում եմ, վոր մարդուն նրա կատարած վոճիրների համար ավելի մեծ պատիժ կարելի յե տալ. բայց տպագրել մեկի պատկերը վոչ նրա համար, վոր հասարակական դրամներ և գողացել կամ նման մի ստոր գործ ե կատարել—սա, արդեն, յես մտածում եմ, վոր լավ չի: Ահա ձեղ առաջին նկարը. «Զ., 25 տարեկան, սանագործների այգու հըսկիչ: Խուտարովլյում խանդարում եր զըսնողներին և կովի յեր բռնվում»: Յեկ ահա, տեսեք նրա պատկերը: Ահա և ուրիշ պատկերներ, վոր տպագրված են. բոլորն ել բանվորներ են. բոլորի մանը թերություններն ել հարբեցողության հողի վրա:

Ապա՝ միւնույն թերթում մենք կարդում ենք. «Գոր-

ձեռնարկություններից գուրս դանվող և զյուղի յերիտասարդությունը մնում և մեր ուշադրության սահմաններից գուրս Ակումբները նրա առաջ փակ են, այս և վտանգավոր, սոցիալապես վասակար տարրերի, մի վորոշ մասի առաջ գալու պատճառը, այս և խուլիգանության մի վորոշ հոսանքի առաջ գալու պատճառը, վորի մասին (խուլիգանության հոսանքի), ի միջի այլոց, պետք եւ այսակա ասել, վոր չափազանց ուսցրած եւ Ուսցրած և ծիծաղելիության չափ, հասցրած և կուրյողի: Խոկապես՝ լուս ուղտ են շինել: Սնկասկած՝ խուլիգանության տարրեր նկատվում են պրոլետարական թաղերում, այն բանվոր յերիտասարդության մեջ, վորն ապրում և ծայրամասերում, վորը կենցաղական տեսակետից դեռ չի կաղմակերպվել ու արտադրությունից դուրս և գտնվում: Այդ յերիտասարդությունն իր յետեից քաշ և տալիս գործարանային յերիտասարդության մի մասին և մինչև իսկ կոմյերիտականներին: Վոր այդ յերեսույթը գոյություն ունի և վոր նա վտանգավոր և՝ դա փաստ ե: Բայց այստեղ հարցն այնպես են ուսցրել, այնպիսի աղմուկ են բարձրացրել և այնպիսի սոցիալական գունավորում են տվել վոր յերբ յես կարգացի և լսեցի այն մասին, թե ինչ են խոսում խուլիգանության մասին, ինչպիսի մեծ աղմուկ կա դրա շուրջը, ճիշտ եմ ասում, վոչ միայն իմ մեջ, այլ յես կարծում եմ, հին բանվորներից շատերի մեջ շարժվեց մի տեսակ հին, բանվորների համար վիրավորական զգացմունք: (Զայն «Бросить гайкой»): Դե, տեսէք, ամենալավը, ինչ վոր կա Խորհրդային Ռուսաստանում, պրոլետարիատը՝ աշխարհի ամենալավ դասակարգը, մի դասակարգ, վո-

րին վիճակված և ազատել մարդկությունը, և հանկարծ, համեցեք, բոլոր լրագրներում, բոլոր հրապարակներում վռոււմ են. «Խուլիգանության հոսանքը խեղդում և բանվոր դասակարգին, տեսէք, հիացեք, ես ել ձեղ բանվոր դասակարգը»: Զե՞ վոր մեզ մոտ ուրիշ խավեր ել կան, կան նեպմաններ, կան բարձր ինտելիգենտական խավեր, միթե նրանք խուլիգանություն չեն անում: Ել Բնչպիսի արարքներ ասես, վոր չեն վերագրում խուլիգանության: Ստացվել և մի այսպիսի պատկեր. «Մտիք արեք, հիացեք, ահա ձեղ բանվոր դասակարգը»: ահա ձեղ մարդկության ազատության գաղափարակիրը: Իսկ բուրժուազիայի և կիսաբուրժուազիայի մասին, վորոնք խուլիգանություններ են անում զինչետներում և ուրիշ տեղեր, նրանց մասին վոչ մի տեղ, վոչ ձայն են հանում, վոչ ծպտուն: Ահա ձեղ իւլանովուղովնեսնսկի «Խարոչիյ Կրայ» թերթը: Այդ թերթում տպագրվում են վոճակործների լուսանկարներ: Յես մտածում եմ, վոր մարդուն նրա կատարած վոճիրների համար ավելի մեծ պատիժ կարելի յետալ. բայց տպագրել մեկի պատկերը վոչ նրա համար, վոր հասարակական դրամներ և գողացել կամ նման մի ստոր գործ և կատարել—սա, արդեն, յես մտածում եմ, վոր լավ չի: Ահա ձեղ առաջին նկարը. «Զ., 25 տարեկան, մանագործների այգու հըսկիչ: Խուտորովոյում խանդարում եր զրոսնողներին և կովի յեր բռնվում»: Յեկան, տեսէք նրա պատկերը: Ահա և ուրիշ պատկերներ, վոր տպագրված են. բոլորն ել բանվորներ են. բոլորի մանր թերություններն ել հարբեցողության հողի վրա:

Ապա՝ միենույն թերթում մենք կարդում ենք. «Գոր-

ծարաններում և զավոդներում խուլիկաններին պիտի բոյկոտ հայտարարել: Նրանք արհամարհանք կդառնեն բանվորական ընտանիքում»: Ի՞նչ գործերի համար: Ի՞նչ են արել այդ մարդիկ: Միթե նրանք այդքան ծանր վոճար են կատարել: Որինակ՝ «Յեգորով Պ. Կ., 26 տարեկան, Զիժով Պ. Դ., 44 տ., ազատ վարձվող ատաղձագործներ—վուղոցում յերգում ելին»: «Դործարաններում և զավոդներում նրանց պետք ե բոյկոտ հայտարարել: Նրանք արհամարհանք պիտի դանեն բանվորական ընտանիքում»:

Ահա ձեզ մի լրագիր՝ «Պրիզայ», հրատարակվում է վաղիմիրի նահանգում: Յես կկարգամ, ընկերներ, այդ լրագրից մի հետաքրքիր փաստաթուղթ, վորպեսզի հասկանալի լինի, թե ինչն են մեզ մոտ հաշվում խուիզանություն: Այդ մեծ խնդիրը, վորով զբաղվում են մեր բոլոր լրագրները, այսպիս ե ձեակերպվում խուլիգանության դեմ կոիվ մղելու կոչված աղմինիստրատորի ուղեղում: «Վաղիմիրի նահանգի տերթիստրիայի վրա խուլիգանության դեմ կոիվ մղելու նպատակով, նահանգական աղմինիստրատիվ բաժնի կողմից մշակված և պարտագիր վորոշումների մի ծրագիր, վորով արգելվում են»... Ի՞նչ եք կարծում, ի՞նչը... «կոիվելը և անդգամության նպատակով առաջացրած աղմուկը, գոռզոսոցը, յերգն ու յերաժշտությունը վողոցներում և մասնավոր աներում՝ յերեկոյան ժամը 10-ից հետո»: (Ծիծաղ): Յերկրորդ,—«Արգելվում ե հասարակական ողտագործման տեղերում պայթուցիկ ապարատներ դցելը (ծիծաղ), ինչպիս նաև հրազեններից և պուգաչներից կրակելը»: (Ծիծաղ): Յես ամրոցը չեմ կարգա, քանի վոր շարունակությունն ել կաղմված և նույն

վորով: (Չայնիր. «Կարգացեք, կարգացեք»): «...ինչպես և հրազեններից և պուգաչներից կրակելը բնակության վայրերի սահմաններում կամ մարդկանց կուտակման վայրերում, յեթե այդ ինքնապաշտպանության նպատակներից չի ըդխում...» (Ծիծաղ): «Արգելվում են հասարակական վայրերում ամեն տեսակի անամոթ արարքները, ինչպիս, որինակ, տարբեր սեռի լողացողներին մոտենալը: (Ծիծաղ): «Հասարակության մեջ հայնոյական, անթույլարեկի բառեր արտասանելը, առանձին քաղաքացիների անձի դեմ ողղված անզգամ, խուլիգանական արարքները, կամ մեկի յետեից ընկնելը հասարակական վայրերում»: Ինչպիս յերեսում ե, վոչ հասարակական վայրերում այդ ամենը կարելի յի: (Ծիծաղ): «Անցորդներին դիտավորյալ անզգամության նպատակով հրելը, կամ ճիպոտով հարվածելը»: (Ծիծաղ): «Մայթերի վրայով խմբովին անցնելը և զիտավորյալ կերպով անցորդների ճանապարհը կտրելը. անցորդների վրա ջուր ցանելը, ցեխ շպրտելը կամ թքելը, ինչպիս և ձնագունդ նետելը. անցնող անասուններին քարով կամ ուրիշ առարկաներով խփելը»: (Ծիծաղ): Ահա թե, ընկերներ, ինչպիս և խուլիգանության եյությունը ձեակերպվում խորհրդային միքանի աղմինիստրատորների լրագրային աղմուկներից մթացնած ուղեղներում:

Յես համոզված եմ, վոր, բառի ամենավատ իմաստով, որիվատելները այդ բանը մեծ բավականությամբ կհոլովեն: Իսկ մինչդեռ՝ զա ի՞նչ խուլիգանություն ե: Յես համոզված եմ, վոր այնքան, ինչքան վոր այժմ գրում են բոլոր լրագրներում մի շաբաթվա ընթացքում, այդ ամենը հեղափոխությունից առաջ կարելի

յեր տեսնել միայն մի շաբաթ որվու կամ կիրակի որվա
մեջ՝ յուրաքանչյուր բանվորական այսում (վերցնենք
թեկուղ հենց Պիտերի կամ Նարվայի սայոնում): Առաջ
մենք յերեք զրա վրա ուշագրություն չենքնք դար-
ձընում: Իսկ այժմ, տեսնում եք, մի նոր Ամերիկա յին
դտել, դտել են, վոր ուսւ բանվորը խմում, և, վոր
հարբածը յերգեք ե յերգում, յերեմն ել մի լավ որ հ-
նում ե՝ ծնողների մասին ակնարկներ անհլով: (Ծիծաղ):
Ահա այս ամբողջը խառնում են խուլիգանական
արարքների հետ, համազոր են դարձնում բոնարարու-
թյանը, հրձիգությանը և այլն:

Վերջերս կարելի յեր մի հետաքրքիր պատկեր տես-
նել Մոսկվայի ակումբներից մեկում: Բռնել եյին յեր-
կու «խուլիգանների» և հենց տեղնուտեղը, ակում-
բում, կազմակերպել նրանց գլխին հասարակական դատ:
Նստեցրին պաշտպան ու դատախազ: Ինչի՞ մեջ եյին
մեղադրում նրանց: Մեկին մեղադրում եյին նրա հա-
մար, վոր նա դասախոսության ժամանակ քաշել ե իր
առջեռում նստած մի աղջկա ծամերից: Յեվ զրա համար
նրանց գլխին հասարակական դատ սարքեցին: Նրանք
ապուշի նման կանգնել եյին և աչքերն եյին թարթում:
Շատ հաճախ յերեխայական, մանկական չարաճճու-
թյունները, վորոնց համար պետք եր ընկերաբար թե-
թենէատոլություն անել, հավասարեցնում են խուլիգա-
նության: Դրան հարկավոր ե վերջ տալ: Այսուղ մենք
պիտի անինա կոիվ հայտարարենք այն խուլիգանու-
թյանը, վորն իրենից վտանգ ե ներկայացնում, վորն
անապաստանության և գործազրկության պայմաննե-
րից ե բղխում և ծագում ե անտեսական կացությու-
նից: Մենք պետք ե անողոք կոիվ հայտարարենք նա-

և անապաստանությանը, վրան պետք ե վերջ տանք:
Յես կարծում եմ, վոր մենք վատ ենք կոիվ մղում
անապաստանության դեմ: (Զայներ. «Ճիշտ ե»): Մենք
այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի 9-րդ տարում,
պետք ե մեղ նպատակ դնենք, վոր պրոլետարիատի
դիկտատուրայի 10-րդ տարում անապաստանությանը
վերջ դրված լինի: Մենք կարող ենք և պետք ե բոլոր
միջոցները ձեռք առնենք, վորպեսզի վերջ տանք այդ
յերկութիւն, յերբ անչափահասները, և նույնիսկ ավե-
լի սարսափելին, յերբ մեծահասակները բանվորների
դավակները, վորոնք չեն կարողանում իրենց աշխա-
տանքը գործադրել արտադրության մեջ, վորոց են
նետվում: Մենք փողոցում գտնվող այդ յերիատար-
դությանը պետք ե ներգրավենք բանվորական կազ-
մակերպությունների ազգեցության շրջանակը, բան-
վորական ակումբները: Մենք պետք ե բանվորական
ակումբները, այդ ակումբների աշխատանքն ավելի
ընդարձակենք և դարձնենք ավելի ազատ: Ի՞նչ տեսա-
կետից ընդարձակ և ազատ: Մեզ մոտ հաճախ կուլո-
աշխատանքների վերաբերյալ շատ են չափազանցու-
թյան համարում:

Վերցնենք, որինակ, ֆիզկուլտուրան: Յերբ վոր
մեզ մոտ սկսեցին ֆիզկուլտուրայի գործը՝ սպորտսմե-
նության և ուկուրդսմենության դեմ կային շատ հա-
կառակ տրամադրություններ: Յես բանվորական ֆիզ-
կուլտուրայի զարգացման համար մարտնչողներից
վերջինը չեցի: Բայց յես առաջինն եյի, վոր հարց դրի,
թե այդ ֆիզկուլտուրան շատ մեքենայորեն են սկսել
դորձագրել: Միենույն ֆիզկուլտուրան են առաջար-
կում թե բարձող բանվորին, վորն ամբողջ որը ծան-

բություններ և քաշ տվել, թե խորհրդային ծառայուզին, փորն ամբողջ որը չի մարդկել իր մկանները: Այժմ, այդ սխալ համարելով, սկսել են փայտը թեքել հակառակ ուղղությամբ: Բոլորն ել սկսել են զբաղվել Փիդկուլտուրայով և բոլորն ել շարժումները բարեկարգող գծով: Այժմ ել այնպես արեցին, վոր մարդ չի կարողանում շունչ քաշել: Վոչ մի ուրիշ տեսակի Փիդկուլտուրա չի կարելի գործադրել. պարապիք միայն շարժումների բարեկարգումով՝ զարյակոյ, բարյակոյ: Իսկ յես, որինակ, չեմ ուզում զբաղվել զարյակոյ, բարյակոյ, կօրրացած հետո ի՞նչ: (Ծիծաղ): Միթե կարելի յե այդպիս մոտենալ: Դա կարինետային մոտեցում ե: Ինչի վոր ձեռք և զարկում, չափազանց վում ե և գործն այնտեղ և հասցվում, վոր ել չես կարողանում դիմանալ: Յեկ սկսվեց պայքար ոեկորդամենության, սպորտամենության դեմ: Իհարկե, կարող և պատահել, վոր հազար մարդու համար սպորտամենությունը, ոեկորդամենությունը պետք չի ու մինչեւ լսկ վնասակար ե, բայց այդ հազար մարդու մեջ կա աշխուժ տեմպերամենաի, ուժեղ մկանների տեր ծ մարդ, վորոնց պետք և սպորտամենություն, ոեկորդամենություն, նրանք վորեն տեղ պետք և գործադրեն իրենց ուժը, թող նրանք ել զբաղվեն ոեկորդամենությամբ:

Ստիպում են յուրաքանչյուրին անել այնպիս, ինչպիս մեղ ցանկալի յե, ինչպիս մենք կարինետում մտածել ենք: Բայց չե՞ վոր գրանք կենդանի մարդիկ են, մինչդեռ նրանց վրա փորձեր են կատարում, կարծիս նրանք ճադարներ լինեն: Պետք ե, իհարկե, հաշվի առնել, թե ի՞նչն ելավ, բայց պետք ե հաշվի առնելնակե

այն, թե ինչ ե ցանկանում տվյալ մարդը: Հարկավոր ե կուլտուրան բարձրացնել հետղնետե, վոչ միանգամից, վերցնելով մարդկանց այնպես, ինչպիս նրանք կան իրականում, և վոչ թե պատկերացնելով նրանց այնպես, ինչպիս մենք ցանկանում ենք, վոր լինեն: Կուլտուր-կրթական աշխատանքի բոլոր բնագավառներում, ինչպիս և այստեղ, հարկավոր ե առաջնադաշտում: Քանի անգամ ինձ մեղաղը ել են ոպլորտյունիդմի մեջ նրա համար, վոր յես քարոզել եմ (ո, սարսափ) բանվորական ակումբներում կազմակերպել պարեր: Յեկ հույժ առաքինի և ուղղափառ կոմյերիտականուներն ու կոմյերիտականուներն ինձ մի տոմո եյին գրել. «Զեք ամաչում, ընկ. Տամսկի, վոր պաշտպանում եք այնպիսի բաներ, ինչպիսին պարերն են»: Իսկ յես գիտեմ, վոր հենց այդ առաքինի յերիտասարդությունը գնում ե քաղաքի ծայրամասերում գտնվող բանվորական թաղերը՝ մի ինչ-վոր մորաքույր Դարյայի կամ Մարիայի մոտ, այնտեղ ոենյակ և վարձում և վարդուրելով պատուհանները, կողմանակի հայացքներից հեռու այնպիսի կատաղի մի պար և սարքում, վոր փոշին յերկինք և հասնում: Յես կարծում եմ, ավելի լավ ե, թող բանվորական ակումբում պարեն:

Վո՞րն ելավ, —դասակարգային դաստիարակության կուլտուր-կրթական քաղաքականությամբ զբաղվել, թե պարել: Իհարկե, քաղաքական դաստիարակությամբ զբաղվելն ավելի լավ ե, բայց կարող ե բանվորը զիմանալ, յեթե ութմայուա աշխատանքից հետո նրա զլուխն ամեն որ լցնեն դասախոսություններով: Զի կարող: Առանձին մարդիկ, իհարկե, կարող են, բայց փորձել շրջանակների մեջ առնել այն բոլորը, ինչ վոր

կենդանի շունչ և կըում, հնարավոր չի: Հարկավոր և կոփի հայտարարել դատարկ, մեռած իզեալներին և աշխատանքի այդպիսի անչունչ մեթոդներին:

Յեթե մենք կարողանանք ճիշտ մոտենալ մասսային և ամեն մի բանվարին, մասնավորապես, յեթե կարողանանք կոփի հայտարարել անապաստանության դեմ, հաջողությամբ կարողանանք բանվոր յերիտասարդության գործազրկության դեմ կոփի տանել,—քաշել այդ յերիտասարդությանը ակմբային աշխատանքի աղղեցության ըրջանակը—ակմբային աշխատանքն այնպես հարժարեցնել, վոր յուրաքանչյուրը կարողանա իր տեմպերամենտի և առանձնահատկություններին համապատասխան բավականություն և կուլտուրական աշխատանք գտնել, մեր խնդիրը լուծված կլինի:

Ահա, որինակի համար, եքսկուրսիաները դեպի թանգարանները: Նրանք շատ լավ են, հիանալի յեն և այլն գարան թանգարան չեմ սիրում: Յես ամեն տեղ յերայց յես թանգարան չեմ սիրում: Յես ամեն տեղ յերայց յես թանգարան, յես ձեզ կասեմ,—յես ցանկանում եմ զորսի գնալ: (Ծիծաղ): Զի կարելի բոլորին մի արշինով չափել: Եքսկուրսիա դեպի թանգարան՝ շատ լավ, իսկ ուրիշ եքսկուրսիաները: Իսկ դուք փորձեք ուրիշ մեթոդներ, ուրիշ ձեռք գտնել յերիտասարդությունը դեպի պեղետարական հասարակայնությունը և դեպի կուլտաշխատանքը գրավելուհամար այնպիսի մեթոդներ վորոնք համապատասխան լինեն առանձին մարդկանց վորոնք համապատասխան լինեն առանձին մարդկանց մեթոդների վարույթյան գծերին, տեմպերամենտաներին, մկանների վարույթյան գրագացմանը և այլն: Այդ մեթոդները պետք են վնասուել:

Յես այժմ, շատ հակիրճ, կանգ կառնեմ կուսակցությունը և արհմիությունները հարցի վրա: Այստեղ, յես կարծում եմ, այդ մասին շատ խոսելու կարիք չկա: Մենք կարող ենք հավասարել, վոր կուսակցական բարձը որդանների ու արհմիությունների փոխարարերություն, վորոշ բարելավում: Նահանգներում մենք ունենք վորոշ բարելավում, բայց վոչ ամենուրեք: Յես, գժբախտարար, պետք են հավասարել, վոր XIV կուսակցական համագումարի վորոշումների կերպարման գործը նահանգներից ներքեւ շատ գենը չի գնացել: Մեր գժբախտությունը կայանում է նրանում, վոր մենք, այդ տեսակետից, դեռ չենք կարողացել վերադաստիարակել մեր կուսակցական կազմակերպությունների ստորին ողակները: Այդ խնդիրը թեղիներում բավականին պարզուացված է: Յես կարծում եմ, վոր կոնֆերենցիան դրան կարող են պետք են համաձայնի:

Վերջին հարցը՝ միջազգային հարցն են Յես, ընկերությանի ձառից հետո, առանձնապես յերկար կամ չեմ առնի գրա վրա: Ընկեր Բուխարինի զեկուցման հետ յես ամբողջությամբ և լիովին համաձայն եմ: Յես պետք են միայն արդարացնեմ իմ թեղիներից մեկը, վորի վերաբերյալ ոպպոզիցիայից միքանի ընկերներին ճանաչ ասել են, վոր իրը յես նրանց համարյա իզուր տեղն եմ հայնոյել, բայց դե, չե վոր նրանց հիշողությունը վատ են: Յես ցանկանում եմ կանգ առնել անգլոռուսական կոմիտեյի հարցի վրա: Ի՞նչ ե առաջարկելու պայողիցիան: Ինչումն ե կայանում նրա առաջար-

կությունը։ Խղել կապերը անզլուռուսականն կոմիտեի ինեաւ ինչու։ Հեղափոխական ժեստ անհել, վորակեսղի բոլորը հասկանան և այլն։ Զի կարելի նստել գավաճանների հետ միասին։ Իսկ յիս ասում եմ. տվյալ պայմաններում հարցն այդ ձեռվ դնելը մեզ այնտեղ չի տանում, դեպի ուր պետք ե ուղղենք մեր յեղբայշրական կոմմունիստական կուսակցությունների ուշադրությունը։ Նա չի տանում մասսաներին դեպի արհմիությունները ներգրավելը, նա չի տանում դեպի կորվ արհմիությունների միջոցով, այլ տանում ե նրանց կողքով՝ արդարացնելով մասսաների արհմիություններից հեռանալը, արդարացնելով թքելու տրամադրությունը արհեստակցական միությունների նկատմամբ։ 1907 թվին ել մեզ առանձնապես հաճելի չեր նստել գավաճանների հետ միասին, յերբ մենք ամբողջ ժամանակ մնում ելինք յեղակի, յերբ տպագրիչների գարչության մեջ իմ կողքին նստած ելին մենշևիկներն ու եսերները. հենց ուզում եյի վեր կենալ ու փախչել այնտեղից։ Սիրոս ինձ թելազրում եր.՝ չեմ ուզում գավաճանների հետ նստել. յերբ ել վոր ձեռք բարձրացնեյի, միենույն եր, փոքրամասնության մեջ եյի մնում. Բայց թնչ արած, մասսաներին հասնելու ուրիշ ճանապարհ չկար, ճանապարհը միայն այդ եր, Մեր կոմմունիստական կուսակցության ձեակերպումը պետք ե լինի այսպես. «Արհմիությունների միջոցով կնվաճես մասսաներին»։ Իսկ թնչ մեթոդով. Այն մեթոդով, վորի մասին այնպես պարզ խոսեց ընկ. Բուխարինը, և վորի մասին յես խոսեցի Կոմիտերնի ընդլայնած պլենումում, վորտեղ իմ դեմ վոչվոք չտարկեց. այնտեղ յես մատնանշեցի, վոր

կոմմունիստական կուսակցությունների անելիքը պիտի լինի այն, վոր նրանք սկսեն գալ գեալի արհմիությունները՝ ինչպես գործունյա աշխատողներ, վորոնք գնում են լուրջ աշխատելու։ Իմ միտս ե գալիս, թե ինչպես մենք, բայց եթիկներու 1907 թվին եյինք գնում դեպի արհմիությունները։ Ոյազանովը յերեխ այդ կէիշել, գալիս եյինք արհմիությունները և սկսում հենց այստեղից.՝ Լոնդոնի համագումարը վորոշեց, վոր կուսակցությունն ու միությունները. Իսկ մեզ ասում եյին.՝ կորեք, հեռացեք։ Մենք 1907 թվին փոխեցինք ֆրոնտը և գնացինք աշխատելու արհմիություններում. ուսումնասիրեցինք տարիքային ցանցերը և այլն, և 1909 թվին արգեն ունեյինք նկատելի հաջողություններ և գրավել եյինք մի շարք միությունների վարչությունները։ Մինչև հիմայել գեռ Արեմոյան Յեվրոպայի միություններում մեր ընկերները խոսում են Դաւեսի ծրագրի մասին և այլն։ Այստեղից են բղխում այն յերեսույթները, վորոնց մասին խոսում ե ընկեր Բուխարինը, Մասսան քաղաքականապես վստահելով կոմմունիստականներին, իր արհեստակցական շահերի պաշտպանությունը չի վստահում նրանց. իսկ յերբ գործը համում ե ամենորյա անտեսական կովին՝ նախապատվությունը տալիս ե սոցիալ-դեմոկրատներին. Այս ասում են, ընկեր կոմմունիստներ, դուք միշտ զբաղվում եք Դաւեսի ծրագրով և այլն, իսկ մինչդեռ տարիքային ցանցի խնդրով, կոլեկտիվ պայմանագրերի խնդրով չեք զբաղվում, զբա մասին չեք մտածում։ Պետք ե հիշել, վոր կոմմունիստները կկարողանան նվաճել արհմիություններն այն ժամանակ միայն, յերբ այնտեղ կոկսին շաբթային աշխատանք կատա-

բել, ուսումնասիրել այդ աշխատանքն սկզբից մինչև
վերջը, յերբ կկարող սնան իրենց գործնական աշխա-
տանքով նվաճել մասսաներին, արժանանալ նրանց
վստահությանը։ Աչա թե ինչպիսի աշխատանքների
պետք ե քաշել յեղբայրական կոմմունիստական կու-
սակցություններին։ Յեթե այդ ժամանակ շպրտում
են՝ «Քանի վոր նրանք դավաճաններ են, մենք չենք
ուղղում նրանց հետ մի տեղ նստել» լոգունքը և ասում
են, «վոր իրր թե զա մի հեղափոխական ժեստ ե, վորը
կհասկանան ամբողջ աշխարհի բանվորները, ապա
մենք նրանց ասում ենք, վոր այդ ազդանշան ե, վորը
բանվորները դուրս գան արհմիություններից, այդ
ազգանշան ե ամեն ինչի վրա թքելու համար։ Յես
պնդում եմ, վոր կոնֆերենցիան ել պետք ե այդ հաս-
տատի։

Յես կարծում եմ, ընկերներ, վորպեսզի ամփոփինք
ընդհանուր արդյունքները, պիտի հարց տանք։ — Կա-
տարել ենք մենք արդյոք ամեն ինչ, կենսագործել
ենք արդյոք այն հրահանգները, վորը մեզ տվել ե XIV
կուսակցական համագումարը արհմիությունների վե-
րաբերյալ։ Մենք պետք ե պատասխանենք, վոր իրա-
կանացվել են վոչ բոլոր հրահանգները։ Զեռնարկել
ենք իրավործելուն։ Զեռնարկել ենք, Ունենք արդյոք
հաջողություններ այդ ուղղությամբ։ Ունենք կան
արդյոք թերություններ։ Թերություններ նույնպես
ունենք։ Յեղբակացությունը. այդ թերությունների
դեմ պիտի կովենք. իսկ մենք, ձեզ հետ միասին այս
միքանի տարվա ընթացքում քիչ բան չենք արել.
Ինչ ել վոր ասեն, ինչպես ել վոր մենք ու մեր հա-
կառակորդները քննադատենք կատարված աշխատան-

քը, անուրանալի յե, վոր մենք Խորհրդային իշխանու-
թյան իննը տարվա ընթացքում ստեղծել ենք աշխար-
հում նմանը չունեցող կենտրոնացված, ներդաշնակ
զորեղ արհեստական մի շարժում, վորն ունի մոտ
2 միլիոն ստորին ակտիվ։ Կարողացել ենք լայն ծա-
վալել կուլտուր-կրթական աշխատանքը, ստեղծել ենք
մի շարժում, վորն ամբողջ հեղափոխության ընթաց-
քում աշխատել ե կուսակցության հետ ձեռք-ձեռքի
տված, նրա հետ միասին կառուցել ե Խորհրդային իշ-
խանությունը, միասին նվաճել ե այն, միասին սոցի-
ալիզմ ե կառուցում ե, յես համազված եմ, նրա հետ
միասին ել կկառուցի։ (Յերկար ատել ծավանարաւրյուն-
եր)։

ԸՆԿ. ՏՈՄՍԿՈՒ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Նախ և առաջ յես ներողություն եմ խնդրում ըն-
կերներից, վոր պատասխանել չեմ կարող արհմիութենա-
կան աշխատանքի առանձին հարցերին վերաբերող և
գործնական բնույթի կրող մի ամբողջ շարք բազմազան
հարցումներին։ Միայն մի հարցման թերթ ե ընդհանուր
քաղաքական բնույթ կրում, և զրանով հարցնում են։
Կամ արդյոք կին-վասնիչների հաշվառում, և ինչ տոկոս
են կազմում կանայք։ Պետք ե ասեմ, վոր այս գոր-
ծում կանայք խիստ հետամեսց են (ծիծառ, ծափեր),
նրանք համարյա թե աննկատելի յեն ակտիվ գատնիչ-
ների շարքերում (ծիծառ)։

Այժմ յես անցնում եմ վիճականությունների ըն-
թացքում շոշափված առանձին մասնավոր հարցերին,

ապա կանցնեմ ընդհանուր բնույթ կըող հարցերին: Միքանի ընկերներ, ընկ. Բելենկին և ուրիշները, շոշափեցին արհմիությունների կազմակերպչական հեռանկարների հարցը, վորի շուրջը ՀԱՄԿԽ-ի (ՎՀԸՊԸ) նախագահությունը մտքերի նախնական փոխանակություն և ունեցել: Կազմակերպչական հեռանկարների հարցը խիստ վիճելի, խիստ առանձնահատուկ հարց և կծեծվի արհմիությունների առաջիկա համամիութենական - համագումարում: Այս իսկ պատճառով յես այդ հարցը չշոշափեցի, ինչպես վոր չշոշափեցի նաև շատ այլ հարցեր: Այստեղ ինձ հանգիմանում են, վոր յես իմ թեղիսներում, ինչպես և իմ զեկուցումներում, մի շարք բաներ չհիշատակեցի: Ճիշտ վոր յես չեմ գրել իմ թեղիսներում, թե վորոնք են արհմիությունների խնդիրները կազմակերպչական, ազգային, տարիֆային ասպարեզներում, յերիտասարդության մեջ կատարելիք աշխատանքի մանրամասնությունների մասին շատ բան կա, վոր չի ասված իմ թեղիսներում, կամ չափանց քիչ բան և ասված, ինչպես, որինակ, կուլտուր-լուսավորական աշխատանքի մասին և այլն, և այլն, վորովհետեւ, ընկերներ, արհմիությունների հարցը շոշափելիս ամեն անդամ հո չի կարելի շոշափել արհմիութենական աշխատանքի բոլոր ճյուղերն ու մանրամասնությունները. մինք վոչ թե ընդհանրապես արհմիությունների խնդիրների հարց եյինք զրել, այլ ուշադրություն եյինք կարձել ամենակարենը, ամենից շատ որվա չարիք հանդիսացող հարցերի վրա: Այս իսկ պատճառով՝ ընկ. Գինզբուրգի բարձրացրած աշխատավարձի կարգավորման մեր մեթոդների հարցի վրա յել յես կանգ չեմ առնի և այդ հարցին:

տասնխանի, թեև գտնում եմ, վոր վորոշ բաներում ընկ. Գինզբուրգն սիսալվում եւ Այդ մասին մենք կխոսենք արհմիությունների առաջիկա համագումարում:

Համառոտակի կանգ կառնեմ ընկ. Պոլոնսկու շոշափած հարցի վրա: Ընկ. Պոլոնսկին յերկուող և հայտնում, վոր արհմիությունների անկասկածելի առողջ հաջողությունների կողքին կարող և ծայր առնել արհմիությունների կուսակցական կոմիտեներից կալբ-վելու վտանգ, մանավանդ գեմոկրատիայի ասպարիզում և աշխատավարձի ասպարիզում: Յես կարծում եմ, ընկ. Պոլոնսկի, վոր ներկա մոմենտում այդպիսի վտանգ, մանավանդ Մոսկվայում, չի նկատվում: Գոյությունը ունի մի ուրիշ վտանգ, մանրաբան խնամակալության վտանգ, յերբ յուրաքանչյուր մանրունք, յուրաքանչյուր չնչին հարցիկ, — ձեռնոցներ տալու հարց և այլն—յերբեմն կուսկազմակերպությունների միջոցով և լուծվում: Ահա թե ինչպես և զբաժան հարցը:

Այստեղ առաջաղբվեց գործալքումների հարցը: Այդ հարցը զրին մի ամբողջ շարք տնտեսավարներ, — իբր թե Տոմսկին այդ հարցը նույնիսկ չշոշափեց: Թեղիսներում բավական հանգամանորեն ասված և այդ մասին, և յես իմ զեկուցման սկզբում կանխարանեցի, վոր թեղիսներում տեղ գտած շատ բաներ յես չեմ շոշափի, չեմ շոշափի այն, ինչ վոր ակնհայտ ե, իսկ այդպիսին ե, որինակ, գործալքումների հարցը: Գործալքումների դեմ մենք պայքարել ենք, պայքարում ենք և ձեզ հետ միասին կպայքարենք: Բայց յեկեք պայմանակարգենք այն մասին, թե ինչ և գործալքումը և ինչպես կովկանք նրա դեմ: Յերբ դուք խոսեք վոչ

հարգելի պատճառներով կատարվող գործալքումների
մասին, նկատի ունեցեք, վոր յերեմի վոչհարգելի
պատճառներով կատարվող գործալքումները տեղի յեն
ունենում շնորհիվ մեր պետական ապահարատի անկա-
տարության: Ահավասիկ, որինակ, վոչհարգելի պատ-
ճառով կատարվող գործալքումների մի հատուկ տե-
սակը՝ վորդուն կամ աղջկան պետք և դպրոց ընդու-
նել տալ. դրա վրա 4—5 որ և գործադրվում: Թե
բանվորը կնոջը կուղարկի, կինը նպատակի չի հասնի,
ու ստիպված և լինում թողնել ձեռնարկությունը,
հանդիմանություն ստանալ և հիմնարկների շեմքերը
մաշել, վորպեսզի կարողանա վորդուն դպրոց մտցնել:

Այսպես՝ տեղի յեն ունենում գործալքումներ,
շնորհիվ քաշընկների և շնորհիվ տարրական դպրոց-
ների քչության. վերջինս առանձին սրությամբ զգաց-
վում և Դոնի ավաղանում: Յեվ յերբ վոր այստեղ ըն-
կեր կոմիերիտականները պատմում են ֆարզավոչի
դպրոցների մասին, պոլիտեխնիկական, ունիվերսալ
կրթության անհրաժեշտության մասին, — այդ բոլորն
իրավացի թե: Բայց ահավասիկ մի փոքրիկ մանրա-
մասնություն. մի շարք շրջաններում բանվորների զա-
վակների 25 տոկոսը չի կարողանում տարրական կըր.
թություն ստանալ, իսկ հետո, յերբ նրանք կմնածա-
նան, մենք արհեստական աշխատանքի կարգով
կսկսենք ուսուցանել նրանց և այդ ուսուցումը կկա-
տարենք վորպես անգրագիտության դեմ մղվող պայ-
քար: Ահա թե ինչ դրություն և տիրում: Ել ինչո՞ւ
յերեակայությամբ բյուրեղե զյուակներ կառուցենք,
աչքներս փակելով իրականության առաջ: Թող մեկն
ու մեկը չերքի, վոր Դոնի ավաղանում կամ, որինակ,

մեղ մոտ, մուսաստանի կենտրոնական մասերում, բան-
վորների յերեխաների մոտ 15 տոկոսը չի կարողանում
գպլրցում տեղ գտնել՝ տարրական կրթություն ստա-
նալու համար: Վոչվոք չի վեճարկի ու չի հերքի այս:

Դուք ինքներդ ել գիտեք, թե բանվորն ինչքան ժա-
մանակ պետք և գործադրի, վորպեսզի բնակարան
ստանա: Փորձեցեք բնակարանից բնակարան փոխադր-
վել: Ինչքան ժամանակ պետք և ծախսեք Մունիյում
և այլն: (Մի ձայն. «Մի շաբաթէց վոչ պակաս»): Այս
գործալքումները նույնպես բեռ են դառնում արդյու-
նաբերության համար, բայց այստեղ պայքարը պետք
և ընթանա գլխավորապես մեր պետապարատը բարե-
լավելու գծով:

Դիսցիպլինայի մասին, ասում են, Տոմսկին բան
չասաց: Միթե դուք կրոք կարող եք արհմիութենական-
ներից մեկնումնեկին հանդիմանել, վոր արհմիությունը
յերբեք, ուրեմ չի պաշտպանել տնտեսավարներին՝ աշ-
խատանքի պրոլետարական դիսցիպլինա սահմանելու
խնդրում: Սուտե, այդպիսի բան չի յեղել: Այժմ, յերբ
միքանի ընկերներ հրապարակ են գալիս և ասում են,
վոր գործալքումների դեմ, դիսցիպլինայի համար պայ-
քարելիս հարկավոր և վերաքննել ներքին կարգուկա-
նոնի կանոնները, յես ասում եմ. բանը ներքին կարգ-
ուկանոնի կանոնները չեն, այլ այն, վոր դուք չեք
կարողանում գործադրել այդ կանոնները: Յես պնդում
եմ, վոր լավագույն տնտեսավարների մեծամասնու-
թյունը չի գործադրում ներքին կարգուկանոնի կանոն-
ները, ինչպես վոր չի կարողանում ոգտվել իր իրա-
գունքներից նաև մի շարք այլ դեպքերում: Յերբ ասում
են—հարաբերությունները սրվիլ են—պետք և հասկա-

նալ, վոր դա հաճախ առաջանում ե իր իրավունքներից ողավել չկարողանալուց:

Յես ուղում եմ միքանի խոսք ասել ընկ. Ուզլանովին, վորը սխալ յեղակացություն հանեց այն բանից, վոր արհմիութենականները քիչ արտահայտվեցին ընկ. Ռիկովի զեկուցման առթիվ: Խոսեց միայն ընկ. Ֆիքանները, և գրանից ընկ. Ուզլանովն այդպիսի համարձակ յեղակացություն և հանում այն մասին, թե արհմիութենականները չեն հետաքրքրվում տնտեսական հարցերով: Այդ փոքր ինչ համարձակ և ասված: Իմ կարծիքով, այդ բղխում և մեկ ուրիշ հանգամանքից.—արհմիութենականներն ընդհանրապես հոկտորներ չեն (ծիծաղ, աղմօւկ: Ընկ. Կոսսիոր. «Դե, դե, դե»), Մանավանդ նրանք չեն սիրում խոսել այն ժամանակ, յերբ նրանք ասելու նոր բան չեն ունենում: Ընկ. Ռիկովի թեղիսներում արված հիմնական առաջարկները վաղուց իվեր և հայտնի յեն բոլոր արհմիութենականներին, ընկ. Ռիկովի հետ վոչ մի տարածայնություն չունենք, հնարել չենք ուղում, իսկ ընդարձակել այդ առաջարկներն ընկ. Ռիկովի ընդարձակ զեկուցումից հետո լրացուցիչ կերպով—այդ նշանակում և անտեղի վատնել թե մեր սեփական և թե կոնֆերենցիայի ժամանակը: Յեթե առանձնակի խոսես ուղածդր արհմիութենականի հետ, նա կասի. ուղեցի ցուցակագրվել, մտադիր եյի խոսել, իսկ հետո մտածեցի. ինչի մասին վիճեմ, վեճի առարկա չկա, ամենը ճիշտ ե, հնարելու ախորժակ չկա, իսկ զարգացնել այն, ինչ վոր արդեն ասված ե—ավելի լավ ե այդ շանել, չարժի:

Ընկ. Ուզլանովի առաջաղում յերկրորդ առաջարկը վերաբերում ե յեռանկյունուն, անսասան, անհրաժեշտ

յեռանկյունուն և այլն: Տվյալ դեպքում մենք և ընկ. Ուզլանովը տարբեր բաների մասին ենք խոսում: Ընկ. Ուզլանովը հիմնավորում ե իր ըմբռնումը յեռանկյունու մասին այնպես, վոր իրը մենք չունենք և չպետք ե ունենանք վորեւ բան, վոր կտրված լինի միաձույլ կոմմունիստական կուսակցությունից, միաձույլ բանվոր գասակարգից, վորը պրոլետարիատի դիկտատորային իրականացնում: Հկա այնպիսի դրություն, վոր ասենք, թե մեկը՝ տնտեսավար ե, մյուսը՝ արհմիութենական, յերրորդը՝ կուսակցական գործիչ և այլն: Ճիշտ ե, մենք բոլորս—կուսակցական գործիչներ ենք, մենք բոլորս ել միենույն գործն ենք անում, և արհմիութենականները յերբեք չեն ժիտել այն, վոր տնտեսավարն ընդհանուր կուսակցական գործ և կատարում: Բայց այս բոլորը չե կարելի իրար խտռնել, ինչպես ընկ. Ուզլանովն և խառնում տվյալ դեպքում: Վատ բան գուրս կգա, յեթե մենք յեռանկյունի ստեղծենք, այդ յեռանկյունու ծայրերն իրար միացնենք ամրապես, իսկ յեռանկյունուներուը դատարկություն ստացվի, ու հանկարծ պարզվի, վոր բանվորական մասսայի դրության մասին յեռանկյունին վոչինչ չգիտե: Այդպիսի յեռանկյունի մեղ պետք չի: Մինչդեռ իրոք մենք յեռանկյունի չունենք, այլ ունենք մի բազմակողմանի ֆիզուրա, վորտեղ բոլորը միասին Հ. Ա. Մ. Կ. Կ. յի ներկայացնում: Ահա թե ինչումն և բանը: Այնպես վոր հին յեռանկյունին յեկեք չվերակառուցենք:

Ընկեր տնտեսավարներն այնպես զրին հարցը, վոր իրը թե նրանց բոլորին են դատապարտում, մի ինչվոր բանում մեղագրում, ցույց տալիս նրանց սխալները, իսկ արհմիութենական թերությունների մասին

չեն խոսում, Բայց մի և այդպես անում: Արհմիությունները շատ պակասություններ ունեն, - հազար անգամ ենք ասել այդ մասին: Հարկավոր լինի, - մի հարյուր հազար անգամ ել կասենք: Յեվ մի և, ընկերներ, զոր արհմիութենական պակասությունների մասին ավելի յե խօսել, քան ձեր խոնարհ ծառան, ընդգծելով այդ պակասություններն՝ ամենամեծ կուսակցական և անկուսակցական բանվորական ժողովներում: Յե՞րբ ե յեղել, զոր մենք թագյնենք մեր պակասությունները, Ո՞վ կհամարձակվի ասել, զոր արհմիություններում ամեն ինչ լավ ե, զոր չկա բյուրոկրատիզմ, զոր արհմիութենականների մեջ յերեմն յերևան չի գալիս այն, զոր տնտեսավարներն ունեն: Միթե այդ բոլորն ել չունեն արհմիությունները Զունե՞ն մեր մյուս մարմիններու: Ամենուրե՛ք արդ կա: Կուրյողներ, պակասություններ, աշակարություններ, աշակարություններ - այս բոլորից ավելի քան շատ կա, բայց հարցն այս չե: Այժմ խոսքը վերաբերում ե լայն բանվորական մասսաներին սոցիալիստական շինարարության գրավելու նոր ձերին, նոր միթքների: Ահա թե ինչ՝ զրա պետք ե մտածել:

Հյուսեղ հանդեւ յեկավ ընկ Միխայլովը և խոսեց տնտեսավարի գրության ծանր լինելու մասին. ասաց, իմ կարծիքով, շատ սխալ, անձիշտ բաներ, բայց յես վոչ մի բողի չկատածեցի ընկ. Միխայլովի անկեղծության վրա: Ի՞արկե, դժվար աշխատանք ե, բայց այդ մի և ժխտում: Տնտեսավարի գերը մենք յերեք չենք մոռանում և յերեք չենք մտածում նվաստացնել այն: Տնտեսավարը, զորպես պետության աչք, զորպես բա զոր գտակատանքի գործակատար, զոր բանվոր դասակարգի կողմից զորոշ աշխատանքի յե նշանակ-

ված, ամենաղժվարին գործն ե կատարում: Նա պարագավոր ե, հոգուտ բանվոր դասակարգի շահերի, հասցընել ձեռնարկությունն անվասարեր դրության ու վաստակաբերության, զարգացնել, ընդարձակել ձեռնարկությունը, կովել բանվորների ցեխային և զրուպայական նախապաշարումների դեմ: Մենք զոչ մի բողեշնք մոռանում անտեսավարի բարձր գերը, չենք մոռանում, զոր նրա զործը ծանր զործ է: Դրա բարդությունը կրկնապատճենվում ե նաև նրանով, զոր տնտեսավար կոմմունիստը առետրական և տնտեսական ապահատում աշխատում ե, շրջապատված լինելով իր մերձակարգույն ոգնական մասնագետներով, զորոնք դեռևս հեռու յեն պրոլետարական հոգեբանությամբ տոգորված լինելուց: Տնտեսավարը նրանց միջոցով ե իրականացնում իր խնդիրները: Անկուսակցական բանվորների լայն մասսաների աշքերի առաջ նա ակամայից հանգես ե գալիս մասնագետների հետ տեսանելի բլոկ կապած, հենված մասնագետների, վոչ կոմմունիստական տարրերի վրա, զորոնք տոգորված չեն պրոլետարական հոգեբանությամբ և 50 տոկոսով չեն ըմբռնում վոչ Խորհրդային պետության կառուցվածքը, վոչ ել կուսակցության ընդհանուր քաղաքականության խնդիրները. այդ մասնագետների հետ նա պետք ե հանդես գա և նրանց միջոցով իրագործի այն խնդիրը, զոր դրել են նրա առաջ կուսակցությունն ու բանվոր դասակարգը: Այստեղից ե ծագում նրա գրության վտանգավորությունը. այդպիսի մարդկանցով շրջապատված լինելով՝ նա յերեքն մոռանում է իր ով լինելը և սկսում ե խոսել այնպիսի տոնով, զորպիսի տոնով՝ չպետք յեսուի խորհրդային կոմմունիս-

տական տնտեսավարը։ Յերբ մենք նրա սիալն ուղ։
զում ւենք, չի կարելի հարցին վերաբերվել այսպես։
քանի վոր հանդես են գալիս իրենց խոսքերով։ Տոմ-
սկին, Դոգագովը, նշանակում ե, վոր արհմիութենա-
կաններն են մեր վրա հարձակվում, այսպես չի կարե-
լի մոտենալ հարցին։ Մենք վոչ մի ըոպե չենք ու-
ղում, մտադիր չենք նվաստացնել, թուլացնել վորին
չափով տնտեսավարի հեղինակությունն ու ազդեցու-
թյունը, վորովհետև նրանց աշխատանքի ծանր լինե-
լը մենք շատ լավ ենք հասկանում։ Բանն այն է,
վոր յերբ խոսում են հիմնական հարցերից մեկի, այս-
պես կոչված վերահսկիչ հանձնաժողովների հարցի մա-
սին, վոր առաջ են քաշված իմ գեկուցման թեղիսնե-
րում, վորոնք Քաղբյուրոյի հավանությանն են ար-
ժանացել. — շատ տնտեսավար ընկերներ յերեան են
բերում մի բան — այն, վոր իրենք չեն հասկացել ան-
գամ այդ հարցի գրվածքը։ Ինչի՞ մասին եյին խոսում
նրանք ընկ. Ռյաղանովի հետ միասին։ Նրանք այդ
հարցը վերածեցին ապլարատային հարցի (տեղերից.
«Ճիշտ ե»)։ Իրը թե՝ կարծես, վերահսկողության ապ-
լարատը քիչ ե — և ահա Տօմսկին, արհմիութենականնե-
րի հետ, հնարեցին վերահսկողության ես մի նոր ապլա-
րատ։ Բայց չե վոր բանի եյությունն այդ չի։ Խոսքը
վոչ թե վերահսկողության ապլարատի մասին ե, այլ
այն մասին, վոր պրոլետարիատի դիկտատուրայի
պայմաններում բանվոր դասակարգը, վորին դեկավա-
րում ե կոմմանիստական կուսակցությունը, դեպի սո-
ցիալիզմ ընթանալով, պետք ե իր միջից հազարավոր և
տասնյակ հազարավոր բանվորներ առաջ քաշի, պատ-
րաստի նրանց պետական ապլարատն ընդգրկելու

գործի համար — մի ապլարատ, վորը դեռևս խիստ
բյուրոկրատական և ու վատ կառուցված, վորի մեջ
տակավին շատ խորթ տարրեր կան — և առաջին հեր-
թին անհրաժեշտ ե այդ տասնյակ հազարավոր բան-
վորներին սովորեցնել տնտեսություն կառավարելու
և դեկավարելու գործը։ Պարտավճր ենք մենք այդ ա-
նել, թե վոչ։ Յես կարծում եմ, վոր հարցն այս ձեռվ
գնելու գեղըում՝ և ընկ. Ժուկովը, և ընկ. Տեպլովը,
վորն այնպես անհաջող կերպով այստեղ վիճաբանու-
թյան առաջին փորձն արեց, և ընկ. Միխայլովը՝ և
բոլոր մյուսները կատարեն, — այն, այդ այդպես ե, և
վճառկանորեն պատճեց կքաշեն իրենց և այն թեո-
րիայի միջև, վորն ասում ե՝ «Կարելույն չափ հեռու
պետք ե պահել արհմիություններին արդյունաբերու-
թյան կառավարչությունից»։ Պատճեց կքաշեն այդ-
պես ասողների և իրենց միջև, վորովհետև այդ լենի-
նյան թեորիա չե։ Յեկեր հենց այս կողմից մոտենանք
հարցին։ Արտադրական խորհրդակցությունները գաս-
տիարակության և բանվորներին դեպի սոցիալիզմի
շինարարության գիտակցական գործ գրավելու մի մե-
թոդեն, մի ձե։

Զնայած այն բանին, վոր կան առանձին անհատ-
ներ, վորոնք սխալվում են, մոլորության մեջ ընկնում,
վորքը ինչ կտրվում են բանվորական մասսայից, յետ
չեն նայում, չեն համաձայնեցնում իրենց գիծը կուսա-
կցության քաղաքական ընդհանուր գծի հետ, յերբեմն
անհամապատասխան տոն են բանեցնում, ինչպես ընկ.
Տեպլովը այս կոնֆերենցիայում, — յես համոզված եմ,
ընկեր տնտեսավարներ, վոր ընդհանրապես ընկեր տըն-
տեսավարների մեջ կանկած չկա այն մասին, վոր

պլրութարիստի։ դիկտատուրայի ժամանակ բարձրացնել տնտեսությունը, սոցիալիզմ կառուցել՝ առանց բանվոր դասակարգի՝ անկարելի յե։ Այս դուք ել այդ հարցին այսպիս մոտեցեք և վոչ թե այն տեսակետից, թե՝ պետք եւ վերահսկողության ավելորդ ապահարատ ստեղծել, թե վոչ։ Հարցն այնպիս չպետք եւ գնել թե՝ անվտանգություն եւ դեպի տնտեսավարները։ Կարեվորն այդ չի։ Հարցն այսպիս դրեք. նպաստում եւ այդ դրված խնդրի իրականացմանը—բանվոր մասսայի հետաքրքրության բարձրանալուն՝ դեպի արտադրական խորհրդակցությունները, ավելի մեծ վստահություն տածելուն դեպի այդ խորհրդակցությունները և դեպի տնտեսական մարմինները, թե վոչ։ Ահա թե ինչի մասին ե խոսքը։ Մընչդեռ գուռ հարցը վերածեցիք վերահսկողության ապահարատի հարցին։ Այս, որինակ, դուք, ընկ. Զվեզդով, տրանջում եք, վոր շատ հաճախ ձեղ խանգարում են զանազան ժողովները, արտադրական խորհրդակցությունները, զեկուցումները, իսկ այժմ ել, տեսեք, նոր բեռ են զգիս դնում և այն։ Այս, հենց դրանով ել դուք, կարմիր, կոմմունիստական դիրեկտորներդ, զանազանվում եք բուրժուական դիրեկտորներից, վոր դուք հասարակական գործիչներ եք. դուք մեր՝ մարդիկն եք, դուք վոչ միայն գործատերեր եք, վոչ միայն տեխնիկական զեկավարներ, այլև բանվոր դասակարգի գործակատարներ, բանվոր դասակարգին հաշվետու հասարակական գործիչներ, ինձ հետ մասնավոր զբույց անելիս ընկ. Զվեզդովը կողմնակի կերպով շոշափեց առաջքաշման հարցը—նա այդ հարցն ուղղակի դնելու վճռականություն չունեցավ։ Առաջքաշումը, ասաց ընկ. Զվեզդովը, ի միջի այլոց մի բան ե, դատարկ

բան. յեթե մարդն ընդունակ է, ուրիմն ել կարեք չկանան առաջ քաշելու, նա ինքն իրեն առաջ կքաշի. այս չե վոր յես ինքս ինձ առաջ քաշեցի (ծիծաղ)։ Այն ժամանակ յես նրան հարցրի. իսկ դու հին բանակում ի՞նչ եյիր։ Շարքային։ Հապա ինչու դու այնտեղ ըրիդագի պետ չդարձար, ինչու վարչության դիրեկտոր չգարցրին քեզ այն ժամանակ։ Յեթե, ընկերներ, հարցին մոտենանք գործունակության տեսակետից—ներեցեք։ ձեզ վիրավորելու համար չեմ ասում—մանք վաղուց ի վեր մեր տեքստիլ ձեռնարկությունների գիրեկտորներին կրերեյինք արտասահմանից, Անգլիայից։ Յերբ յես այդ ասացի, ընկ. Զվեզդովն ինձ առարկեց. վոչ մի բուրժուական մասնագետ մեր պայմաններում վոչինչ չի հասկանա։ Ահավասիկ հենց այդ պատճառով ել մենք ձեզ ենք նշանակում—հին բանվորներից, հին կուսակցականներից, վորովհետեւ դուք հասկանում եք այդ բոլորը։ Շատ ել թե յերբեմն ձեզ շատ բան ե խանգարում (ծիծաղ)։

Ըսկեր տնտեսավարները մեղասում են. վերահսկությունն ապահոված ե, զնանատու-կոնֆլիկտային հանձնաժողովը (ՐՀԿ) վերահսկում ե, արտադրական խորհրդակցությունը վերահսկում ե, հիմա յել վերահսկելու համաձայնագողվեր են հնարում։ Շմո ե անցել այն որից, յերբ տնտեսավարները վիճում եյին ինձ հետ, յերբ ասացի, վոր Խորհրդային պետության մօջ չկա ե չի կարող լինել բանվորներից թագցվող առետրական գաղտնիք։ Զայներ եյին լսվում. ինչպես կարող ե այդ լինել, դա միանգամայն անկարելի յի։ Կենտկոմը պաշտպանեց իմ առաջարկանքը. այն, բանվորներից թագցվող առետրական գաղտնիք չի կարող լինել։ Յեզ

ի՞նչ—վորեկ լամ տուժեց գրանից: Առջինչ չտուժեց: Ասենք՝ փաստորեն վոչ մի առևտրական զաղտնիք ել չկա—այն, ինչ վոր գուք գիտեք, վաղուց ի վեր ե ամենքը գիտեն (ծիծաղ): Այս, ասում են, գնահատուկոնֆլիկտային հանձնաժողովը վերահսկում ե: Սակայն այդ ճիշտ չե, իրոք այդպիսի բան չկա: Մենք աջակցում ենք և կաջակցենք տնտեսավարներին, կուղենք նրանց սխալները և պարտավոր ենք ուղղել, ինչպես և մեր սխալներն են ուղղում: Տվյալ հարցում դուք խընդուն մոտեցաք վոչ թե քաղաքական նկատառումներով, այլ գործարար մարդկանց տեսակետով: յիս ուղում եմ կառավարել այնպես, ինչպես հարմար ե ու հեշտ: Վերահսկի հանձնաժողովներն, ինարկե, բարդացնում են վարչությունը: Իսկ արտադրական հանձնաժողովները բարդացնում են: Բարդացնում են: Իսկ գնահատուկոնֆլիկտային հանձնաժողովը բարդացնում ե: Բարդացնում ե: Վոմանք ասում են. նրանք առանց այդ ել շատ մեծ իրավունքներ են բանեցնում—գնահատում են և այլն: Գնահատուկոնֆլիկտային հանձնաժողովը պարխտեային մարմին ե:

Վերջերս տնտեսական մարմինների ներկայացուցիչները, մեր դիրեկտոր-տնտեսավարները վատ սովորություն են յուրացրել—այդ հանձնաժողովներին ուղարկել վոչ թե լավագույն մարդկանց, այլ մանր մարդկանց, այնպիսիներին, վորոնք հարցն ինքնուրույն կերպով լուծելու քաջությունը չունեն: Այս պատճառով՝ նրանք պարզապես բոլոր հարցերում անհամաձայնություն են հայտնում: Համաձայնության չեն գալիս ե, ինարկե, հարցը հաշտարար տայան ե փոխադրվում: Հաշտարար ատյանում նորից համաձայնու-

թյան չեն գալիս, վորովհետեւ դա յել պարիստեային մարմին ե, ապա զործը հանձնվում ե միջնորդ դատարանի, իսկ այս բոլորը տեսում ե յերեք ամիս: Այս թե բանն ինչումն ե: Այստեղ ել ի՞նչ վերահսկողություն մնաց, ել ի՞նչ արդյունաբերության կարգավորում: Իսկ այդ ժամանակամիջոցում այն բանվորը, վորի հարցի առթիվ ծայր ե առնում այս բաշքուկը (ինձ մոտ արձանագրված կան մի շարք այդպիսի դեպքեր Ուկրայնայի գործարանների կյանքից), մոտենում ե արհեստանոցի վարիչն՝ կամ գլխավոր ինժեներին, հարցնելով: «Ի՞նչ եք բաշքուկով զբաղվում»: «Բանն ինչումն ե»: «Խոսքս այս ի՞նչ կոնֆլիկտի մասին ե»: Վարիչը կամ գլխավոր ինժեները մի յերկառող ե գրում, և ձեռաց գործը զլուխ ե դաշտում: Արհմիությունը քաշքուկ ե ստեղծում, իսկ ինժեները մի յերկառող ե գրում—և ամեն ինչ վերջանում ե: Սա մեր ընդհանուր հեղինակության խախտումն ե, - կուսակցության հեղինակության, արհմիությունների հեղինակության—խախտումն բանվոր դասակարգի հեղինակության և նրա դիկտատուրայի: Այս պատճառով՝ մնենք ձեզ հետ միասին պետք ե հետեւնք, վորպեսզի նման բան սեղի չունենա: Այս թե բանն ինչումն ե: Յեվ առանց փափկանկատության կվարենք մեր պայքարը նման յերեսույթների դեմ, ու թող վոչվոք չնեղանա, իսկ կուսակցությունը կպաշտպանի մեզ: Բանվորներ ընտրել՝ խնամիությամբ, դնահատումները՝ խնամիությամբ, աշխատանքի բաշխումը՝ խնամիությամբ—սա մի խայտառակ յերեսույթ ե, վորին ժամանակ ե, վոր վերջանքը: Գնահատուկոնֆլիկտային հանձնաժողովը հետին պլան ե քշվելու ի՞նչ, սա միթե միայն մեր տնտեսա-

վարներին քննադաւել և Սա—վերաբերում և մեր ընդհանուր պակասություններին: Զեր թերությունները—մեր թերություններն են, մեր թերություններն—ընդհանուր թերություններ են: Ինչու այդպես արժեքավորել բանվոր գասակարգի ներգրավման, սովորեցնելու, ձեռնարկության և ամբողջ տնտեսության իշկական կառավարչության համար նրան պատրաստելու մեթոդների մեծ քաղաքական հարցը: Ինչու այս հարցը ներկայացնել վորպես ավելորդ ապավարատ ստեղծելու հարց: Ստեղծեցեք մի վերահսկողություն—մենք հաճույքով համաձայնվում ենք վոչ միայն ամեն կերպ և բոլոր միջոցներով աջակցել, այլ և իրազործել այդ:

Ըսկ: Զվեզդովն ասում ե. «Յես ասել եյի, վոր վերստուգիչ հանձնաժողովներից բան չի դուրս գա—և բան դուրս չեկավ»: Այստեղ յես հանցաների կեսն ամբողջապես արհմիությունների վրա յեմ վերցնում:

Մեր հանցանքն այն ե, վոր մենք չունեյինք և չստեղծեցինք վոչ մի կապ՝ վերստուգիչ հանձնաժողովներում գտնվող մեր ներկայացուցիչների հետ, ինչու: Վորովհետեւ մենք չընդդիմացանք գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովներում գտնվող արհմիությունների ներկայացուցիչներին՝ վերստուգման յենթակա հաստատության ծառայող դարձնելուն, իսկ արեստները պահանջում են, վոր վերստուգիչ հանձնաժողովի բոլոր անդամները մնայուն կերպով աշխատեն տրեստում և ոռնիկն այնտեղ ստանան, և հաճախ ստուգում կատարողը պաշտպանում ե նրա շահերն, ով իրեն ոռնիկ ե վճարում: Ահա թե ինչու յե գործն այդպիսի պատկեր ընդունում: Միթե այդպես չե, ընկերներ: Այդպես ե: Բայց վերստուգիչ հանձնաժողովները դեռ չեն

մեռել, և մինք կաշխատենք նրանց գործունեյությունը դնել պատշաճ բարձրության վրա:

Այստեղ յես պետք ե փոքր ինչ ուղղեմ վերահսկիչ հանձնաժողովների հարցում իմ դաշնակիցը հանդիսացող ընկ. Լուրինաձեյի սխալը, վորը ձիշտ ասաց, թե՝ այդ մեծ քաղաքական հարց ե, մեծ պրոբլեմ, և ապա թե՝ այդ պետք ե կապել ԲԴՏ հետ և այլն. իսկը ասածո, մի կապել ԲԴՏ հետ (ծիծառ), զբանից բան դուրս չի գա: Մի գործ շինելով, գուշ մյուսը կկուծանեք: Այդ հանձնաժողովներն անշուշտ ժամանակավոր պետք և լինեն: Այդ հանձնաժողովի ընտրովի անդամները մնայուն պաշտօն չպետք ե ունենան: Մինք ինչ ենք տեսնում: Թող այդ մեր բանվոր գանակարգի անկուլառականության արտահայտություն լինի, թող լինի հնի մնացորդ և այլն, բայց մենք ինչ ենք տեսնում: Այ, որինակ, գեմովը ամեն կանոնաբով այսոր գործարկում են ընտրում, իսկ յերեք ամիս անց նրան հայտարարում են. դու կարվել ես մասսաներից: Միթե այսպիս չե: Յիթե դուք մնայուն պաշտօն և այդ պաշտօնի համաձայն ոռնիկ տաք ձեր ներկայացուցչին՝ ել պրծավ. բանվորների վստահությունը գեպի նա կապակասի: Ենուս տեական, մեծ մասսայական դաստիարակչական աշխատանք և պահանջում, վորպեսզի բանվորը փոխի իր հայացքները: Գուցե այդ արդյունք ե մեր սխալների, բոլոր արհմիությունների սխալների, բայց այդպիսի անվստահություն բանվորների մեջ կա: Կարելի յե ցուց տալ թե այդ չեք նկատում, բայց այդ չի նպաստի այդ յերկույթների բժշկելուն: Վստահություն պետք ե նվաճել գեպի արտադրական հանձնաժողովները, նրանց

Հեղինակությունը պետք է բարձրացնել: Յես չեմ կրկնի
այն, ինչ վոր առված և մեր կուսակցության XIV հա-
մագումարի բանաձևում այն մասին, վոր արտադրական
խորհրդակցություններն այն փորձարաններն են, վորի
միջոցով կարող ե իրականացվել լինինյան ավանդը
այն մասին, վոր հաղարավոր և տասնյակ հաղարավոր
բանվորների պետք և սովորեցնել անտեսություն և
պետություն կառավարել: Հարցին մոտեցեք այս տեսա-
կետից: Վոչ թե վերահսկողության, ձեզ ստուգելու,
սեղմելու տեսակետից—այդ բանի համար վերահսկա-
կան մարմինները բավական են,—այլ մեթոդի տե-
սակետից, այդ մեծագույն խնդրի իրագործման տեսա-
կետից մոտեցեք հարցին և ասեք—նպաստման և դրան
մեր առաջարկը թե վոչ: Յեթե այսպես դնենք հարցը,
յես պնդում եմ, վոր, իրանց դիրիկտորական շահերը
գեն դնելով, և՛ ընկ. Տեղական վեցությունը կամ
կհամաձայնեն այս տեսակետի հետ: Վոր այդ ձեզ հա-
մար անհարմար ե—յես չեմ ժխտում: Ի՞նչ արած: Մեզ
ել այսինչ և այնինչ բանն անելու խնդիր և տրվում:
Մի ավելորդ աշխատանք, ուշադրության բեկում, գըլ-
խացավանք, վորի մեծ մասը մենք մեր ուսերից կդու-
րսինք: Մեզ մոտ ես շատ վոչ-արհմիութենական աշ-
խատանք և կատարվում: Ի՞նչ կարող ես անել: Միա-
սին ենք կառուցում, միասին ել պետք և տանջվենք
(ծիծաղ): Գործն և այդպես: Այստեղ միքանի հսկուր-
ների ճառերում վասնգավոր նոթեր լսվեցին:

Արտադրական խորհրդակցությունների ընդունած
բոլոր առաջարությունները պետք և կենսագործվեն:
Յես այդ չեմ առաջարկում, մյուս պրոֆեսսիոնալիստ-
ներն ես չեմ առաջարկի: Այն առաջարկությունները,

վարնենք արթադր սկսել խորհրդակցությունների կողմից
լինդաւվածքնեն յեվ տնտեսագարների կողմից ինսեազված
նպատակահարմար, պետք ե կենսագործվեն: Բայց ար-
տադրական խորհրդակցություններում կարող են հան-
գել և այնպիսի վորոշումներ, ինչպես մոտ որերս
Մուկայի արտադրական կոնֆերենցիայում ընդուն։
վածը, վորին, ի զարմանս մեր, տնտեսավարները չա-
ռարկեցին: Վորոշում են նոր գործարան կառուցել։
Բայց ինչով կառուցես: Ի՞նչպես կարելի յե ապահո-
վել այդ առաջարկի իրագործումը: Կասեն—պետք ե
փոխել բոլոր գաղղահները, մինչդեռ դու զրամ չու-
նես: Այս պատճառով ասել, թե արտադրական խոր-
հրդակցության բոլոր այն վորոշումները, վորոնք քիե-
արկվելիս մեծամասնություն են ստացել, յենթակա
յեն իրագործման, նշանակում ե՝ արտադրական խոր-
հրդակցությունները զրանով իսկ վերածել «արտա-
դրողների խղճուկ ժողովների», իսկ քանի գեռ այդ
չկա, և մենք այդպիսի բան չենք թույլատրի, արտա-
դրական խորհրդակցությունները մաղաչափ անդամ
նման չեն զրան:

Միքանի խոսք մանկահասակների աշխատավարձի
մասին: Ըստ Զապլին, յերբ զուք մեզ ասում եք, վոր
մանկահասակների աշխատավարձը ցածը ե 1914 թվի
աշխատավարձից, ինչու զուք չեք խոսում 1910 կամ
1913 թ. թ. մասին: Վորովհետեւ 1914 թվականը պա-
տերազմի տարի յեր, չափանաս բանվորները ճակատ
ելին ուղարկվել, և բոլոր հատուկ գաղղահների վրա
կանաց և յերիտասարդներին ելին նշանակել: Հար-
մարեցրին գործարանները թիթեղե ոռմերե և այլն
պատրաստելու գործին, և այն ժամանակ յերիտասար-

գության վաստակը բարձրացավ, բայց սկսեց ընկնել
 ուել աշխատավարձը, և արժեքազուրկ դարձավ դրա-
 մանիցը: Դուք ինքներդ ել գիտեք, վոր այս այսպես
 եւ ել ինչու յեք այդպիսի փաստարկումներով 1914 թ.
 մասին խոսում: Լուրջ մարդուն վայել չի այդպիս
 վարկելը: Այ, այստեղ գտնվողներից մեկնումեկը
 (այստեղ, յերեխ, բավականաշափ հին բանվորներ կան)՝
 թող վիճարկի, վոր մենք մեր աշակերտությանը լա-
 վագույն դեպքում որը 25 կոռուկից ավելի աշխատա-
 վարձով ենք կիսել, (Մի ձայն. «Քսան կոռուկից»): Յե-
 թե կուզեք, յես, առանց թվերի ոգնության դիմելու,
 հիշողությամբ կասեմ ձեզ վորոշ արհեստների պատ-
 կանող համարյա թե բոլոր այն բանվորների նախա-
 պատերազմյան աշխատավարձը, վոր դուք կկամենաք:
 Հիշողությամբ կասեմ ձեզ, թե բանվորի մննդի ինչ
 առարկան ինչքան արժեք: Ասում են, թե աշխատա-
 վարձի խնդրում մեր քեֆին դիպչում են: Ընկ. Սատ-
 վեյն, ձի՞շտ ե այդ, թե վոչ: Ձի՞շտ ե, վոր ՀԱՄԿԵ-ի
 նախագահությունը, աշխատավարձի բարձրացման մա-
 սին վորոշում ընդունելով, — վորն իրոք վերաբերում
 եր ամենացածը վարձատրություն ստացող բանվոր-
 ներին — նկատի չուներ մանկահասակներին: ՀԱՄԿԵ-ի
 նախագահությունը վորոշել եր տարածել այդ բար-
 ձրացումը մանկահասակների վրա վոչ պակաս, քան 10
 տոկոսի չափով: Ձի՞շտ ե այս, թե վոչ: (Մատվեյիվ.
 «Ձիշտ չե այն, վոր 10 տոկոսով պետք ե ավելացվեր»):
 Ձիշտ ե: Վոչվոք չի կարող ժխտել այդ, իսկ դուք այս-
 տեղ ուղղում եք յերեսազաշությամբ զբաղվել: Յերբ
 վոր մետաղագործներն ու քիմիկոսներն իրանց առա-
 ջարկությունն արին և կամենում երին հավելյալ վաս

տակը դրույքի մեջ մտցնել, վորին անտեսավարները
 համաձայն են, կոմյերիտմիությունը հայտարարեց.
 Վորովեակ բանվորների դրույքը համապատասխան
 չափով ավելացվելու յե, ուստի նույն կարգը դասե-
 ցեք նաև կոմյերիտականներին, վորոնք ավյալ ըոպե-
 յին հավելյալ վաստակ չունեն: (Մատվեյիվ. «Վոչ թե
 կոմյերիտականներին, այլ յերիտասարդությանը»):
 Յեվ վորովինեակ նրանք մի տեսություն ունեն, ըստ վորի
 Փարզավուչի դպրոցի աշակերտը պետք ե ստանա
 նույնքան, վորքան և նա, ով վոր դպրոցում չի, այլ
 դադյանի վրա յե աշխատում արդյունաբերության
 մեջ, նշանակում ե, վոր այդ բառը պետք ե տարածել
 նաև Փարզավուչի վրա, վորի աշակերտները Փարբի-
 կայում ու գործարանում չեն լինում, և վորոնց համար
 հավելյալ վաստակը 60 տոկոսով կավելացնի իրենց
 աշխառավարձը: Մտացվում ե մի տգեղ պատկեր. վո-
 րաբերմանք ե, սա ձեռնուուչ ե մեկ և կես տոկոս հա-
 վելում, սեագործը՝ 10—12 տոկոս, իսկ աշակերտը՝
 50—60 տոկոս:

Դա բուռն գայրությ կառաջացնի: Բանվորները
 կասեն. մեր աշխատավարձն ավելացրին 10 տոկոսով,
 իսկ յերեխաններին՝ 50—60 տոկոսով: Սա սխալ վե-
 րաբերմանք ե, սա ձեռնուուչ ե նաև արդյունաբերու-
 թյան համար:

Հիմա դառնանք 14 տարեկաններին արհմիության
 անդամ ընդունելու հարցին: Այդպիսիներ մենք մեր
 արդյունաբերության մեջ ունենք մոտ 100,000 հոգի:
 Մենք վորոշել ենք, վոր նրանք, ովքեր գտնվում են
 արհմիությունների մեջ, շարունակում են մնալ այն-
 տեղ, վորովինեակ մենք յելնում ենք այն բանից, վոր

արհմիության՝ յուրաքանչլուր անդամ պարտավոր և
ակտիվ մասնակցել արհշարժմանը: Իսկ դուք ի՞նչ կա-
սեք, ընկերներ, վոր արդյունաբերություն յիկող 14
տարեկան տղային հարկավոր և պասսիվ և ակտիվ
ընտրական իրավունք և մյլն: Բայց այդ արդեն լըլ-
ջությունից հետու յե, վորովհետև մեր մերձավորա-
գույն ապագայի խնդիրն և վերացնել ամենաայլանդակ
յիրեռյթը—գերչափահաս (ուրօքուք) բանվորների
գործազրկությունը: Յես շատ եմ ափսոսում, վոր այս-
տեղ չխոսեցին իվանովովովունցիները, վորոնք
կարող եյին շատ բան պատմել վոչ թե 18, այլ 20 և
22 տարեկան գերչափահասների մասին, վորոնք մի
շարք մանածառործական շրջաններում չեն կարողա-
նում իրենց աշխատանքի գործազրության տեղ գտնել:
Մեզ ասում են, անհրաժեշտ ե փարզավուչի դարրոցներն
ընդունել սկսած 14 տարեկան հասակից, ապա թե վոչ
ընդհատում ե առաջանում: Վոչ, ընկերներ, ընդհա-
տումն ստեղծվում ե 12 և 22 տարին երի միջև,—այ,
այս արդեն վաստ ընդհատում ե: Իսկ յեթե դպրոցի և
արդյունաբերության միջև ընդհատում կա յերիտա-
սարդության մեջ, այդ ընդհատումը հանդուրժելի յե:
Տղան 14 ից մինչև 16 տարեկան հասակը կարող ե և
իր ծնողների մոտ ապրել: Մերձավորագույն շրջանում
մեր խնդիրն այն ե, վոր տեղավորենք այն 16-17 տա-
րեկաններին, վորոնք փողոցում են մնացել. դրա հա-
մար՝ թերես հարկադրված լինենք մերձավորագույն
ապագայում հրաժարվել 14 տարեկան անչափահաս-
ներին արդյունաբերություն ընդունելու որենքից: Հի-
շեցեք՝ աշխատանքի որենքների կողեքսի տեքստն ա-
սում ե, վոր արդյունաբերություն ընդունել անշա-

փահասներին թույլատրվում ե միայն 16 տարեկանից
սկսած: Մինչդեռ մինք որենքի խախտում եյինք կա-
տարում, թույլ տալով, վոր իրրե բացառություն ֆար-
զավուչի դարրոցներն ընդունեն 14 տարեկաններին,
վորոնք ներկա վիճակում արդյունաբերություն չեյին
գնա, և այժմ հնարավոր կլիներ տեղավորել 16 տարե-
կաններին,—և այդ կլիներ պլյուս և վոչ թե մինուս:

Բայց այնպիսի հարց են առաջ քաշում, վոր, ինչ
չափով վոր նրանք արհմիության անդամ չեն լինելու,
և նրանց շահերը չեն պաշտպանվի, — սրանով միայն
ցույց են տալիս իրենց տարրական քաղզրագիտու-
թյուն չիմանալու, վորովհետև մեր արհշարժումը, հա-
կառակ Արհմտյան Ցեղոպայի արհշարժման, հավա-
սարապես պաշտպանում ե բանվորների տնտեսական
և այլ շահերը, անկախ այն բանից, թե նըանք արհ-
միության անդամ են թե վոչ:

Կան մարդիկ, վորոնք անսպայմտն ուղում են, վոր
ինչի մասին ել խոսելիս լինեն, բոլորն ել՝ պարտավո-
րապես կանգ առնեն յերիտասարդության հարցի վրա:
Խոսում ես համաշխարհային հեղափոխության մասին,
խոսիր յերիտասարդության մասին. խոսում ես յեր-
կարշարժի մասին—յերիտասարդության մասին ել՝ մի
բան ասա (ծիծաղ), թե չե կարող և այնպիսի տպա-
վորություն ստացվել, վոր յերկրաշարժ ե յեղել, իսկ
յերիտասարդություն այնտեղ չի յեղել (ծիծաղ): Շատ
բան կա, վոր յես չեմ շոշափել իմ թեղիսներում:
Ասում են, վոչ դու վոչինչ չասացիր յերիտս սարդու-
թյան մասին: Ցեղը վում եմ, սիրում եմ յերիտասար-
դությունը, դուք լավ տղերք եք, ու չարամտությամբ
չե, վոր յես չեմ խոսել յերիտասարդության մասին:

Յեկեք հատուկ բանաձեւ հանենք: Բայց դուք այստեղ
 ինչու յեք ներկայացուցչության հարց հարուցում:
 Մեր և ձեր վեճը ներկայացուցչության մասին—բա-
 վական պրոդայիկ բնույթ՝ ունի: Յեթե դուք այդ
 հարցը կոնֆերենցիա յեք մտցնում, ապա թույլ տվեք
 պատմել կոնֆերենցիային, թե բանն ինչումն ե, վոր
 կոմյերիտմիությունը ներկայացուցչության իրավունք
 ունի, այդ վոչվոք չի ժխտում, բայց բանն այն ե, վոր
 դուք կամենում եք, վորպեսզի դուք ձեր ներկայացու-
 ցիչներն ուղարկեք արհեստակցական մարմիններ, և
 մենք նրանց գրույքով վճարենք, ոոճիկ կապենք ձեր
 ներկայացուցիչներին: Մենք դրա դիմ ել չենք վիճում,
 բայց մենք կվճարենք միայն այն դեպքում, յերբ նրանք
 տարրական չափով կհամապատասխանեն նրանց հան-
 ձընվող աշխատանքին: Այս տեսակետից ձեր ախոր-
 ժակը վատը չե: Դուք կամենում եք, վորմենք նրանց
 վճարենք 120—160 ոուրլի (Թյազանով. «Կուսակցա-
 կան մաքսիմումը»): Բայց այդ դեպքում արդյունաբե-
 րության մեջ ել ՞վ կսովորի, վորպեսզի հետո դառ-
 նա փականագործ, խառատ, թուջ ձուլող: Ել արժի
 սովորել, յերբ կարելի յե ներկայացուցիչ գնալ արհ-
 միություն՝ առանց վորեն բան իմանալու, առանց
 վորեն բան անել կարողանալու և ստանալ լավ գրույք՝
 120 ո., Յերբեք վոչ մի հիմար սովորելու չի գնա
 (ծիծառ): Մենք ձեղ ասում ենք լավ տղերք տվեք,
 աշխատող տղերք, և մենք նրանց կվճարենք, բայց լավ
 տղերք տվեք: Մենք ել ենք մեր ներկայացուցիչներն
 ուղարկում հաղարներով ու տասնյակ հաղարներով,
 բայց մենք հարկադրում ենք նրանց աշխատել: Ինձ
 մոտ ուղարկած ներկայացուցիչն յես ասում եմ. դու

ներկայացուցիչ ես:—Այս, ներկայացուցիչ եմ: «Իսկ
 աշխատել կարժի ես: Յեթե կարող ես, ոոճիկ կվճարենք,
 յեթե չես կարող—սովորիր»: Դուք, եոմյերիտմիություն,
 ներկայացուցիչ եք ուղարկում և ուզում եք, վոր մի-
 այն նրա համար, վոր նա ներկայացուցիչ ե, նրան
 ոոճիկ տան: Իսկ մենք կոմյերիտմիությանն ասում
 ենք. կոմյերիտմիություն, ներկայացուցիչն ուղարկիր,
 թող ներկայացուցչություն անի, բայց նրան ինքներդ
 պետք ե ոոճիկ տաք: Ահա թե բանն ինչումն ե (ծիծառ):
 Նույն այս վեճերն են տեղի ունենում նաև պիոնե-
 րական ջոկապետների հարցի շուրջը: Դուք ասում եք,
 վոր մենք պարտավոր ենք՝ մեր հաշվին ընդունել պիո-
 ներական ջոկապետներին: Մենք հարցնում ենք. ինչ
 կնսափի: Ցուրաքանչյուր ողակապետ—90 ոուրլի: Իսկ
 նա ՞վ ե: Մի պատանի, գուցե և շատ լավ, բայց ար-
 տադրական ստաժ չունեցող և նույնիսկ միջնակարդ
 դպրոց չավարտած: Ել ՞վ կդնա վողորմելի արդյունա-
 բերություն՝ սովորելու: Արդյունաբերության մեջ 90
 ոուրլի ստանալու համար պետք ե 4 տարի աշխատել
 կուղը կուցնել, թշաձուլաբանում որական յերկու
 փունտ հող ուտել: Թե չե սրանք ել են 90 ոուրլի ու-
 զում: Զենոնու չի, մեր կրպանի համար թանգ ե: (Ծի-
 ծառ: Ծափեր):

Արդյոք դուք չեք համաձայնի հետեւյալին. վորպես-
 զի մենք դեպի ձեղ մեր լիակատար հարգանքը ցույց
 տանք, մեր ներկայացուցիչները կուղարկենք ձեղ մոտ,
 իսկ դուք նրանց ոոճիկ կտաք (ծիծառ, յերկարատեվ
 ծափեր):

Մենք վոչ թե սկզբունքի մասին ենք վիճում, այլ
 դորձնականի, իսկ դա դաժան ե, իսկ մենք դորձնական

մարդիկ ենք, ամբողջ ժամանակ գոռշների, հետ գործ ունենք: Մենք առաջ ենք քաշում յերիտասարդությունը, բայց յերբեմն այդ բանը բավարար չափով չի արվում՝ չսորհիվ այն հանգամանքի, վոր մեզ պահանջներ են առաջադրում այն մասին, վոր մենք պարտավոր ենք յերիտասարդությունն ամենից շատ առաջ քաշել արհմիութենական մարմիններում և անպայման վարձատրել նրանց: Բայց յերբ մենք յերիտասարդությունը քաշում ենք դեպի պետական և արհեստական աշխատանք, յես կարծում եմ, վոր այստեղ մենք չպետք ե շատ վոգերգիւք:

Ի՞նչ ե 18—19 տարեկան հասակի յերիտասարդության առաջ քաշելը: Յերիտասարդությունը չի ավարտել արդյունաբերության գպրոցը, նա չունի արտադրական ստաժ, չի ավարտել միջնակարգ կրթությունը: 16 տարեկան հասակում նա արդյունաբերության մեջ ե մտել, իսկ 18 տարեկան հասակում նրան առաջ են քաշում: Ի՞նչ գործի յեն առաջ քաշում: Վարչական տնտեսական պաշտոնների, իսկ նա ի՞նչ գիտե... Մեղք գործած չեինք լինի, յեթե թույլ տայինք, վոր նա 2 տարվա փոխարեն 6 տարի աշխատի: Այն ժամանակ նրան կարելի յե առաջ քաշել: Թե չե նա դեռ նոր ե յեկել, գործարանի հոտը հազիվ ե առել, և արդեն առաջ են քաշում: Առաջ դու մի ծանոթացիր, թե ինչ ե՝ աշխատանքը, ֆաբրիկան, գործարանը, արդյունաբերությունը, նոր այն ժամանակ քեզ առաջ կը աշեն, այն ժամանակ մենք ել քեզ կպաշտպանենք ամբողջությամբ ու լիովին:

Այժմ ֆիզկուլտուրայի մասին—մի հարց, վոր բարձրացրեց լոկ. Մատվեյեց: Մենք սեկորդսմենության

դեմ ենք,—հայտարարում ե նա: Յես պետք ե հետեւյալն ասեմ. յես բնավ չեմ առաջարկում սուր կերպով վոլխել մեր ֆիզկուլտուրայի ուղղությունը, յես բնավ չեմ ուղարկում ասել, թե կանոնավորիչ շարժումը—վատ շարժում ե: Լարումն ու թուլացումը հարկավոր են, բայց յես դեմ վեր մինչի միայն կանոնավորիչ շարժում, միայն լարումն ու թուլացումը, իսկ մեացածն ամբողջը սատանայատուր լինի: Յեթե ասում են. «Յես ձգտում եմ առաջ գնալիմ զարգացման մեջ, ուզում եմ մասնակցել մքցությանը», դուք ասեք. «Վոչ, չհամարձակվես, լարման ու թուլացման յենթարկվիր»: (Ծիծաղ):

Ոեզլամենտացիա: Յես դեմ եմ նման վայրենի ոեզլամենտացիային: Կանոնավորիչ շարժումը շատ լավ բան է, և, յեթե հշողությունն ինձ չի դավաճանում, առաջին անգամ յես դրեցի կանոնավորիչ շարժման հարցը: Բայց անփափկանկատ ոեզլամենտացիա պետք չե, թե՝ այսպես շնչիր, իսկ այսպես՝ չհամարձակվես: Այ, յերբ մեկին ասում ես. չհամարձակվես, այդ նրա մեջ դիմագրելու զգացմունք ե ծնեցնում, և նա ասում ե. յես այսպես եմ կամենում: Այլ կերպ նա տիրում ե ու հետանում:

Ահավասիկ ձեզ մի որինակ: Լույս տեսավ մի շատ հարգելի հաստատության՝ Քաղղուսպլխավարի ակումբի աշխատանքին նվիրված ժողովածուն: Այստեղ այսպիս բան ե զրված. վայնաչարի կարելի յե պարել բայց վոչ ամեն պար, այլ սիայն բնորոշ պարեր, ըստ վորում Ուկրայնայում՝ գոպակ, իսկ Վելիկոուսիայում՝ տրեպակ (ծիծաղ): Իսկ յեթե հանկարծ Ուկրայնայում մեկը ցանկանա կամարինսկի պարել: Զի կարելի, չհամարձակվես, Վելիկոուսիայում այդ լավ ե, իսկ

այստեղ այդ ազգայնական վոգի կհամարվի: Յեթև
գու կամարինսկի յես պարում Ուկրայնայում, նշանա-
կում և վելիկոսուսական շովինիզմ ես յերեան բերում
(ծիծառ):

Ընկեր. Ալեքսեյեան իր ճառում այստեղ առաջա-
դրեց մի շատ ճիշտ առաջարկ, վորպեսզի բանվորների
առանձին խմբակներին մոտենանք աշխատանքի հա-
սուկ մեթոդներով: Ընկ. Ալեքսեյեան այդ հասկացել
ե, բայց իմ հին ըարեկամ ընկ. Ռյազանովը այդ չի
հասկացել: «Բավարար չափով չի կիրառվում ինդիվի-
դուալ մոտեցումը դեպի բանվորների յուրաքանչյուր
խմբակը՝ համաձայն նրա կուլտուրական մակարդակի»,
ասում ե ընկ. Ալեքսեյեան:

Դա ակումքների թերությունն ե, մեր աշխատանքի
թերությունը: Իսկ ընկ. Ռյազանովը ասում է. բոլորդ
հանրային տներում հալվեցեք: Ի՞նչ ե այս: Այս հին
ժողովրդական տներն են, վորպիսի բնույթ ենք տա-
լիս մենք յերեմն մեր ակումքներին: Բոլորը պետք ե
այդտեղ գնան, բայց այնտեղ կլինի այլատարը հասա-
րակություն՝ առանց վորեն կապի: Իսկ մենք ի՞նչ ենք
ուզում: Կապ մասսայի և իր միության միջև ու ա-
կըմքի անդամների միջև: Կասեն «համքարականու-
թյուն ե»: Բայց յերբ զուք միենույն ակմբում հա-
վաքեք խորհրդային ծառայող-հաշվապահին, թշաձու-
լարանի բանվորին և բեռնողին՝ կարծում եք, վոր այն-
տեղ համերաշխ, միացյալ աշխատանք կկատարվի, վոր
այնտեղ կենդանի աշխատանք կսկսվի...»

Ընկերներ, յս ավարտում եմ իմ խոսքը: Յես կար-
ծում եմ, վոր ճիշտ չեր լինի, յեթե այստեղ մեր հ
տնտեսավարների միջև ծադած վեճը մեկնաբանվեր,

վորպես տնտեսավարներին հալածելու վորեկ փորձ և
վորպես հարձակման ազդանշան. ընկեր տնտեսավար-
ներ, մենք ձեզ գնահատում և հարգում ենք, զուք մեր
ընկերներն եք, բանվոր դասակարգը ձեզ ամենապա-
տասխանատու դիրքերից մեկն ե հանձնել: Զեր սխալ-
ները գուցե ավելի չեն արհմիությունների և այլ կադ-
մակերպությունների սխալներից: Բայց տվյալ գեպ-
քում, ժամանակի այս անցյալ կտրրի ընթացքում, յե-
թե այդ այդպես հրատապ կերպով գրսեորդեց, զրա-
պատճառն այն ե, վոր խնայողության ոեժիմի հետե-
վանքով մի ամբողջ շարք տնտեսավարներ զլիխվայր
դրին այդ գործը: Այս, այսորվա լրագրում յես կարդում
եմ. «Գլավտեքստիլը խնայողության ոեժիմ ե կիրա-
ռում. տնտեսել ե 600,000 ոուրդի», — իհաշիվ ինչի, բնչ
եք կարծում. «իհաշիվ լվացատների և բաղնիքների»:
Մտածեցեք այս մասին, ընկեր դիրքեկտորներ: Յեզ յե-
թե այսպիսի բան եք անում, արժե սրանով պարծե-
նալ և լրագրերում տպել: Կարծես թե մեզում այդ-
քան շատ են լողանում, և կարծես թե այդ իրոք պեր-
ճանքի ու շուայլության առարկա: յետեղութիւնը բան-
վորների համար: Յեթե խնայողության այսպիսի ոե-
ժիմ կիրառելու հողի վրա արհմիությունների համար
շատ ցավոտ խնդիրներ են առաջացել, իսկ ձեզ թվում
ե, թե ձեր բեռան վրա նոր ծանրություն են ավե-
լացրել—վերահսկիչ հանձնաժողովները, — այդ սխալ ե:
Իրավացի չեն այն տնտեսավարները, վորոնք կարծում
են, թե իրենց վրա հարձակվեցին և այլն: Այդպիսի
բանի հոտն անգամ չկա:

Դեռևս շատ բան կա, վոր մենք չենք արել: Յես կար-
ծում եմ, վոր այժմ, այս կոնֆերենցիայից հետո, մեր

աղիսատանքի մեջ թարւ հոսանք կմտցվի, և այն, վոր
մենք պետք եւ դեռևս անենք, մենք դանդաղ ու ան-
վրեզ, առանց առանձին բժախնդրության, միասնա-
բար, մեկս մակի սխալ ուղղելով՝ կիրագործենք: (Միա-
համուռ յերկարատեվ ծափեր):

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴՐԻՆՆԵՐԸ

Բանաձև ընկ. Տոմսկու զեկուցման առթիվ
(Հնդունված և միաձայն)

Կախաբան

Հնթացիկ մոմենտը բնորոշվում է ընդհանրապես
յերկրի արտադրողական ուժերի և մասնավորապես
պետական արդյունաբերության արագ աճումով: Մի-
հնույն ժամանակ այդ աճմանը զուզակցում են սո-
ցիալական ներհակությունների աճումը և—տվյալ սահ-
մանափակ ժամանակաշրջանում—դասակարգային պայ-
քարի վորոշ չափի սրումը մեռ յերկրում, յերբ համե-
մատական չափով ամրացել են պրոլետարիատի տնտե-
սական և քաղաքական դիրքերը: Պրոլետարիատի աշ-
կարա թշնամի դասակարգերի ու խմբակցությունների
(բուրժուազիա, կուլակներ) աճող տնտեսական, ինչ-
պես և քաղաքական ակտիվությունը, նմանապես և
պրոլետարական դեկավարության կարու ու անխոռ-
սափելի տատանումներ յիրեան բերող քաղաքային ու
գյուղական մանր բուրժուազիայի աճող ակտիվությու-
նը, պահանջում են կոնսոլիդացիայի յենթարկել, հա-
մախմբել և կազմակերպել աճող պրոլետարիատի բո-
լոր ուժերը: Ինգուստրիալ պրոլետարիատը, վորակս
խորհրդային հասարակության դեկավար դասակարգ,

պետք և այսուհետեւ ել ամեն կերպ ամրացնի իր դիրքը և ուժեղացնի իր ազգեցությունն ու իր գերը։ Արհեստակցական միությունները, վորոնք իրենց կազմի տեսակետից բանվորների զուտ դասակարգային միավորման ընդարձակագույն ձևն են, ներկա մոմենտում հսկայական խնդիրների առաջ են կանգնում։

Բանվոր դասակարգի նոր խավերի կումմունիստական (ընդհանուր քաղաքական, կուլտուրական, արդյունաբերական) դաստիարակությունը, պրոլետարիատի ընդհանուր ակտիվության բարձրացումն ինչպես յերկրի քաղաքական կյանքում, այնպես ել անտեսական սոցիալիստական շինարարության գործում, պրոլետարիատի նյութական կյանքի մակարդակի բարձրացումն՝ աշխատանքի արտադրողականության աճան հետեանքով, պրոլետարական մասսաների ներդրավումը՝ բյուրոկրատիզմի և պետապարատի բյուրոկրատական աղավաղումների գեմ տարվող պայքարի մեջ—հատուկ ուժգնությամբ որակարգի մեջ են մտնում։

Մեր անտեսության կյանքի բնկան մոմենտը, վորը կապված ե վերականգնման պրոցեսից ու եկոնոմիկական անցնելու և այդ անցման դժվարությունների հետ—պահանջում և արհմիություններից հատուկ լարված աշխատանք՝ մասսաներին լայնորեն լուսավորելու, նրանց հետաքրքրությունը դեպի ամրող դասակարգի ընդհանուր խնդիրները բարձրացնելու և բանվորական մասսաներին ավելի լայն չափերով դեպի սոցիալիստական շինարարության ամբողջ գործը (խորհուրդներ, տնտեսական որգաններ, կոոպերացիա և այլն) գրավելու համար։

Արհեստակցական միությունների աճումը, վոր հե-

տեանք ե մեր յերկրի պրոլետարիատի աճման, պետք ե զորեղ ֆակտոր հանդիսանա՝ պրոլետարական զիկտատուրայի և սոցիալիստական շինարարության աճրացման համար։

Դրա հետ միասին, հարձակվող կապիտալի հարվածների տակ զարգացող արհշարժման միջազգային միասնականության պայքարի նկատառումով՝ ԽՍՀՄ արհմիությունների առաջ կանգնում ե միջազգային պրոլետարական պայքարի ճակատում ավելի յեռանգույն աշխատանք կատարելու խնդիրը։ ԽՍՀՄ արհմիությունների ազգեցության աճումն այս ասպարիզում պետք ե ել ավելի ամրացնի պայքարող պրոլետարիատի լայն մասսաների միջազգային համերաշխության կապերը, նպաստե կամբուլիստական յերկրների և Խորհրդային Միության պրոլետարների յեղբայրական կապի գործին և զբանով իւկ նպաստե աշխատավորների համաշխարհային ազգատագրմանը կապիտալի լծից և միջազգային հեղափոխության հաղթանակի համար մզգող պայքարին։

ԱՐՀՅԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՒԹՅՈՒՆՆԵՐ

Զնայած անցած տարվա մի շաբք տնտեսական դժվարություններին, խորհրդային տնտեսությունը շարունակում էր անընդհատ աճել։ Նրա աճման հետ միասին արդյունաբերության բոլոր ճյուղերում շարունակում էր աճել պրոլետարիատի քանակը և արհմիությունների անդամների թիվը։

Առ 1-ն ապրիլի 1925 թ.-6,950 400 հ.

Առ 1-ն ապրիլի 1926 թ.-8,768,200 հ.

Աճումը հավասար ե 26,2 տոկոսի։

Արհմիությունների թվական աճմանը զուգընթաց տեղի յեր ունենում նրանց աշխատանքի անընդհատ խորացումը պրոլետարական դեմոկրատիայի հիմքերի վրա, արհմիութենական կազմակերպությունների ցանցի լայնացումը, միութենական ակտիվի ընդլայնումն ու թարմացումը՝ գեղի պրոլետարական հանրային աշխատանք բանվորների նոր տասնյակ հազարներ գրավելու միջոցով,—գործնականում ամբողջապես և լիովին հաստատելով XIV կուսամագումարի հրահանգների ճշտությունը:

Նշանակալի չափերով առողջացել են նաև արհմիությունների վողջ ֆինանսական քաղաքականությունը. ֆինանսներն ամրացել են, ավելացել են կուտաշխատանքի վրա արվող ծախսները, լավացել են ֆինանսական հաշվետվությունը, ուժեղացել են բարձրադաս կազմակերպությունների կողմից տարվող վերահսկողությունը, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովների գործունեյությունը, նշանակալիորեն կրճատվել են վատնումները:

Սակայն արհմիությունների աշխատանքի բոլոր անպարեզներում ձեռք բերած անկասկածելի հաջողությունների ու «անտեսական» թեքման այլանդակ ձեվերի վերացման հետ միասին, հարկավոր են նշել նրանց աշխատանքի մեջ գոյություն ունեցող մի շարք լուրջ թերություններն ու շեղումները, գորոնք կարող են դանդաղեցնել XIV կուսամագումարի գորոշումների կենսագործումը. Այդ թերություններն ու շեղումները վերջնականապես և վճռականորեն պետք են վերացվեն:

Զնայած ընդհանուր մասսայական աշխատանքի

նշանակալի չափերով լավանալուն և արհմիությունների բարձրագաս ու ստորին մարմինների միջև հաստատված կենդանի կապին, արհմիությունների աշխատանքների մեջ գեռես նկատելի յեն հետեւյալ թերությունները.

1. Արհմիություններն անբավարար են կատարում իրենց անմիջական պարտականությունը՝ բանվորների ու բանվորուհիների անտեսական և կենցաղային պահանջների ու շահերի պաշտպանությունը. վայրավարար ուշագրություն են զարձնում նրանց մասը կենսական, կենցաղային և տնտեսական կարիքների ու պահանջների վրա. բավարար յեռանդուն պաշտպանություն չեն ցույց տալիս բանվորների արդարացի և որինական պահանջներին, վոր հարուցվում են պետական և տնտեսական որգանների առաջ. այդ պահանջների կենսագործման ժամանակ հանդես են բերում գանդաղկոտություն, յերբեմն ել քաշքառուկ:

2. Դեռևս բավարար լինելուց հեռու գործնական կապը արհմիությունների կենտրոնի, նահանդական բաժանմունքների ու ույոնական կոմիտեների միջև մի կողմից, այդ վերջինների և ձեռնարկությունների միջև մյուս կողմից, ինչպես և գործարկումների զեկավարների ու աշխատող մասսայի, ցեխերի միջև—վկայում ե, վոր զեկավարության գրասենեկային մեթոդները նշանակալի չափերով գերակշռում են, վորը միշտ տանում ե զեղի փոխադարձ անհասկացողություն զեկավարվողների և զեկավարողների միջև, գեղի փորմալիզմ մեկ կողմից, և զեղի ջայնացում ու անվատահություն մյուս կողմից. Սա միութենական դիսցիպլինայի խախտման ու կոնֆլիկտաների և «առանց» արհ-

միությունների «գիտության» տեղի ունեցած գործառությունը ունեցող փաստերի պատճառներից մեկն եւ Հարկավոր ե հավասարապես նշել իբրև թերություն, վոր արհմիութենական բարձրագույն կազմակերպությունների դեկավարներն ու ներկայացուցիչները չափազանց սակավ են ձեռնարկություններ այցելում:

3. Մի շարք սայոններում գործարկումների վարձատրություն ստացող ընտրովի աշխատողների (նախագահների, քարտուղարների, նախագահության անդամների) վոչ-բավարար թարմացումը, —անկուսակցական բանվորների թույլ գրավումը գեպի այդ պոստերը, ինչպես և դեպի արհմիութենական կազմակերպությունների բարձրագույն մարմինները (նահանգական բաժանմունքներ, արհմիության նահանգական խորհուրդ, կենտրոն), —վորն սպառնում ե մեկուսացնեայդ խավին պատկանող աշխատողներին և կտրելնրանց մասսաներից:

4. Անբավարար եյերիտասարդ ակտիվի դաստիարակության վրա թափվող աշխատանքը, վորը նրա շարքերում նկատվող անտոկունության, տատանումների և միության ազգեցությունը մասսաներում ապահովել չկարողալու փաստերի պատճառ ե հանդիսանում:

5. Մասսայական աշխատանքի թերությունները, մասնավորապես ընդհանուր և ներկայացուցչական ժողովների որակարգի ծանրաբեռնումը վերացական, բանվորների համար անհետաքըրական հարցերով, վորոնց ծովում խեղղվում են և պատշաճ չափով յերեան չեն բերքում ու չեն լուսաբանվում բանվորների համար կենսական հանդիսացող անտեսական և կենցաղարքին

հարցերը, ինչպես և ընդհանուր ժողովներում ընդունաված վորոշումների չիրականացնելն ու վոչ ժամանակին լուսաբանները, բանվորների հուսախարվելն ընդհանուր ժողովներից, նրանց հոգնելն ու անլուրջ վերաբերմունքը դեպի այդ ժողովը:

6. Միանգամայն անբավարար են արհմիությունների կապն ու մասնակցությունը խորհուրդների և նրանց մարմինների, կոռպերացիայի և այլ կազմակերպությունների աշխատանքներին; Դա անհորմալ և մանավանդ այդ մարմինների ու կազմակերպությունների աշխատանքի ծավալման ու աշխատացման այժմյան պայմաններում, յերբ պահանջվում ե առավելագույն չափերով ուժեղացնել բանվորների կազմակերպված մասնակցությունը խորհրդային և կոռպերատիվ շինարարության բոլոր սպառեկներում:

7. Միութենական աշխատանքների թերությունների թվին ե պատկանում նաև գործարանային կոմիտեների վերջին վերընտրությունների դասը: Զնայած այն բանին, վոր գեպի ակտիվ արհմիութենական աշխատանք և գեպի արհմիությունների բոլոր ընտրովի մարմինները զրաված բանվորուհիների ընդհանուր թիվը անընդհատ աճում էր, գործարկումների վերջին ընտրությունները ցույց են տալիս, վոր ընդհանուր բարձրացման կողքին՝ կանանց տոկոսը խոշոր արդյունաբերական կենտրոնների առանձին գործարկումների կազմում վորով չափով ընկել ե:

Արհմիությունները պարտավոր են նորմալ դեմոկրատիայի սկզբունքները չխախտելով, միութենական մարմինների ընտրությունների ժամանակ ավելի յեռանդուն բացարարական աշխատանք կատարել իրենց

անդամների շրջանում՝ հոգուտ այն բանի, վոր անհրաժեշտ եղած ե բանվորուհիներին առաջ քաշել դեպի բոլոր արհմբութենական, տնտեսական և խորհրդային պոստերը, ընտրությունների ժամանակ յեռանդուն կերպով՝ պաշտպանելով բանվորուհիների թիկնածությունը:

Արհմիությունների բոլոր աշխատանքների մեջ պետք ե ավելի ուշադրություն դարձնել ձեռնարկությունների բանվորուհիների շրջանում աշխատանքը ծավալելու վրա, համաձայն կենակոմի և ՀԱՄԿԽ-ի վերջին զիրեկտիվների, վորոնք ճիշտ սահմանափառմ են բանվորուհիների շրջանում կատարվելիք կուսակցական և արհեստակցական աշխատանքները, Բանվորուհիների շրջանում կատարվող աշխատանքն ամբողջապես գործարկումների և տեղիումների վրա դնելու արդյունքն այն կլինի, վոր ավելի լավ և ավելի լրիվ կերպով կապասարկվեն բանվորուհիների պահանջներն ու շահերը (աշխատանքի պաշտպանություն, վորակավորման բարձրացում և այլն), և դրանով իսկ բանվորուհիներն ավելի կշահագրգութեն միութենական աշխատանքով:

8. Հավաքական պայմանագրերի քննարկման փորձը ներկայացուցչական և ընդհանություղում ժողովներում, տվեց, անշուշտ, դրական արդյունք, զարգացնելով բանվորների մեջ ավելի գիտակից վերաբերմունք դեպի հավաքական պայմանագրից բղխող իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես և ավելի հստակ ու գիտակից պատկերացում իրենց ձեռնարկության տնտեսական դրության և արդյունաբերական խնդիրների մասին։ Հավաքական պայմանագրի այդպիսի քննարկման փորձը բանվորների ընդհա-

նուր ժողովներում, վորին պետք ե հետեւ հետազազելուցութիւնը՝ բանակցությունների ընթացքի և նրանց վերջնական արդյունքի մասին՝ պետք ե տարածել ամենուրեք։ Դրա հետ միասին պետք ե ընդունել վոր հավաքական պայմանագրերի կնքման ասպարիզում տեղի յեն ունեցել ձգձգման փաստեր, վորոնք բանվորուհիների մեջ գժգոհություն են առաջացնում։ Այս յերեվույթը վերացնելու համար հանձնարարել ՀԱՄԿԽ-ին, ԺՏԾԽ ին և Աշխատողկոմատին տալ համապատասխան ցուցմունքներ ստորագրած կազմակերպություններին ու հաստատություններին։

ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵՖԻՄ

Պրոլետարիատի հիմնական կարգերի քաղաքական և կուլտուրական աճումը զարգացնում ե պրոլետարիատի զգայուն վերաբերմունքը դեպի հեղափոխական իրավունքի բոլոր խախտումները և դեպի Խորհրդային իշխանության գծի բյուրոկրատական ազագայումներն առանձին առմինիստրատորների կողմից։ Նա հիմք ե հանդիսանում աշխատանքի արտադրականության հետագա աճման և սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունների համար, վորին իր գիտական մասնակցությունն և բերելու ամբողջ պրոլետարիատը։ այդ աճումը միենույն ժամանակ պահանջում ե աղմինիստրատորներից ու տէնտենավարներից զգայուն մոտեցում դեպի բանվորները, ուշադրություն և Խորհրդային պետության գծի ճիշտ կիրառում՝ խորհրդային և մասնավորապես տնտեսական աշխատանքի բոլոր ասպարիզներում, ինչպես և որենքների ու բանվորների իրավունքների պահպանում։

Խնայողության ռեժիմը վորպես անհրաժեշտ նախադրյալ սոցիալիստական կուտակման, արտադրանքի հնգնարժեքի և բոլոր մթերքների ու ապրանքների գների իջեցման, արդեն տվել ե վորոշ, ճիշտ և տակավին համեստ արդյունքներ, և անկասկածելի յե, վոր մեր հաջողություններն այդ ասպարիզում տարի տարու վրա աճելու յեն, միենույն ժամանակ նախադրյալ հանդիսանալով բանվորների տնտեսական դրության հետագա բարելավման համար:

Այսպիսով խնայողութ. ռեժիմն ուղղված է գեպի բանվորների ու բանվորուհիների հոկտեմբերյան նվաճումների ամրապնդումն ու զարգացումը և կարող է հաջողությամբ կիրառվել բանվորական լայն մասսաների ակտիվ աջակցությամբ միայն, հիմք ունենալով պետական ու տնտեսական ապահարատի թերությունների դեմ տարվող պայքարը, արդյունաբերության դրվագքի ու արդյունաբերության կառավարման սիստեմի կատարելագործումը, անարտադիր ծախսերի անողոք կրճատումը և աշխատանքային կարգապահության ամրապնդումը, ըստ վորում իրականապես պետք ե պաշտպանվեն բանվորների իրավունքներն ու շահերը:

Այս պատճառով անպայման անհանդուրժելի պետք է համարել խնայողության ռեժիմի տեղի ունեցած ակընհայտ աղավաղումները մի շարք տնտեսական մարմինների կողմից, վորոնք կիրառել են այն վոչ թե իհաշիվ արտադրական պրոցեսսների ռացիոնալացման և վերադիր ծախսերի կրճատման, այլ բանվորների շահերի ու կենսական պահանջների խախտման միջոցով, ջղայնացնելով բանվորներին նորմերի և գնահատման մասնակի անժամանակ վերաքննությամբ, վարչական կազ-

մի մասը, բժախնդիր վերաբերմունքով և յերբեմն ել նույնիսկ հավաքական պայմանագրի ու Աշխատանքի Որենքների Կողեքսի ուղղակի խախտում կառարելով: Կուսակցությունն ու արհմիությունները պետք ե ամենավճառական սլայքար հայտարարեն կուսակցության և Խորհրդային իշխանության գծի ամեն տեսակի աշխադարձումներին, վոր կատարվում են անտեսական մարմինների և անհատ աղմինիստրատորների կողմից:

Միենույն ժամանակ արհմիությունների հերթական խնդիրն ե հանդիսանում պլանաշափ անդադրում աշխատանքը արհմիութենական աշխատանքային կարգապահության ամրապնդման վրա և վճռական պայքարը այս անարխիկ պրիորների գեմ, վոր կիրառում են բանվորների առանձին խմբերը տնտեսական և կենցաղային հարցեր լուծելու համար («վոլինկաները», առանց միության թույլտվության գործադուլ հայտարարելը և այլն), և նախապես չեն սպառում իրենց պահանջների բավարարման որինական և նորմալ մեթոդները:

Հավասարապես վճռական կերպով պայքարելով տընտեսական մարմինների բյուրոկրատական աղավաղումների գեմ, յեռանդով պաշտպանելով բանվորների տընտեսական և կենցաղային շահերը, արհմիությունները պարտավոր են, պրոլետարների հիմնական, ամենից ավելի գիտակից կազմերի վրա հենվելով, մղել վոչ պակաս յեռանդուն պայքար արտադրության և աշխատանքի կարգապահության նկատմամբ սանձարձակ վերաբերմունք ունենալու դեմ, այդ սանձարձակությունը կործանման սպառնալիք համարելով բանվոր գասակարդի կենսական գործ հանդիսացող ամբողջ սոս-

ցիալիստական շինարարության համար։ Գործալքում-ներին, շիբերթությանը, գեղի իր պարտականությունը անբարեխիղճ վերաբերմունք ցուց տալուն արհմիությունները, հենվելով պրոլետարական հանրային կարծիքի վրա, պետք ե ամենավճռական կոիվ հայտարարեն։ Արհմիությունները վոչ միայն պետք ե պաշտպանեն տնտեսական մարմինների բոլոր խելացի ձեռնարկումները, վորոնք ուղղված կլինին խնայողության ոեժիմի կիրառման կողմը, այլ և նախաձեռնողներ լինեն այնպիսի կոնքրետ առաջարկների, վորոնք ուղղված կլինին դեպի խնայողության ոեժիմի և արտադրության ռացիոնալացման կուսակցական լողունդների կիրարկում։

Արենքների, պայմանագրերի և աշխատանքի ու արտադրության կանոնների (Աշխ. Որ. Կող., հավաքական պայմանագրեր, ներքին կարգուկանոնի կանոններ, հաշտարար մարմինների և միջնորդ դատարանների վորոշումներ և այլն) ճիշտ գործադրումը ինչպես վարչության, այնպես ել բանվորների կողմից պետք ե անհրաժեշտագույն նախադրյալը լինի աշխատանքի ճիշտ կազմակերպման և առողջ աշխատանքային կարգապահության համար։

ԱՐՑԱՌԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համ. կե XIV համագումարը ցույց տվեց կուսակցությանն ու արհմիություններին, վոր «լայն բանվորական մասսաներին դեպի խորհրդային տնտեսության գործնական շինարարության գործը գրավելու նրանց մեջ սոցիալիստական պետության տնտեսական հաջողությունների աստիճանից աշխատավորների շա-

հերի սերու կախված լինելու գիտակցություն գամ-տիարակելու, բանվորների շարքերից տնտեսավարների և աղմինիստրատորների նոր կադրեր առաջ քաշելու և դաստիարակելու լավագույն ձև են հանդիսանում արտադրական խորհրդակցությունները ֆարբիկաներում, գործարաններում և այլ խոշոր ձեռնարկություններում։

Կոնֆերենցիան գտնում ե, վոր արտադրական խորհրդակցությունների դերի այս բնորոշումը, վոր տվել և XIV համագումարը, ամբողջությամբ և լիովին արդարացավ կյանքում։ Ներկայումս արտադրական խորհրդակցությունները (և կոնֆերենցիաները), արհմիությունների վարպետ ու յեռանդուն դեկավարությունը վայելելով, առանձնապես աչքի ընկնող գերպետք ե խաղան, բանվորների լայն խավերը հաղորդակից դարձնելով արդյունաբերության կազմակերպման և սոցիալիստական շինարարության ամբողջ գործին, դաստիարակելով ու սովորեցնելով նրանց արդյունաբերության կառավարման գործը, առաջ աշեղով պրոլետար աղմինիստրատորների և տնտեսավարների նոր հաղարներ և դրանով իսկ ստեղծելով հաստատուն պատվանդան բյուրոկրատիզմի դեմ կովելու և ամբողջ պետական ու տնտեսական ապահովատն առողջացնելու համար։

Հակառակ ոպպողիցիայի պանլիկական կանչերի արտադրական խորհրդակցությունները զարգանում են և աստիճանաբար անցնում ավելի խորացրած աշխատանքի։ Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի առաջին ետապը—ամենակենսական թերությունների քննարկումն ու վերացումը—հիմնականում համարյա ավարտված ե։

Արտադրական խորհրդակցությունների մեջ նկատվող ժամանակավոր հապաղումները բացարձում ելին տնտեսական հիմնարկություններում գոյություն ունեցող ձգձգումներով. տնտեսավարների և գործարանային աղմինիստրացիայի մի մասի արհամարհական վերաբերմունքով զեպի այդ խորհրդակցությունները. յերբեմն այդ աղմինիստրացիայի խանդոս վերաբերմունքով զեպի բանվորների առաջարկները, առանձին արհմիությունների անուշագիր, յերբեմն ել անփույթ վերաբերմունքով զեպի այդ խորհրդակցությունները, նրանով, զոր արհմիությունները չեն հասկացել արտադրական խորհրդակցությունների տեխնիկապես հնարավոր և արտադրականորեն նպատակահարմար առաջարկների յեռանդուն կենսագործման անհրաժեշտությունը, հրապարակականությունը և պրոլետարական դեմքրատիան (պատի լրագիր, թղթակցություններ, ընդհանուր ժողովներում արվող զեկուցումներ) քաշքշոցների դեմ մզլող պայքարում ոգտագործելու անշնորհությամբ. հաշվառման, վերահսկողության և արտադրական խորհրդակցությունների առաջարրած առաջարկների վճարելի վերաբերող հաշվետվության անբավար լինելով:

Հաստատելով XIX կուսհամագումարի դիրեկտիվները արտադրական խորհրդակցությունների խնդիրների մասին, կոնֆերենցիան ընդունում ե, վոր հերթական խնդիրներ ներկա մռմենտում հանդիսանում են.

1. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի խորացումը պլանայնության անցնելու միջոցներ. այդ բանն ընդունելով իրենք, ըստ վորում ըս-

կը զբնական Աջանում խորհրդակցությունների աշխատանքների պլանը պետք է կազմել համեմատաբար կարձ ժամանակվա համար՝ միենույն ժամանակ չըպետք է հրաժարվել խորհրդակցություններին մասնապետք ի հրաժարվել խորհրդակցություններին այդ կցողների առաջարկը վոչ հերթական հարցերն այդ կցողների առաջարկը վոչ հերթական հարցերն այդ կցողների քննարկմանը յենթարկելուց:

2. Նույն կարգին ե պատկանում ավելի խոշոր ընդհանուր հարցերի, այն ե՝ ամբողջ ցեխի, ամբողջ ձեռնարկության, ամբողջ տրեստի և այլն աշխատանքի և նարկության կազմակերպման հարցերի քննարկեման մասն ու մշակմանն անցնելը, ըստ վորում մեծ, բարդ հարցերը պետք է բաժանել մի շարք ավելի մանր, մասնակի հարցերի, մասնագննին կերպով մշակելով մասնակի հարցերից ամեն մեկը ցեխային արտադրական այդ հարցերից մեջ և հատկապես այդ նպատակակցությունների մեջ և հատկապես այդ նպատակի համար ստեղծվող հանձնաժողովներում. ՀԱՄԿ ի տակի միությունը և միությունների առանձին կենտրոնական խորհրդակցությունների աշխատանքի ուղղակի ուղղությունների ուղղակի ուղղության հիման վրա պետք է մշակեն արտադրական հանձնաժողովների աշխատանքների մեթոդներին և սիստեմներին վերաբերող մի շարք որինակելի հրահանդեր՝ ինչպես ընդհանուր ընույթի կրող, այնպես ել արդյունաբերության առանձին ճյուղերին հարմարեցրած, և պետք է ծեծեն աշխատանքի զեկավարմանը և արտադրական հանձնաժողովների վարձի համախմբմանը նվիրված հատուկ հանդես հրատարակելու հարցը:

3. Բոլոր արհմիութենական կազմակերպությունները պարտավոր են ավելի մեծ չափով, քան մինչև որս ե յեղել, ուժեղացնել իրենց ուշադրությունը գեպի

արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, ուժեղացնել այդ աշխատանքի գործնական զեկավարությունը, հաստատակամությամբ հասնելով նրանց արտադրականապես նպատակահարմար վորոշումների շուտափույթ կենսագործման նպատակին, տնտեսավար՝ երի հետ կարելույն չափ լրիվ և պարբերաբար խորհրդակցություններին՝ իրազեկ դարձնելով նրանց վորոշումների կենսագործումը մերժելու կամ դանդաղեցնելու պատճառներին, կուսկազմակերպությունները պարտավոր են լինակատար չափով ոգնել արհմիություններին՝ այս աշխատանքը կատարելու գործում։

4. Հարկավոր ե պարտավորեցնել տնտեսական մարմիններին, վորոշեցնեն իրենց ուշադրությունը գեղի արտադրական խորհրդակցությունները՝ հուլիսյան շրջաբերականի (ԺԾՒԽ-ի և ՀԱՄԿԽ-ի) հիմունքներով։ ԺԾԽ պարտավոր ե հետեւ հիշյալ շրջաբերականի կենսագործմանը և միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու համար արտադրական խորհրդակցությունների առաջարկների քննության ժամանակ տեղի ունեցող քաշքշուկներն ու անփութությունը՝ պատասխանատվության կանչելով հիշյալ հրահանգները չկատարող և խորհրդային պետության դիճն այս հարցում աղավաղող ադմինիստրատորներին և տնտեսավարներին։

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքը խորացնելու և արտադրական խորհրդակցությունների ձեռնարկությունների կառավարման գործին մոտեցնելու նպատակով, — հենց զրանով ել արտադրական խորհրդակցությունները բանվորական մասսաների կառավարման գործին մոտեցնելու, լավագույն կերպով նրա պլանների, գինանաների, առևտրական և գործառ-

նական ապահովատների և ունեցած միջոցների սացիոնալ ոգտագործման հետ ծանոթացնելու նպատակով՝ ոգտակար և համարվում, իբրև փոքր՝ առանձին ձեռնարկություններում ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ ստեղծելը՝ տվյալ ձեռնարկության բանվորներից, — գորպիսի հանձնաժողովներ կազմակերպում են գործարկություններն ու արտադրական հանձնաժողովները, Նման հանձնաժողովների խնդիրը պետք ելինի մանրամասնաբար ծանոթանալ գործարանային վարչության աշխատանքի վրայոց ժամանակաշրջանի ամբողջ գործունեյության, նրա պլանների, գինանաների, կառավարման մեթոդների, ապահովատի կառուցվածքի, ինչպես և նրա տրամադրության տակ գտնվող միջոցների ուղիունալ ոգտագործման հետ՝ տնտեսավարմների հետ միասին արտադրական խորհրդակցության պետությունում զեկուցում տալու համար։

Այդպիսի հանձնաժողովների իրավունքների և պարտականությունների թվարկումը, նրանց կառուցվածքը և կազմակերպման մեթոդը, ինչպես և այն ձեռնարկությունների ցուցակը, վորտեղ առաջին հերթին պետք ե կերպարկի տվյալ փոքրը, — հանձնարարվում ե մշակել և վրոշել ՀԱՄԿԽ-ին։

Արհմիությունները պետք ե խորացնեն արտադրական կոնֆերենցիաների աշխատանքը՝ նրանց որակարգն ավելի մանրակրկիտ, ձեռնախա կերպով նախապատրաստելու և վաղորոք մշակելու նրանց փորձառության հաշվարկման, նրանց վորոշումների կենսագործումը կանոնավոր կերպով ստուգելու և տվյալ կոնֆերենցիաներում մատնանշված թերությունները վերացնելու միջոցով։

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արհմիությունների աշխատանքը և ուշադրությունը
գեղի տնտեսական հարցերը և գեղի իրենց թիկնա-
ծուներին վարչական-տնտեսական պոստեր քաշելու
գործը անհրաժեշտ և համարել ակնհայտ կերպով ան-
բավարար և թույլ: Միաժամանակ անհրաժեշտ և նշել
անուշադրության մի շարք գեղեր, վոր ցույց են
տվել տնտեսական մարմինները գեղի արհմիություն-
ների ցուցմունքները և տնտեսական պոստերի համար
նրանց առաջադրած թեկնածուները: Այս գրությունը
կարելվույն չափ շուտ պետք ե վերացնել:

Այս բանի համար բոլոր կուսակցական, արհեստա-
կցական և տնտեսական կազմակերպությունները պար-
տավոր են միշտ հիշել Ռեկ XI և ՀամկԿ XIV
համագումարների բանաձեռքը՝ բոլոր պլանավորիչ և
կարգավորիչ մարմիններում արհմիությունների յե-
ռանդուն մասնակցության և բանվորներից անտեսա-
վար ադմինիստրատորներ առաջ քաշելու անհրաժեշ-
տության մասին: Հատուկ ուշադրություն պետք է դար-
ձնել տնտեսական պոստեր գրավելու համար առաջ
քաշվողների թիկնածությունների համաձայնեցման և
հաստատման վրա:

Արհեստակցական կազմակերպությունները պար-
տավոր են ուժեղացնել իրենց ուշադրությունը գեղի
տնտեսական մարմինների վերստուգիչ հանձնաժողով-
ները, լավացնել այդ հանձնաժողովներում իրենց ներ-
կայացուցիչների կազմը, նրանց հետ ամենասերտ կազ
հաստարել այնպես, վոր միշտ իրազեկ լինեն ինչպես
իրենց ներկայացուցիչների, այնպես ել ամրող վեր-
ստուգիչ հանձնաժողովների աշխատանքի մասին, իսկ

կրանով նաև տվյալ ձեռնարկության, տրեստի և աթ-
դյունաբերության ճյուղի ամբողջ անտեսական գոր-
ծունեյության մասին: Դա արհմիությունների մար-
միններին կժոտեցնի անտեսությանը, կավելացնի
նրանց ձեռնհասությունը և հնարավորություն կտա
ակտիվ կերպով ազգելու արդյունաբերության կազմա-
կերպման և կառավարման գործերի վրա:

Արհմիությունները պարտավոր են ամեն կերպ ու-
ժեղացնել սոցիալիստական անտեսության կառավար-
ման գործի համար բանվորների նոր խավեր պատ-
րաստելու և սովորեցնելու աշխատանքը, ամենա-
ընդունակ բանվորներին և բանվորուհներին գեղի
զանազան անտեսական պոստեր քաշելով (արտադրա-
կան խորհրդակցությունների միջոցով), պետության
աջակցությամբ յերեկոյան արտադրական խմբակներ
և գասընթացներ բացելով, բանվոր յերիտասարդու-
թյանն ամեն կերպ այդ կազմակերպությունների մեջն
առնելով. արհմիությունները պետք է կազմակերպեն
կարմիր դիրեկտորների գասընթացներ, արտադրական
գրականության հրատարակություն և այլն: Կուսկազ-
մակերպությունները պարտավոր են անշեղորեն պաշտ-
պանել արհմիությունների բոլոր գործնական առա-
ջարկությունները և զանազան անտեսական պոստերի
համար նրանց առաջ քաշած թեկնածությունները:

Կոնֆերենցիան գտնում ե, վոր ա) արտադրական
խորհրդակցությունների աշխատանքը խորացնելը,
բ) նրանց վերահսկչական գումարական ուժեղացնելը,
գ) անշեղ ու յեռանդուն կերպով բանվորներին գեղի
բոլոր անտեսական պոստերն առաջ քաշելը, դ) արհ-
միությունների սիստեմատիկ և պլանաշափ մասնա-

կցությունը արդյունաբերության կաղմակիրապմանը
ներկա կոնֆերենցիայի վորոշումների հիման վրա և
ամբողջ կուսակցության աջակցությամբ—անհրաժեշտ
նախազրյալներ են միություններին և ամբողջ բան-
վոր դասակարգին արդյունաբերության կաղմակերպ-
ման գործում մասնակից դարձնելու համար և ամենից
ավելի լրիվ կերպով կապահովեն սոցիալիստական շե-
նարարության հաջողությունը:

Ա. Շ Խ Ա. Տ Ա. Վ Ա. Բ Զ

Համկան, վորպես բանվոր դասակարգի կուսա-
կցություն, վոր զեկավարում և պրոլետարիատի վեր-
ջնական ազատազրության համար մզվող պայքարի բո-
լոր տեսակները, միշտ իր ամենագլխավոր խնդիրն և
համարել և համարում ե բանվորների տնտեսական
դրության համակողմանի բարելավումը: Կապիտալիս-
տական հասարակակարգի պայմաններում, վորտեղ պե-
տական իշխանությունը և արտադրության բոլոր գոր-
ծիքները պատկանում են կապիտալիստների դասա-
կարգին, կոմկուսակցությունն ու նրա անդամները,
վորպես կապիտալիզմի լիկվիդացիայով շահագրգուված
կողմ, պարտավոր են պաշտպանել կապիտալիստ-գոր-
ծատիրոջ դեմք ուղղված բանվորների բոլոր պահանջ-
ները՝ արված նրանց կյանքի մակարդակի բարձրաց-
ման նպատակով: Պրոլետարիատի դիկտատուրայի պայ-
մաններում մի պետության մեջ, «վորտեղ աշխատա-
վոր գյուղացիները բանվորների զեկավարությամբ սո-
ցիալիզմ են կառուցում, վճռականապես հրաժարվելով
կապիտալիստների ղեկավարությունից» (միություն-
ների Վ-րդ համագումարին ուղղած վ. ի. Լենինի նա-

մակից), կոմիտասակցությունը, վորովեռ իր գահակարգի
դիկտատուրան իրականացնող ավանդարդ, զեկավա-
րելով սոցիալիզմի կառուցման ամբողջ գործը, սեր-
տորեն շահագրգուված և սոցիալիստական կուտակման
թափի խնդրում, վորը միևնույն ժամանակ սոցիալիս-
տական շինարարության թափ ե, վորից, իր հերթին,
կախված և պրոլետարիատի նյութական և կուլտուրա-
կան մակարդակի հետագա բարձրացման թափը:

Ամբողջ բանվոր դասակարգի, նրա վերջնական նպա-
տակների և պրոլետարիատի նյութական մակարդակի
հետագա բարելավման անընդհատությունն ապահովե-
լու շահը նկատի ունենալով, կոմկուսակցությունն իր
քաղաքականությունն աշխատավարձի ասպարիզում
պետք և համաձայնեցնի խորհրդային տնտեսության
իրական տնտեսական դրության, նրա արտադրական
ուժերի աճման, նրա ուսուուրսների հետ, միաժամա-
նակ ապահովելով սոցիալիստական կուտակման թա-
փը, վորն անհրաժեշտ ե, վորպեսզի կառուցվող սո-
ցիալիզմը կարողանա հաղթել իր գոյության և իր
դարգացման համար պայքարող մասնավոր կապիտա-
լին (վորն իր համար հենարան և գտնում հանձին
ԽՍՀՄ միջազգային կապիտալիստական ողակ ման
փաստի):

Կոնֆերենցիան ամբողջությամբ և լիովին հավա-
նություն և հայտնում կուսակցության քաղաքակա-
նությանը աշխատավարձի ասպարիզում,—մի քաղա-
քականություն, վոր ամբողջապես պաշտպանվել և արհ-
միությունների կողմից: Կոնֆերենցիան մասնավորա-
պես իր հավանությունն և հայտնում Համկե կենտ-
կոմի ապրիլյան պենումի վորոշմանը, վորով մերժ

վեցին ոպազգիցիայի ակներե սխալ և մեասակար
առաջարկներն աշխատավարձի մասին, վորպիսի առա-
ջարկներն այն շրջանի ծանր տնտեսական կունյունկ-
տուրայի և աճող ապրանքային ինդեքսի պայմաննե-
րում անխուսափելիորեն կտանեյին դեպի գների ավե-
լի մհծ աճում, չերվոնեցի արժեքազրկում և դրանով
փաստորեն գեղի ոհալ աշխատավարձի հետազա ան-
կում:

Հավասարապես՝ կրնֆերենցիան իր հավանությունն
և հայտնում Համկի կենտկոմի և ժողկոմիորհի սեպ-
տեմբերյան վորոշումներին՝ աշխատավարձի բարձրաց-
ման մասին, վորոնց հիմք են ծառայել ընդհանուր
տնտեսական աշխատացման յերեան յեկած հեռանկար-
ները (բերքը, աշխատանքի արտադրականության բար-
ձրացումը և այլն), կոնֆերենցիան իր հավանությունն
և հայտնում նաև ընդհանուր դիրեկտիվին, վոր վերա-
բերում են բանվորների ամենից ցածր վարձատրվող
խմբերը և ընդհանրապես աշխատավարձի խնդրում ա-
վելի հետամնաց ճյուղերն աշխատավարձի ասպարի-
զում մյուսներին հասցնելուն, վորպես առաջին և կարևոր
քայլին, վորն արված ե աշխատավորների տարրեր կա-
տեգորիաների վարձատրության մեջ գոյություն ունե-
ցող աշկարա աննորմալ տարրերությունը վերացնելու
նպատակով։ Կուսակցությունը և նրա կենտկոմն արհ-
միությունների յեռանդուն աջակցությամբ այսուհետե
և գործ են դնելու իրենց բոլոր ջանքերը բանվոր դա-
սակարգի նյութական և կուլտուրական մակարդակի
հետազա բարձրացման համար, այդ բանի հիմք ընդու-
նելով ամբողջ անտեսության տնտեսական դրության
ու սոցիալիստական շինարարության հաջողությունների հետ-

ները այդ բանը ճշտիվ հա հաձայնեցնելով ամբողջ
տնտեսության տնտեսական դրության ու սոցիալիս-
լիստական շինարարության հաջողությունների հետ-
վճռականապես մերժելով անպատճախանատու դե-
մագողիան (ամբոխավարությունը) և պոլիտիկանու-
թյունը բանվոր դասակարգի և կոմկուսակցության
համար կարևորագույն այս հարցում։

ԿՈՂՊԵՐԱՅԻԱ

Պրոլետարիատի տնտեսական, կուլտուրական և
կենցաղային պայմանների ամեն կերպ լավացնելն
իրենց խնդիր ընդունելով՝ արհմիություններն ամբող-
ջապես շահագրգուված են կոռպերացիայի առողջ զար-
գացման խնդրով, վորի (կոռպերացիայի) հաջողություն-
ները վոչ միայն տանում են դեպի սոցիալիստական
տարրերի կողմից զիշտափիչ մասնավոր կապիտալին
հաղթելու գործի ազանովում, այլ և անմիջականորեն
ապահովում են բանվորների իրական աշխատավարձի
ուղղակի բարձրացումը։

Սակայն կոռպերացիայի հաջող զարգացումը կա-
րող է ապահովվել միայն աշխատավորների կոռպերատիվ
հանրայնության, և առաջին հերթին պլոտետարական
հանրայնության ամման և ամբապնդման հիման վրա։
Արհմիությունները պ սրտավոր են ավելի ակտիվ կեր-
պով մասնակցել ամբողջ կոռպերատիվ աշխատանքին,
դեպի այդ աշխատանքը քաշելով բանվորների և բան-
վորուհիների լայն խավերը, հատուկ ուշագրություն
դարձնելով մանրածախսի գների իջեցման պայքարի
ինդրում կոռպերացիային, աջակցելու վրա։ Արհմիու-
թյունները պարտավոր են լուրջ նախապատրաստվել

լիազորների ժաղսմբներին, լիազորների կազմի ավելի լուրջ ընտրություն կատարել, ամենայեռանգուն բան-վորներին ու բանվորուհիներին առաջ քաշել դեպի բոլոր ընտրովի կոռպերատիվ պոստերը և ավելի ուշադիր հսկողություն կոռպերացիայի ամբողջ աշխատանքի, դրա հետ միասին նաև աշխատանքի գործնական ման-սւրնքների վրա, վորովհետև փաստորեն կոռպերատիվի ապրանքի գներն ու վորակներ, վոր վորոշում են բան-վորների իրական աշխատավարձի բարձրության աս-տիճանը: Կոռպերացիայի և նրա ամբողջ գործունեյու-թյան բարելավման աշխատանքը պրոետարական հան-րայնության պատվանդանի վրա՝ արհմիությունների համար պետք եւ հանդիսանա իրական աշխատավարձի բարձրացման և բանվորների կյանքի ընդհանուր արն-տեսական ու կենցաղային պայմանների բարելավման աշխատանքի կարեռագույն ճյուղերից մեկը:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

XIV համագումարից հետո յերկրային, մարզա-յին և նահանգական կուսկազմակերպությունների վե-րաբերմունքը դեպի արհմիությունները և նրանց դե-կավարելու մեթոդները նշանակալիրեն առողջացան. բայց և այնպես մի շարք դեպքերում նկատվում ե, վոր բավականաշուփակափի կերպով չեն կիրառվում XIV կուսհամագումարի վորոշումներն արհմիությունների մասին, բավարար ուշադրություն չի դարձվում նրանց աշխատանքի վրա, բացակայում եւ բացարական աշ-խատանքը արհմիությունների խնդիրների մասին, վո-րի հետևանքով ստորին կարգի կուսկազմակերպու-թյունների վերաբերմունքը դեպի արհմիությունները մնում եւ համարյա թե նախկինը:

Համեկ յերկրային կոմիտեները, մարզկոմմիները և նահանգական կոմիտեները պետք ե ձեռք առնեն ամեն միջոց՝ վերացնելու համար նկատվող աննորմալությունները, իրենց ինդիր դարձնելով հետեւալը. հասնել այնպիսի դրության, վոր իրենց յենթակա կուսկազ-մակերպությունները (շրջկոմ (օքրյակոմ), գավկոմ, ռայկոմ, բջիջի բյուրո) անվթար կերպով կիրառեն XIV համագումարի վորոշումներն արհմիությունների մասին, բացարական կամպանիայի միջոցով, սիստե-մատիկ կերպով հսկելով նրանց աշխատանքին այդ ասպարիդում և ուղղելով նրանց բոլոր սխալներն ու նրանց շեղումները ճիշտ դեկավարման մեթոդներից:

ԳԵՏՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հավաստելով, վոր առաջքաշան սիստեմը, վոր կի-րարկում են կուսակցությունը, արհմիությունները և խորհուրդները, տվել ե նշանակալի արդյունք, կուսա-կցությունը չի կարող բավարարվել ձեռք բերած հաջո-ղություններով, ինչպես և չի կարող չտեսնել այդ աշ-խատանքի առանձին թերությունները:

Այդպիսի թերությունների կարգը պետք ե դասել.

ա. Պետական, տնտեսական և կոռպերատիվ մար-մինների միքանի դեկավարների անուշադիր վերա-բերմունքը դեպի առաջքաշանների աշխատանքը և, վորպես դրա հետևանք, ստորագաս վարչական անձե-րի անուշադիր, յերբեմն ել անբարյացակամ վերաբեր-մունքը դեպի առաջքաշանները. այդ բանի հետևան-քը յերբեմն այն ե լինում, վոր առաջ քաշված բան-վորներն ու բանվորուհիներն աստիճանաբար իջեց վորներ են այն աշխատանքից, վորին սկզբում կանչված վում են այն աշխատանքից,

Եյին յեղել, մինչև ամենասորին տեխնիկական պաշտոնները ներառյալ.

բ. Առաջքաշվածների աշխատանքի ցածր վարձատրությունը խորհրդային պաշտոններում, վորն արգելք և հանդիսանում վորակյալ բանվորներին դեպի խորհրդային աշխատանք առաջքաշելու խնդրում.

գ. Արհմիությունների թույլ աշխատանքը՝ բանվորներին դեպի պատասխանատու խորհրդային, տընտեսական և կոոպերատիվ պոստերն առաջ քաշելու խնդրում և այն, վոր համարյա թե լիովին բացակայում և նրանց հակողությունը՝ առաջքաշվածների աշխատանքի նկատմամբ և բացակայում և նրանց աշխատանքին ցույց տրվելք աջակցությունը:

Կոնֆերենցիան բոլոր կուսկազմակերպությունների հերթական ինպիր և համարում—իբրև բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ամենադրական միջոց—բանվորների և բանվորուհիների ամենայեռանդուն և սիստեմատիկ առաջքաշելը դեպի պետական ապահովարատի բոլոր ճյուղերը, նրանց աշխատանքի վրա ուշադիր հակողություն ունենալը, նրանց ամեն կերպ աջակցելը և ամենաընդունակներին դեպի բարձր, ավելի պատասխանատու պոստեր քաշելը: Կուսակցությունն ու արհմիությունները պարտավոր են վճռական կոիվ մղել այն դիմաղրության դեմ, վոր ցույց են տալիս առաջքաշման սիստեմին պետական և տնտեսական ապահովարատի բյուրոկրատիկ-անձնուն, ինչպես և իրենց պաշտոնին չհամապատասխանող տարրերը, սիստեմատիկորեն այդ տարրերը փոխարինելով ամենաընդունակ և կուլտուրապես ու քաղաքականապես առաջ գնացած բանվորներով:

Այս բանի իրականացնելը բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ամենաիրական միջոցներից մեկն ե, վոր կիրարկվելու յե ամբողջ պետապարատի բանվորականացման միջոցով: Արհմիությունները պարտավոր են ավելի ուշադրություն դարձնել, քան մինչայժմ դարձել են, խորհուրդների ամբողջ աշխատանքի վրա, պետք ե ուժեղացնեն իրենց ակտիվությունը նրանց ընթացիկ աշխատանքների մեջ, իրենց ամենորյա աշխատանքի վրաձի հիման վրա առաջ քաշելով բանվորների կենցաղի ամենակենսական հարցերը, մինույն ժամանակ ուժեղացնելով իրենց դերն ու մասնակցությունը ընտրական կամպանիայում խորհուրդների վերընտրությունների ժամանակ:

Հողանտառ միության անդամ բատրակների նշանակալի ներկայացուցչությունը վոլոստային և գյուղական խորհուրդներում գնահատելով վորպես գյուղում պրոլետարիատի աղղեցության ապահովման գործի անվիճելի հաջողություն, հարկավոր և ավելի լայն և պլանաչափ ծավալել այդ ուղղությամբ սկսված աշխատանքը:

Կուսակցության և արհմիությունների ուշադրությունը նույնպես պետք և նվիրել հողանտառ միության մեջ ակտիվ ստեղծելու համար սկսված աշխատանքը ծավալելու գործին: Անհրաժեշտ և ամեն կերպ աջակցել գյուղատնտեսական պլուտարքներին՝ գյուղակարգների և կոոպերատիվ մարմինների վերընտրությունների ժամանակ, դրանով իսկ ուժեղացնելով պլուտարքական աղղեցությունը գյուղում:

Հարկավոր և ուսումնասիրել առաջ քաշվողների տիստեսական դրությունը և արհմիությունների մաս-

նակցությամբ մշակել մի շարք միջոցներ, վորոնք կկարողանան ապահովել վորակյալ բանվորներին դեպի խորհրդային և հանրային աշխատանք առաջ քաշելու գործը:

Արհմիությունները և նրանց մարմինները վերիցվար պարտավոր են ցույց տալ ամենաակտիվ մասնակցություն ԲԳՏ վերահսկչական և վերակազմական աշխատանքին, վորի (ԲԳՏ) խնդիրն, իր հերթին, հետեւալն և — կարողանալիք աշխատանքին մասնակից դարձնել արհմիություններին և նրանց միջոցով աշխատավորների ամենալայն խափերին:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Զնայած ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և արդյունաբերության նշանակալի ընդարձակման, վորի հետևանքով ավելացել ե բանվորների և ծոռայողների ընդհանուր թիվը (6.035.300 հոգի 1925 թվին, 7.700.600 հոգի 1926 թվին — ավելացել ե 1.655.300 հոգի), — գործազրկությունը վոչ միայն չի պակասել այլ և շարունակում ե աճել.

1925 թ. ապրիլի 1-ին միության անդամ գործադրությունը թիվը եր 992.900.

1926 թ. ապրիլի 1-ին միության անդամ գործադրությունը թիվը եր 1.182.500:

Այսպիսով գործազրկությունը թիվը ավելացել ե 19.1 տոկոսով:

Աշխատանքի վորոշ կատեգորիաների (սեագործ բանվորներ, տնային ծառայողներ, ստորին կվալիֆիկացիայի գրասենեկային ծառայողներ և այլն) համար գործազրկությունն սպանում ե մոտ ժամանականերս դառնալ խրոնիկական ագրարային գերբնակչու-

թյան և անընդհատ գյուղից քաղաք լցվող բանվորական ուժի շնորհիվ: Այս բանը կուսակցության, արհմիությունների և Խորհրդային իշխանության առաջ խընդիր և գնում՝ յեւանդուն կերպով պայքարել գործադրկության դեմ ինչպես մի շարք ամենաանհետաձգելի մասնավոր բնույթ ունեցող միջոցներ ընդունելու միջոցով (տես ՀԱՄԿԽ-ի նախագահության վորոշումը՝ հաստատված Քաղբյուրոյի հանձնաժողովի կողմից), այնպես ել խորհրդային կարգով (Պետպլան) հավելյալ բնակչության աշխատանքային ոգտագործման ավելի ընդհանուր հարցի մշակման ու լուծման միջոցով:

Կուսակցությունը, արհմիությունները, տնտեսական մարմինները և կուսակցության բոլոր անդամները պետք ե ամենայեանդուն պայքարը մղեն պրոտեկցիոնիզմի ու խնամիության դեմ — բանվորներ և ծառայողներ վարձելու և արձակելու խնդրում — և վճռական աջակցություն պետք ե ցույց տան Համեկկենտրոնի, ՀԱՄԿԽ-ի և Խորհրդային մարմինների բոլոր այն ձեռնարկումներին, վորոնք ուղղված են գործազրկության դեմ մղող պայքարի կողմը:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ

ԶԱՎԱԿԱՆՆԵՐԸ

Առանձնապես սուր և կանգնած պրոետարական յերիտասարդության (անչափահամներ և այսպես կոչված գերչափահաններ, գլխավորապես գործարանային բանվորների և ցածր վարձատրություն ստացող ծառայողների զավակները) գործազրկության հարցը:

Այդ պրոյետարական յերիտասարդությունը վոչ միայն դպրոցական հաստատություններում, այլ և ձեռ-

նարկության մեջ սովորելու հնարավորություն չունեալով, դատապարտված և յերկարատև գործազրկության և ակամա անգործության: Պողիտարական հանըրային կազմակերպությունների և նըրանց կուլտուրալուսավորական աշխատանքի ազդեցությունից դուրս մնալով (այդ կազմակերպություններն իրենց աշխատանքը կատարում են գլխավորագետ և համարյաթե բացառապես, ձեռնարկություններում), այդ յերիտասարդությունը բարոյապես քայլայվում է և անապաստանների տարիք առնող խափերի հետ միասին կազմում և մարտնչող «խուժանի» գլխավոր կադրերը, այլամերգելով և վերածվելով հականանրային տարրի, վորը կենցաղային մերձավորության շնորհիվ վարակում և աշխատող յերիտասարդության նշանակալի մասը և նույնիսկ կոմերիտմիության անկայուն խափերը:

Այս հողի վրա զարգանում է, ճիշտ և, սենսացիայի յետելից վազելու մզման հետեանքով, մեր մամուլի կողմից հաճախ անարկու գար հնելու աստիճան չափազանցը ած խուժանության ալիքը նույնիսկ լավագույն պրոլետարական ռայոններում, յերեան բերելով և վերածնելով նախանեղափոխական անցյալի ամոթալի սովորութներն ու մնացորդները:

Հակառակ «ընդհանրապես» խուժանության դեմ պայքարելու խնդրում ինտելիգենտների բարձրացը վայնասունին, կուսակցությունը, արհմիությունները և պետությունը պարտավոր են պլանաշափ պայքար մզել յերիտասարդության աղասավորակության և գործազրկության գեմ մի շարք գործնական ձեռնարկութելու միջոցով:

Անհրաժեշտ և առաջին հերթին.

1. Ամենազործնական ձևով մոտենալ մանուկների և անչափահասների անապաստանության վճռական լիկվիդացիային, անհրաժեշտ համարելով բանվորների զավակների գլխովին ընդգրկումը սոցդասավարի դըպը ըսցների կողմից: Դեպի այս աշխատանքը պետք է ներդրավվեն բոլոր պրոլետարական հանրային ուժերը. արհմիությունները պետք է իրենց վրա վերցնեն գըլխավոր աշխատանքը, դեպի այն քաշելով ամենալայն պրոլետարական մասսանները:

2. Ամեն կերպ թեթևացնել բանվորների զավակների (անչափահասների և գերչափահասների) ֆուրբիկա և գործարան ընդունվելը. արհմիություններն ու կոմյերիտմիությունը պետք է խստիվ հետեւն անչափահասների հաճախ խախտվող բրոնյայի իրական կենսագործմանը:

3. Աշխաժողկոմատը, արհմիությունները և տնտեսական մարմինները պետք ե դիմին բանվորական ռայոնների և րում արագացրած արտադրական գասընթացների և դպրոցների կազմակերպման. այդ գասընթացներն ու դպրոցները հնարավորություն կտան բանվորների գործազուրկ զավակներին ձեռք բերել տարրական կվալիֆիկացիա, դրանով իսկ թեթևացնելով նրանց աշխատանքը ճարելու հնարավորությունը:

4. Արհմիությունները պարտավոր են մշակել միշարք միջոցներ, վորոնք կապահովեն գործազուրկ պըռը լիտարական յերիտասարդության լիակատար ներգրավումը դեպի նրանց կուլտաշխատանքը (ակումբների, գիզկուլտուրայի խմբակների և այլն մուտքն ազատ դարձնելով նրանց համար):

Ենորհիվ այն բանի, վոր բանվորների ու բանվորների մասսաների կուլտուր-քաղաքական մակարդակը տակավին համեմատարար ցածր և կուլտուր-լուսավորական աշխատանքի մեջ փոքր չափով հն հաշվի առնվում նրանց պահանջներն ու շահերը, անհրաժեշտ և ուշադրություն դարձնել ամբողջ կուլտաշխատանքի ճյուղերը բանվորների և բանվորուհիների պահանջներին հարմարեցնելու վրա:

Նկատի ունենալով այն, վոր շեղումներ են տեղի ունենում ճիշտ գծից, կոնֆերենցիան հիշեցնում ե, վոր անհրաժեշտ և կիրարկել XIX կուսհամագումարի ցուցմունքներն այն մասին, վոր «ակմբային աշխատանքը պետք ելիսի առավելագույն չափով բազմակողմանի, վորպեսզի իր մեջ միացնի իր անդամների հանգստի և առողջ զվարճության պահանջների բավարարումը կուլտուր-լուսավորական և դաստիարակչական խնդիրների հետ»: Արհմիությունների վողջ կուլտաշխատանքը պետք ենշանակալի չափերով աշխուժացնել և բազմակողմանի դարձնել: Ընդունելով, վոր արհմիությունները նշանակալի նվաճումներ են արել այդ ասպարիզում, այն ե՝ ա) խորացրել են ակմբային և, մասնավորապես, խմբակային աշխատանքը, բ) ավելի լրիվ կերպով են դեպի ակումբ գրավել չափահաս բանվորներին, գ) լայնորեն փոել են կարմիր անկյունների ցանցը (առ 1925 թվի գեկտեմբերի 1-ը—15.932 և առ 1926 թ. հուլիսի 1-ը—19.000). դ) զարգացրել են ֆիզկուլտուրան, ե) աճեցրել գրադարանները և խորացրել զբաղարանային աշխատանքը (առ 1-ն հուն-

վարի 1925 թվի կար—6 863 գրադ., առ 1-ն հունվարի 1926 թ.—8.850 գրադ.), զ) զարգացրել են ինքնազործունեյությունը և սահմանել ակմբային վարչությունների ընտրովի կություն, է) սոեղծել են առողջ մատեցում դեպի մասսայական կուլտաշխատանքի ծավալումը սեղոնային բանվորների մեջ և գյուղական վայրերում, ը) ուժեղացրել են պայքարը անգրագիտության գեմմ.՝ միւնություն ժամանակ հարկավոր և անշուշտ նորից նշել ուրվագծվող թեքումները, վոր են՝ ակումբն ոգտագործել բացառապես քաղաքական-լուսավորական խնդիրների համար, աստիճանաբար վաճելով ակումբից զվարճության և հանգստի բոլոր ձևերը (պարեր, զբամատիկ խմբակներ, յերգեցիկ խմբեր, յերաժշգույն և այլն):

Այսպիսի ծայրահեղ սիգորիզմն* այն արդյունքն ե տալիս, վոր բանվորն ակումբից գնում և գարեջրատուն, պանդոկ, թեյատուն և փողոց՝ այնտեղ զվարճություն փնտուելու:

Հավասարապես և գրքային, այլանդակ՝ «ուացիոնալ» մոտեցումը դեպի ֆիզկուլտուրան (ֆիզկուլտուրան և զորակենակություն), «զարյագկա», «բաղրյաղկա», «կորորեգիոն շարժումներ», արհամարհական վերաբերմունքը դեպի մրցական մեթոդները (պայքար «ուեկորզմենության» և «սպորտսմենության» գեմմ) և ակնհայտ կոիվը դրա գեմմ մի շաբք ակումբներում ու նրանց աշխատողների նշանակալի մասի կողմից բանվորների վզին այն ամսնը փաթաթելու ձգտումը, ինչը դուր և գալիս կամ ոգտակար են համարում դեկա-

* Բարքերի անխախտ ու բծախնդիր խստությունն—թարգմ.:

վարները, — այս ամենը, միասին վերցրած, անկանկած դանդաղեցնում ե ֆիզկուլտուրայի մեծ ծավալումը, յերիտասարդությունը մեծ չափերով գեպի այն գրավելը և սպառնում ե քարացնել ֆիզկուլտուրայի բաղմաղան տեսակների ու ձեռքի թափն ու զարգացումը:

Արհմիությունները, պաշտպանելով և հանձնարարելով բանվորներին ֆիզկուլտուրայի ամենաառողջ և առողջապահական մեթոդները, պայքարելով նրա բոլոր աղավագութների և այլանդակումների գեմ, միենույն ժամանակ վճռականապես պետք ե հրաժարվեն ֆիզկուլտուրայի այս կամ այն ձեւ բոնի կերպով յուրաքանչյուր անհատ բանվորի վզին փաթաթելու փորձից:

Պետք ե կոլիվ հայտարարել նման թերութներին, վորոնք սահմանափակում են կուլտաշխատանքի թափը, ամբողջապես տոգորված են բանվորական մասսաներին ամենա «բանական», առանձնասինյակում հորինած հանգստի ու զվարճնքի մեթոդներ ու ձեռք փաթաթելու սիստեմ կիրարելու ցանկությամբ, առանց հաշվի առնելու այդ մասսաների կենցաղային ձեռքը, անհատական և հասակին հատուկ առանձնահատկությունները:

Արհմիությունները վոչ մի բոպե չպետք ե մոռանան, վորի իրենց պարտականությունն ե համակողմանի կերպով սպասարկել իրենց միախմբած մասսաների կուլտուրական պահանջները, հարմարեցնելով իրենց աշխատանքի ձևերն ու մեթոդները նրանց կենցաղային առանձնահատկություններին ուկուլտուրական մակարդակին, աստիճանաբար բարձրացնելով այդ մասսաները գեպի կուլտուրական զարգացման ավելի ու ավելի բարձր աստիճաններ:

Արհմիությունը պարտավոր ե հոգալ իր անդամների դասակարգային ինքնազիտակցության զարգացման մասին, այս պատճառով նրանց մեջ պետք ե կտարի քաղաքական և արհմուսավորական աշխատանք ու զարգացնի նրանց նախաձեռնությունը և ինքնագործունեյությունը՝ պերկետարական գեմոկրատիայի հիման վրա: Նա պետք ե տա արտադրական կրթություն և գաստիարակություն, այդ ամբողջ աշխատանքը կատարելով իր ակումբների և կարգիր անկյունների միջոցով: Բայց նա պարտավոր ե հավասար չափով աշխատել նաև կենցաղի առողջացման վրա, բանվորներին առողջ հանգիստ և զգարճանք տրամադրելու միջոցով: Ամեն մի միակողմանիություն փսասարեր ե:

Պետք ե ավելի լրիվ և լայն կերպով ծավալել ֆիզկուլտուրան, դարձնել այն ավելի ակտիվ և բազմակողմանի, գեպի այն գրավելով գործազուրկ պրոլետարական յերիտասարդությունը: Անհրաժեշտ ե համաչափ կերպով զարգացնել ու բարելավել միութենական կուլտաշխատանքի բոլոր կողմերը, փորձնական ճանապարհով ստուգելով աշխատանքի մեթոդների և առանձին ձեռնարկութների պետքականությունը: Անհրաժեշտ ե ամեն կերպ ընդառաջել բանվորների, մանավանդ յերիտասարդության, ընդհանուր կրթության ձգտմանը՝ կուսակցության և պետության աջակցությամբ բանվորների համար կազմակերպելով յերեկոյան դասընթացներ, համալսարաններ և յերեկոյան տեխնիկումներ՝ իրենց հատուկ ծրագրերով ու դասավանդման մեթոդներով: Անհրաժեշտ ե ավելի յեռանդուն կերպով ծավալել ֆարզավուչի դպրոցների ցանցի ամրապնդման աշխատանքը, վոչ մի գեղկում ֆարզավուչի գո-

յություն ո. նեցող ընդհանուր զոլոցական ցանցի կրծատում չթույլատրելով:

Անհրաժեշտ ե ապահովել արհմիութենական կազմակերպությունների անհամիմատ ավելի մեծ աջակցությունը պիտոներական շարժմանը, գրավելով արհմիթյունների ուշադրությունը գեպի պիտոներ-կազմակերպությունների ամբողջ աշխատանքը, այդ բանով հետաքրքրելով բանվորներին և մասնամանդ բանվորուհիներին:

Արհմիութենական կուլտաշխատանքի զարգացման ու ծավալման ամենագլխավոր արգելքներից մեկն ել ակումբների շենքերի պակասությունը, նրանց նեղվածք և զանազան հանրային կազմակերպությունների (կուսակցական և արհեստակցական համագումարներ, կոնֆերնցիաներ և այլն) ժողովներով ծանրաբեռնված լինելն ե. այս պատճառով հարկավոր և բնակարանային շինարարության պլանի մեջ մտցնել ակումբների և հանրային կազմակերպությունների ժողովների շենքերի կառուցումը, առաջին հերթին բանվորական քաղաքներում և ուսունականում: Միենույն ժամանակ՝ հանրային աշխատանքների պլանը քննելիս հարկավոր և դրանց մեջ մտցնել հանրային այգիներ և ֆիզկուլտուրայի հրապարակներ ստեղծելը:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կոնֆերնցիան հավանություն ե հայտնում չամկենատկոմի ընդհանուր ղեկավարությամբ ՀԱՄԿԵ-ի կատարած աշխատանքին՝ միջազգային արհարժման միասնականության համար մղված պայքարի առաջարիգությունում:

Կոնֆերենցիան մասնավորապես ձլչտ ե համարում ՀԱՄԿԵ-ի վարած գիծը անզիական ընդհանուր գործադուլի, հանգահորների գործազուլի և զլիսավոր խորհրդադիր հետ ստեղծած փոխարարակերությունների խընդուում: Համկեն կենտկոմը և ՀԱՄԿԵ-ի ֆրակցիան ձիշտ են վարչել, մերժելով ոպպազիցիայի սկզբունքորեն սխալ և քաղաքականապես վնասակար առաջարկությունը՝ Անգլո-Ռուսական Կոմիտեն լուծելու նախաձեռնությունն իրենց վրա վերցնելու մասին, վորը կնշանակեր վոչ այլ ինչ, քան ունենալ մի որիենտացիա— կոմմունիստները պետք ե գուրս գան այն արհմիութենական մարմիններից և արհմիություններից, վորտեղ իրենք փոքրամասնություն են կազմում,— վորն եապես ծառայություն մատուցել կլինիկ գլխիորհըրդիքի պարագլուխներին և կողմնակիորեն կարգարացներ միասնության հակառակորդների, մասնավորապես Ամստերդամի հնտերնացիոնալի պարագլուխների, քաղաքականությունը:

Կոնֆերենցիան իր հավանությունն ե հայտնում զլիսավոր գործադուլի մատնիչների նկատմամբ կատարված հստակ և շեշտակի քննադատությանը և մարտընչող հանգափորներին ցույց տրված յեռանդուն աշակցությանը:

Կոնֆերենցիան գտնում ե, վոր իր կայունացման համար պայքարող կապիտալի կորմից բանվոր դասակարգի գեմ կատարոծ հարձակման ֆոնի վրա անզիական գործադուլի փորձը հստակորեն յերեան բերեց արևմտա յեվրոպական բանվորների դասակարգային գիտակցության անվիճելի աճումը, աճումը նրանց հուսախարության՝ պայքարի ու ուժիումիստա-

կան մեթողներից, նըանց համակրանքի աճումը զեպի ԽՍՀՄ բանվորները և դեպի սոցիալիստական շենարարության գործը մեր յերկը ունեմ: Մինույն ժամանակ՝ ուժեղանում և ռեֆորմիստական պարագլուխների ռհակցիան մասսաների ձախանալու դեմ (հեղափոխական բանվորներին միություններից վոճակները և հալածանքների այլ մեթողները մի կողմից, և ռեֆորմիզմի պարագլուխների համաձայնողականության և կապիտալիստական լակեյություն անելու ամենացինիկ ձեռնդիսացող դասակարգային աշխատակցության «ամերիկան մեթողների յուրացումն ու ուժեղացումը—մյուս կողմից):

ԽՍՀՄ արհմիությունների խնդիրն և հանդիսանում տվյալ պայմաններում ավելի, քան յերբեք, բոլորանվեր յեղբայրական ոգնությունը արտասահմանի բանվորներին՝ այն պայքարում, վոր մզում են նրանք հարձակող կապիտալի դեմ, արտասահմանի բանվորների կողմից իրենց իսկական դասակարգային շահերի գիտակցության պրոցեսին ամեն կերպ նպաստելը և նրանց ազատելը ռեֆորմիստական պարագլուխների ազդեցությունից:

Կոնֆերենցիան իր հավանությունն և հայտնում արևմու-յելքովական բանվորների հետ բանվորական պատգամավորությունների միջոցով յեղբայրական կապ հաստատելու աշխատանքին, հանձնարարելով ՀԱՄԿԽ-ին այսուհետև ել բոլորանվեր աջակցություն ցույց տալ այլ յերկրների բանվորներին՝ ԽՍՀՄ բանվորների և ամբողջ յերկրի կյանքին ու կենցաղին նրանց ծանոթացնելու գործում:

Կոնֆերենցիան հանձնարարում և ՀԱՄԿԽ ի

ֆրակցիային՝ ուժեղացնել իր աղդեցությունը և իր ակտիվ աշխատանքը Պրոֆինտերնում և ամեն կերպ աջակցել նրա գործունեյության ծավալմանը, յեռանդուն կերպով շարունակելով պայքարը հանուն արհաշարժման միջ սպային միասնականության:

Կոնֆերենցիան, արձանագրելով կուսկազմակերպությունների և արհմիությունների կատարած մեծ աշխատանքը ԽIV համազումարի գիրեկտիվների կենսագործման խնդրում և մի ամբողջ շարք անկասկածելի գործնական հաջողությունները, անհրաժեշտ և համարում կոչել բոլոր կուսկազմակերպություններին, արհմիություններին և կուսակցության բոլոր անդամներին՝ ել ավելի յեռանդուն աշխատանքի՝ ԽIV կուսհամագումարի և այս կոնֆերենցիայի բոլոր վրոշումների կենսագործման համար:

Կոնֆերենցիան հայտնում ե, վոր ինքը համոզված ե, թե արհմիությունները՝ ամբողջ կուսակցության ամենայեռանդուն աջակցությամբ, կամրապենութեն ու կծագալեն ձեռք բերված մվաճութերը, յեռանդուն և սիստեմատիկ կերպով կդիմեն վերը հիշած թերությունների վերացման աշխատանքին, կուժեղացնեն ու կամրապնդեն իրենց արհմիութենական մարմինների կապն իրենց միավորած մասսաների հետ պլուխտարական դեմոկրատիայի, նրանց պահանջների համակողմանի և ուշադիր սպասարկման, բանվորների տնտեսական, կենցաղային ու կուլտուրական պահանջների պաշտպանության ու նրանց դրության բարելավման հիմունքներով—անշեղորեն բարձրացնելով նրանց ընդհանուր կուլտուրական մակարդակը, գաստիարակելով ու պատրաստելով տասնյակ և հարյուր հազար

բավոր բանվորներ՝ տնտեսության և ամբողջ պետապ-
պ սրառի կառավարման համար՝ հիմք ունենալով արհ-
միությունների, —իսկ նրանց միջոցով նաև ամբողջ
բանվորական մասսայի, —ու արդյունաբերության ա-
ռողջ մերձեցւմը և դրանով իսկ ապահովելով սոցիա-
լիզմի կառուցման աջողությունը՝ և կատարելով իրենց
կոմմունիզմի շկոլա լինելու գերը:

Եռնֆերենցիան նույն չափով համոզված է, վոր
Համկե ղեկավարությամբ ԽՍՀՄ արհ միությունները,
իրեն Պրոֆինտերնի ամենառուժեղ առաջավոր մասը,
վոչ մի բոպե չդադարեցնելով իրենց պայքարը ամեն
տեսակի գասակարգային համաձայնողականության
դեմ, — նույնքան անդադրում կերպով կմղեն իրենց
պայքարն ամբողջ միջազգային պրոլետարիատի հա-
մար կենսականորեն անհրաժեշտ արհարժման միաւ-
նականության համար, մերժելով կենդանի գործի և
մասսաների համար մղվող գործնական պայքարի փո-
խանակումը դատարկ հեղափոխական ֆրազով և կա-
տարելով իրենց առաջ կանգնած իրենց միջազգային
հեղափոխական պարտականությունները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0202941



ԳԻՆԸ 60 Կ.